



ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12



Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ա. ՊՈՏՈՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12

Վերահրատարակություն



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

**Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝
որպես դասագիրք ավագ դպրոցի 12–րդ դասարանի համար**

ՀՏԴ 373.167.1 : 91 (075.3)

ԳՄԴ 26.8972

Մ 246

Մասնագիտական խմբագիր՝

ՄԱՔՄԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հեղինակներ՝

ՄԱՔՄԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

(Թեմա 1. §§ 1, 2, 8, Թեմա 2. §§ 4–7)

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Աշխարհագրագետ

(Թեմա 1. §§ 3, 4, 6, 7)

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

(Թեմա 1. § 5, Թեմա 2. §§ 1, 2, 3, 8)

**Աշխարհագրություն 12: Դասագիրք / Մարսին Մանասյան, Արմեն Հովսեփյան,
Մ 246 Ակսել Պոտոսյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2018. — 128 էջ:**

ՀՏԴ 373.167.1 : 91 (075.3)

ԳՄԴ 26.8972

ISBN 978-99941-1-919-6

© Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան, Ա. Պոտոսյան, 2018

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2018

© ԴՏՀՏՀ, 2018

§ 1 ԻՆՔՆԱՏԻՊ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ

Վերջին տասնամյակներին համամաշխարհային հիմնահարցերին զուգընթաց աշխարհագրական գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում տարածաշրջանային հիմնախնդիրներին: Դա պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ մեր մոլորակի բնությունը, բնակչությունը և տնտեսությունը տարածական առումով բազմազան են և բաժանվում են տարբեր մեծության տարածաշրջանների: Աշխարհը տարածականորեն բազմազան է նաև քաղաքական, ազգային, կրոնական, ռասայական, քաղաքակրթական տեսակետներից: Դրանք նույնպես առաջացնում են տարբեր բնույթի և մեծության տարածաշրջաններ: **Տարածաշրջանները տարածքային ամբողջական միավորներ են, որոնց սահմաններում սերտորեն փոխկապակցված են բնությունը, բնակչությունը, տնտեսությունը և դրանց առանձին բաղադրիչները:** Տարածաշրջան կարող են համարվել երկրի տարածքի մի մասը (օրինակ՝ ՀՀ Սյունիքի մարզը), մեկ առանձին պետության տարածքը, տարբեր պետություններ ընդգրկող մայրցամաքի կամ աշխարհամասի ընդարձակ տարածքները (օրինակ՝ Հարավային Եվրոպան):

Բնական և հասարակական բաղադրիչների կատարած դերից և փոխկապակցվածությունից կախված՝ առանձ-

նացնում են **միասնական (համալիրային) և բաղադրիչային** տարածաշրջաններ:

Միասնական (համալիրային) տարածաշրջանների ձևավորմանը միաժամանակ մասնակցում են թե՛ բնության, թե՛ հասարակության բաղադրիչները: Դրանց հարաբերակցությունից կախված՝ միասնական տարածաշրջանները կարող են լինել ֆիզիկաաշխարհագրական, հասարակական-աշխարհագրական և համաաշխարհագրական:

Ֆիզիկաաշխարհագրական տարածաշրջանների ձևավորման հիմքում ընկած են բնության բաղադրիչները՝ ռելիեֆը, կլիման, ջրագրական ցանցը, հողերը, օրգանական աշխարհը և դրանց միջև կապերը (օրինակ՝ Անդերը, Ամազոնի դաշտավայրը): Մարդու գործունեությունը և հասարակական այլ երևույթներ դիտարկվում են այնքանով, որքանով կապված են բնական միջավայրի հետ:

Հասարակական-աշխարհագրական տարածաշրջանների ձևավորման հիմքում ընկած են հասարակության բաղադրիչները՝ քաղաքական համակարգը, պատմությունը, բնակչությունը, տնտեսությունը, մշակույթը և դրանց փոխադարձ կապերը: Բնության բաղադրիչները ներկայացված են այնքանով, որքանով ազդեցություն են թողնում հասարակության և նրա առանձին բաղադրիչների

վրա: Այս տիպի տարածաշրջանների՝ երկրների աշխարհագրական բնութագիրը հետևյալն է.

1. երկրի ինքնատիպությունը,
2. տարածքը, աշխարհագրական և աշխարհաքաղաքական դիրքերը,
3. զարգացման պատմաաշխարհագրական փուլերը,
4. բնությունը և բնօգտագործումը,
5. բնակչությունը և մշակույթը,
6. տնտեսությունը,
7. տարաբնակեցումը,
8. հասարակության տարածքային կազմակերպումը,
9. շրջանները,
10. շրջակա բնական միջավայրի վիճակը,
11. զարգացման հեռանկարները:

Երկրները (պետությունները), ունենալով իրենց քաղաքական համակարգը, բնութագրվում են բնության, պատմական զարգացման, բնակչության, տնտեսության, մշակույթի, հասարակության տարածքային կազմակերպման ընդհանուր գծերով: Միաժամանակ ամեն մի երկիր ինքնատիպ է: Դա նախ և առաջ պայմանավորված է աշխարհագրական դիրքով և դրա հետ կապված բնական պայմաններով ու հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկություններով: Ընդհանուր և ինքնատիպ գծեր ունեն ոչ միայն առանձին երկրները՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան և այլն, այլև ավելի խոշոր հասարակական-աշխարհագրական տարածաշրջանները՝ Արևմտյան Եվրոպա, Արևելյան Ասիա, Հարավարևմտյան Ասիա և այլն:

Առավել միասնացված (ամբողջական) են **համաաշխարհագրական տարածաշրջանները**, որոնց ձևավորմանը հավասարապես մասնակցում են թե՛

բնությունն ու հասարակությունը, թե՛ դրանց բաղադրիչները: Այս դեպքում ֆիզիկաաշխարհագրական և հասարակական-աշխարհագրական տարածաշրջանների սահմանները համընկնում են: Համաաշխարհագրական տարածաշրջաններ կարելի է համարել, օրինակ՝ Շիրակը կամ Լոռին, որտեղ հիմնականում համընկնում են բնական, տնտեսական, վարչական, պատմամշակութային և այլ տարածաշրջանային սահմաններ: Տարածքային ավելի խոշոր համաաշխարհագրական տարածաշրջան կարելի է համարել, օրինակ՝ Ավստրալիա մայրցամաքը, որտեղ համընկնում են բնական, վարչաքաղաքական, տնտեսական և այլ սահմաններ: Համաաշխարհագրական տարածաշրջանների աշխարհագրական բնութագիրը **հնարավորություն է տալիս դիտարկելու տարածաշրջաններն ավելի ամբողջական և միասնական ձևով, բացահայտելու դրանց ինքնատիպությունն ու զարգացման առանձնահատկությունները:**

Ի տարբերություն միասնական տարածաշրջանների՝ բաղադրիչային տարածաշրջանները սովորաբար ձևավորվում են բնության և հասարակության առանձին բաղադրիչների տարածական տարբերակման կամ մասնատման արդյունքում: Օրինակ՝ երկրագնդի կլիմայի տարածական տարբերակման հետևանքով առաջացել են կլիմայական տարածաշրջաններ (մարզեր)՝ մուսսոնային, միջերկրածովային և այլն: Իսկ երկրագնդի տնտեսության տարածական տարբերակման հետևանքով առաջացել են տարբեր մեծության տարածաշրջանային տնտեսական խմբավորումներ, ինչպիսիք են Եվրամիությունը, Եվրասիական տնտե-

սական միությունը, Ամերիկյան տնտեսական ընկերակցությունը:

Կան տարածաշրջաններ, որտեղ բնական կամ հասարակական մեկ բաղադրիչը տարածաշրջանային կարևոր դեր է խաղում և զգալի ազդեցություն թողնում բնության ու հասարակության մյուս բաղադրիչների զարգացման վրա: **Գրանք ձեռք են բերում ինքնատիպ տարածաշրջանների բնորոշ հատկանիշներ և իրենց գործունեության ու զարգացման բնույթով, հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկություններով տարբերվում են սովորական միասնական և բաղադրիչային տարածաշրջաններից:**

Ինքնատիպ տարածաշրջանները ձևավորվում են տարբեր գործոնների ազդեցությամբ: Գրանցից են **աշխարհագրական դիրքը, բնական պայմանները** (ռելիեֆը, կլիման), **բնական ռեսուրսները** (հանքային, ռեկրեացիոն), **տնտեսության մասնագիտացման և զարգացման բնույթը, բնակեցման տիպը, ազգային և կրոնական կազմը, քաղաքակրթությունը** և այլն:

Աշխարհագրական դիրքը տարածաշրջանի ինքնատիպությունը և բացառիկությունը պայմանավորող կարևոր գործոններից է: Այն զգալի ազդեցություն է թողնում նաև ինքնատիպությունը պայմանավորող մյուս գործոնների՝ ռելիեֆի, կլիմայի և այլնի վրա: Աշխարհագրական դիրքը հատկապես մեծ դեր է խաղացել **կղզային և ծովափնյա** տարածաշրջանների բնության և հասարակության առանձին բաղադրիչների գործունեության ու տարածքային կազմակերպման վրա (*աշխարհագրության նախորդ դասընթացներից հիշե՛ք կղզային և ծովափնյա հայրնի տարածաշրջանները*):

Ծովափնյա տարածաշրջանները, ունենալով բացառիկ աշխարհագրական դիրք և գտնվելով ծով-ցամաք շփման գոտում, առանձնանում են յուրահատուկ բնական պայմաններով և հասարակության տարածքային կազմակերպման բնույթով: Զարգանում են մարդկանց գործունեության այն ձևերը, որոնք անմիջականորեն կապված են ծովի հետ: Ծովափնյա տարածաշրջաններում բնակչության զբաղմունքի հիմնական ձևերից են ձկնորսությունը և ծովային այլ մթերքների արդյունահանումը: Տրանսպորտի հիմնական տեսակը էժան ծովային տրանսպորտն է, որի սպասարկման համար կառուցում են նավահանգիստներ: Նավահանգստային քաղաքներում սովորաբար ստեղծվում են ներմուծված հումքի և ծովից արդյունահանած մթերքների վերամշակման գործարաններ: Ծովափնյա տարածաշրջաններն իրենց լողափերով, մեղմ կլիմայով, մաքուր օդով, գեղեցիկ լանդշաֆտներով դարձել են հանգստյան գոտիներ և գրավում են տասնյակ միլիոնավոր հանգստացողների: Գրա հետ կապված՝ ծովափնյա քաղաքներում զարգանում է սպասարկման ոլորտը, հատկապես՝ հյուրանոցների և ռեստորանների ցանցը: **Կղզային տարածաշրջանների** բնական պայմաններն ու մարդկանց գործունեության ձևերը շատ գծերով ու հատկանիշներով նման են ծովափնյա տարածաշրջաններին:

Ինքնատիպ տարածաշրջանները ձևավորող բնական պայմաններից առանձնապես մեծ նշանակություն ունեն ռելիեֆը և կլիման: Ռելիեֆը որոշիչ դեր է կատարում **լեռնային** տարածաշրջանների, իսկ կլիման՝ **արկտիկական, չորային** (անապատային), **խոնավ, մուսսոնային**,

միջերկրածովային տարածաշրջանների ձևավորման գործում:

Լեռնային տարածաշրջաններում ռելիեֆը կանխորոշում է բնական պայմանների և հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Կլիմայական պայմանները, լանդշաֆտները (հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը), ինչպես նաև մարդկանց գործունեության ձևերը, հատկապես՝ գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը, օրինաչափորեն փոփոխվում են ստորոտից դեպի գագաթ բարձրանալուն զուգընթաց, այսինքն՝ բնութագրվում են վերընթաց գոտիականությամբ: Առանձնահատուկ են նաև լեռնային տարածաշրջանների ջրագրական և տրանսպորտային ցանցերը, տարաբնակեցման ձևերը: Դրանք հիմնականում կենտրոնացած են լեռնահովիտներում: Ջրաէներգետիկան, լեռնահանքային արդյունաբերությունը, լեռնաարոտային անասնապահությունը, լեռնային տուրիզմը այս տարածաշրջանների տնտեսության գլխավոր ճյուղերն են (*հիշե՛ք աշխարհում առավել հայտնի լեռնային փարածաշրջանները*):

Ինքնատիպ տարածաշրջանների ձևավորման գործում բնական ռեսուրսներից հատկապես կարևոր դեր են խաղում հանքային (վառելիքային, մետաղային) և ռեկրեացիոն ռեսուրսները: Հանքային հարուստ ռեսուրսների արդյունահանման շրջաններում ձևավորվում են ինքնատիպ **հանքարդյունահանող** տարածաշրջաններ, որոնք բնութագրվում են առանձնահատուկ բնական ու սոցիալ-տնտեսական պայմաններով և մարդ-բնություն փոխհարաբերություններով (*աշխարհագրության նախորդ դասընթաց-*

ներից հիշե՛ք հանքարդյունահանող հայտնի փարածաշրջանները): Այստեղ մարդու տնտեսական գործունեության, մասնավորապես՝ հանքանյութի արդյունահանման, հարստացման և վերամշակման ընթացքում զգալի փոփոխության է ենթարկվում բնական միջավայրը: Աղտոտվում են օդային և ջրային ավազանները, նվազում է կենսաբազմազանությունը, զգալի տարածքներ են զբաղեցնում արդյունաբերական թափոնները, ընդհանուր առմամբ սրվում է էկոլոգիական իրավիճակը: Այստեղ տարածված են տեխնածին լանդշաֆտները, մասնավորապես՝ հանքանյութերի արդյունահանման և հետագա վերամշակման արդյունաբերական ձեռնարկություններն ու գոտիները: Արդյունավետ բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները խիստ հատկանշական են այս տիպի տարածաշրջաններին:

Միանգամայն այլ հատկանիշներով և առանձնահատկություններով, մարդ-բնություն փոխհարաբերություններով են բնութագրվում ինքնատիպ **առողջաբանային** (կուրորտային) տարածաշրջանները, որոնք ձևավորվել են ռեկրեացիոն հարուստ ռեսուրսների օգտագործման վայրերում (*աշխարհում առավել հայտնի առողջաբանային փարածաշրջանները*): Հանքային աղբյուրները, բուժիչ ցեղները, գեղեցիկ լանդշաֆտները, անտառները, մաքուր օդը, ջրային ավազանները, բնական հուշարձանները գրավում են միլիոնավոր հանգստացողների և զբոսաշրջիկների: Ռեկրեացիոն ռեսուրսների օգտագործումը հաճախ սեզոնային բնույթ է կրում, որն անդրադառնում է առողջաբանային տարածաշրջանների բնակչության կենսագործունեության այլ ձևերի,



Մոչիի առողջարանային տարածաշրջան

մասնավորապես՝ սպասարկման ոլորտի զարգացման և տարածքային կազմակերպման վրա: Այս տարածաշրջաններն աչքի են ընկնում սպասարկման հիմնարկների՝ հյուրանոցների, ռեստորանների, հուշանվերների խանութների և այլնի առատությամբ ու դրանց ինտենսիվ օգտագործման սեզոնային բնույթով: Այս տարածաշրջաններում առաջնահերթ խնդիր է դառնում շրջակա բնական միջավայրի, մասնավորապես՝ բնական լանդշաֆտների պահպանությունը: Դա իր հերթին խիստ սահմանափակումներ է մտցնում արտադրության զարգացման, ընդարձակ կառուցապատված տարածքների ստեղծման և մարդկանց տնտեսական գործունեության այլ ձևերի համար, որոնք կարող են վնաս հասցնել բնական միջավայրին:

Հասարակական կամ սոցիալ-տնտեսական գործունեություն

են թողել **արդյունաբերական** (ինդուստրիալ), **գյուղատնտեսական** (ագրարային), **գիտատեխնիկական** (տեխնոպոլիսներ), **ուրբանիզացված** (մեգապոլիսներ) ինքնատիպ տարածաշրջանների ձևավորման գործում: Նշված տարածաշրջաններում մարդու տնտեսական գործունեության հետևանքով խիստ փոփոխվել է շրջակա բնական միջավայրը: Այստեղ բնական լանդշաֆտները քիչ են պահպանվել, գերակշռում են մարդածին, այդ թվում՝ նաև տեխնածին լանդշաֆտները: **Արդյունաբերական** տարածաշրջաններում դրանք հանդես են գալիս միմյանց մոտ գտնվող արդյունաբերական ձեռնարկությունների և հանգույցների, **գյուղատնտեսականում**՝ ընդարձակ տարածքներ զբաղեցնող վարելահողերի և այգիների, **ուրբանիզացվածում**՝ քաղաքային կառուցապատված ընդարձակ

տարածքների տեսքով (*հիշե՛ք օրինակներ աշխարհագրության նախորդ դասընթացներից*): Քանի որ արդյունաբերությունը շարունակում է մնալ ուրբանիզացման գլխավոր գործոններից մեկը, հաճախ արդյունաբերական և ուրբանիզացված տարածաշրջանների սահմանները համընկնում են, և արդյունաբերական տարածաշրջանները համարվում են նաև ուրբանիզացված (քաղաքայնացված) տարածաշրջաններ: Դրանք տարածված են հատկապես տնտեսապես զարգացած երկրներում:

Ինքնատիպ տարածաշրջաններից ամենաերիտասարդները **տեխնոպոլիսները՝ գիտաքաղաքներն** են, որոնք հիմնականում ձևավորվել են ԱՄՆ-ում (Միլիկոնային հովիտը), Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում:

Ինքնատիպ **քաղաքական** տարածաշրջաններ կարող են դառնալ բարդ վարչաքաղաքական կառուցվածք ունեցող պետությունները (Ռուսաստան, Հնդկաստան, Կանադա, Բելգիա, Շվեյցարիա և այլն), ինչպես նաև միջպետական ռազմաքաղաքական ու տնտեսական միավորումները (ԵՄ, ՆԱՏՕ, ԱՊՀ և այլն):

Ինքնատիպ են դառնում ազգային, կրոնական, ռասայական խայտաբղետ կազմ ունեցող այն տարածաշրջանները, որտեղ բարդ և սրված են ազգամիջյան, միջկրոնական և միջռասայական հարաբերությունները, առկա են ազգային տարածքային հակամարտություններ: Դա վերջին հաշվով անդրադառնում է տարածաշրջանների տնտեսության, բնության և ընդհանրապես՝ հասարակության տարածքային կազմակերպման վրա:

Վերջերս գիտնականները հասարակական բաղադրիչներից մեծ կարևորու-

թյուն են տալիս **քաղաքակրթականին՝** որպես տարածաշրջանատեղծ և տարածաշրջանների առանձնահատկությունները պայմանավորող ավելի հիմնարար, կայուն և միասնացնող մեծ ներուժ ունեցող գործոնի: Քաղաքակրթական (մշակութային) գործոնը զգալի ազդեցություն է թողնում հասարակություն-բնություն փոխհարաբերությունների բնույթի, քաղաքական համակարգի, տնտեսության կառուցվածքի և զարգացման տեմպերի, բնակչության սոցիալական կառուցվածքի և ժողովրդագրական գործընթացների ու հասարակության այլ բաղադրիչների վրա: Այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքակրթական տարածաշրջան դառնում է ինքնատիպ:

Մասնագետները առանձնացնում են հետևյալ ժամանակակից քաղաքակրթություններն ու քաղաքակրթական տարածաշրջանները՝ **արևմտյան (Արևմտյան Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա), չինական, ճապոնական, բուդդայական, իսլամական, հինդուիստական (հնդկական), ուղղափառ-սլավոնական, լատինամերիկյան, նեգրաաֆրիկական:** Ակներն է, որ կրոնական գործոնը կարևոր դեր է կատարում քաղաքակրթությունների առանձնացման գործում:

Քաղաքակրթական գործոնը կարևոր դեր է խաղացել «գերմանական» և «ճապոնական» տնտեսական հրաշքների իրականացման գործում: Ներկայումս այն մեծ դեր է կատարում Չինաստանի և «ասիական վագրերի» տնտեսության արագ աճի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայում միասնացման (ինտեգրացման) գործընթացներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է տարածաշրջանը: Ինչպիսի՞ն են տարածաշրջաններն ըստ մեծության:
2. Որո՞նք են տարածաշրջանների տիպերը, ինչպե՞ս են դրանք առաջանում: Նշե՛ք դրանց հիմնական տարբերությունները:
3. Որո՞նք են միասնական տարածաշրջանների հատկանշական գծերը: Նշե՛ք երկրի՞ որպես միասնական տարածաշրջանի բնութագիրը:
4. Որո՞նք են ինքնատիպ տարածաշրջանները, ինչպե՞ս են դրանք առաջանում:
5. Բնական պայմանները և ռեսուրսները ո՞ր ինքնատիպ տարածաշրջանների ձևավորմանն են ակտիվորեն մասնակցում: Թվարկե՛ք և ներկայացրե՛ք դրանց հատկանշական գծերը:
6. Հասարակական գործոնները ո՞ր ինքնատիպ տարածաշրջանների ձևավորմանն են ակտիվորեն մասնակցում: Թվարկե՛ք և ներկայացրե՛ք դրանց հատկանշական գծերը:
7. Ինչո՞վ է պայմանավորված քաղաքակրթությունների կարևոր դերը ինքնատիպ տարածաշրջանների ձևավորման գործում:
8. Փորձե՛ք պարզել Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի, բնության, բնակչության, տնտեսության, մշակույթի, տարածքային կազմակերպման հատկանշական գծերը: ՀՀ-ն ինքնատիպ տարածաշրջանների ո՞ր խմբերի մեջ կարելի է ընդգրկել:

§ 2 ՈՒՐԲԱՆԻՋԱՅՎԱԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ

Աշխարհի ժամանակակից քաղաքների մեծամասնությունը կապիտալիզմի ծնունդ է: Արդյունաբերական զարգացման սկզբներին երկրագնդի վրա կար 5 հազարից ավելի բնակչությամբ 750 քաղաք, որոնցից միայն 45-ն ուներ 100 հազարից ավելի բնակչություն: Ենթադրվում է, որ XXI դարի կեսերին քաղաքային բնակչությունը զգալիորեն գերազանցելու է գյուղական բնակչությանը:

Անցյալ դարի 50-ական թվականներին գաղութային համակարգի փլուզման

և գիտատեխնիկական առաջընթացի, հասարակության մեջ տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի շնորհիվ (գյուղատնտեսության փոխարեն առաջատար ճյուղեր դարձան նախ՝ արդյունաբերությունը, իսկ ավելի ուշ՝ սպասարկման ոլորտը), ուրբանիզացումն ունեցավ աննախադեպ տեմպեր, ընդգրկեց աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջաններն ու երկրները՝ անկախ տնտեսության զարգացման մակարդակից և հասարակության սոցիալ-

տնտեսական կառուցվածքից: Գիտական գրականության մեջ դա ստացավ «ուրբանիզացման ֆենոմեն (երևույթ)» անվանումը: Այդ երևույթը աշխարհագրական իմաստով դրսևորվում է **ուրբանիզացված տարածաշրջանների** ձևավորմամբ: Դրանք այն ընդարձակ **տարածաշրջաններն են, որտեղ շատ բարձր է ուրբանիզացման մակարդակը, մեծ են քաղաքային բնակչության և կառուցապատման խտությունն ու ոչ գյուղատնտեսական գործունեության համակենտրոնացման աստիճանը, ինտենսիվ են աշխատանքային, տնտեսական, կենցաղային և մշակութային կապերը:**

Ուրբանիզացումը տարբեր ձևով է ընթանում աշխարհի տարբեր տարածաշրջաններում և երկրներում: Վերջին տասնամյակներին Լատինական Ամերիկայի և Հարավարևմտյան Ասիայի երկրների մեծ մասը ուրբանիզացման բարձր տեմպերի շնորհիվ հասել են տնտեսապես զարգացած երկրների ուրբանիզացման մակարդակին (միջինը՝ 70–80%): Զարգացած ու ոչ ընդարձակ երկրները, որտեղ ուրբանիզացման մակարդակը շատ բարձր է (90%–ից ավելի), և առկա են խոշոր քաղաքներ ու ագլոմերացիաներ, կարելի է ամբողջությամբ դիտարկել որպես ուրբանիզացված տարածաշրջաններ: Դրանցից են Ճապոնիան, Նիդերլանդները, Իսրայելը, Բելգիան, ինչպես նաև Սինգապուրը, Հոնկոնգը և նավթ արտահանող արաբական փոքր պետությունները՝ ԱՄԷ, Բուվեյթ, Կատար, Բահրեյն:

Ներկայումս համաշխարհային ուրբանիզացման հատկանշական գիծը քաղաքային բնակչության համակենտրոնացումն է, որը դրսևորվում է խոշոր

քաղաքների արագ աճով և քաղաքային ագլոմերացիաների ձևավորմամբ:

Խոշոր քաղաքներում և քաղաքային ագլոմերացիաներում առկա են լավագույն պայմանները մարդկանց հոգևոր և նյութական պահանջունքների բավարարման, գիտության, բարձրագույն կրթության, մշակույթի, կառավարման և արդյունաբերության նորագույն ճյուղերի արդյունավետ զարգացման, փոխադարձ կապերի ամրապնդման և զարգացած քաղաքային միջավայրի ձևավորման համար:

2016 թ. տվյալներով աշխարհի 10 խոշորագույն քաղաքների թվում տնտեսապես զարգացած երկրների միակ ներկայացուցիչը Տոկիոն է: Խոշոր քաղաքների և ագլոմերացիաների արագ զարգացումը ծնում է նաև սուր արտահայտված տնտեսական, սոցիալական, քաղաքաշինական և էկոլոգիական հիմնախնդիրներ: Բնորոշ են հատկապես ազատ աշխատատեղերի ու բնակարանների բացակայությունը, տրանսպորտային խցանումները, հարուստ և աղքատ թաղամասերի բարեկարգվածության մեծ տարբերությունները, հանցագործությունների աճը, համաճարակային հիվանդությունները, օդի աղտոտվածությունը, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Խոշոր քաղաքներին բնորոշ վերոհիշյալ հիմնախնդիրները հատկապես սուր են դրսևորվում Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող շատ երկրներում (Բրազիլիա, Արգենտինա, Թուրքիա, Իրան, Վենեսուելա, Մեքսիկա և այլն), որոնք ունեն տնտեսական զարգացման միջին մակարդակ, բնութագրվում են ոչ միայն ուրբանիզացման բարձր տեմպերով, այլև բարձր մակար-



Մոսկվա. խոշոր քաղաքային ագլոմերացիա

դակով: Այս երկրներին բնորոշ է **կեղծ ուրբանիզացման** երևույթը, քանի որ դրանցում ուրբանիզացման բարձր տեմպերը չեն ուղեկցվում տնտեսության համարժեք զարգացմամբ: Այդ երկրներում տնտեսական սուղ հնարավորությունների պայմաններում քաղաքներն աճում են տարերայնորեն և աննախադեպ արագ: Նախկին գյուղաբնակները բնակություն են հաստատում քաղաքի ծայրամասերում՝ ստեղծելով չքավորության թաղամասեր (բիդոնվիլներ):

Զարգացող երկրների մեծ մասում ոչ միայն ցածր է ուրբանիզացման մակարդակը (30-50 %), այլև քիչ են խոշոր քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաները: Դրանք առավելապես ներկայացված են մայրաքաղաքներով: Այսինքն՝ քաղաքային տարաբնակեցու-

մը միակենտրոն է՝ մայրաքաղաքների խիստ գերակշռությամբ: Մնացած քաղաքները ավելի շուտ գյուղաքաղաքներ են հիշեցնում՝ քաղաքային ապրելակերպի ոչ լիարժեք գծերով: Միայն զարգացող որոշ խոշոր երկրներում (Չինաստան, Հնդկաստան, Բրազիլիա, Մեքսիկա, Ինդոնեզիա, Թուրքիա, Իրան, Եգիպտոս, Նիգերիա, Պակիստան և այլն) առկա են որոշակի բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ՝ խոշոր քաղաքների, արդյունաբերական հանգույցների, ենթակառուցվածքների և ուրբանիզացված ընդարձակ տարածաշրջանների ձևավորման համար: Ներկայումս արագորեն ձևավորվում են Սան Ռիո (Սան Պաուլու-Ռիո դե Ժանեյրո), Պեկոյան (Պեկին-Տյանցզին), Շանհայ-Նանկին-Չանչժոու, Կահիրե-




Քարտեզ 1. ԱՄՆ մեգալոպոլիսներ

Ալեքսանդրիա և այլ ուրբանիզացված ընդարձակ տարածաշրջանները:

Ուրբանիզացումը տնտեսապես զարգացած երկրներում ընթանում է դանդաղ, քանի որ գյուղական բնակավայրերը գրեթե սպառել են քաղաքների նոր վերաբնակներով ապահովելու հնարավորությունները: Խոշոր քաղաքները և քաղաքային ագլոմերացիաները արդյունաբերականից աստիճանաբար վերածվում են ֆինանսական, առևտրական, գիտակրթական կենտրոնների: Զարգացած երկրների խոշոր քաղաքային ագլոմերացիաներում լայն տարածում է ստանում սուբուրբանիզացման երևույթը, որի արդյունքում արվարձանների բնակչության թիվն ավելանում է ի հաշիվ քաղաք-կենտրոնի բնակչության: Խոշոր քաղաքներում ավտոմեքենաների մեծ թիվն առաջացնում է տրանսպորտային խցանումներ, օդի

աղտոտվածություն, աղմուկ: Դրանց, ինչպես նաև կենտրոնում հողի և բնակարանների բարձր գների, կանաչ տարածքների կրճատման հետևանքով տարեց և ունևոր բնակչությունը մեկնում է արվարձաններ, որտեղ ապրում է փոքր հողակտորներով առանձնատներում: Արվարձաններում կանաչ տարածքները շատ են, օդը մաքուր է, կյանքը՝ հանդարտ: Միաժամանակ քաղաք-կենտրոնից ոչ մեծ հեռավորությունը (մինչև 50 կմ), արագընթաց տրանսպորտի և ժամանակակից հաղորդակցման ու տեղեկատվության միջոցների առկայությունը արվարձաններում բնակվողներին ագլոմերացիայի կենտրոնում աշխատելու և գործունեությունը շարունակելու հնարավորություն են տալիս: Շատ երկրներում ագլոմերացիայի կենտրոնի աճը սահմանափակելու նպատակով խրախուսվում են սուբուրբանիզացման գործընթացները:



Քարտեզ 2. Հյուսիսարևելյան (Բոսվաշ) մեգալոպոլիս

Քաղաքային ագլոմերացիաների մեծ մասը միակենտրոն է, ձևավորվում է խոշոր քաղաքների տարածական և գործառույթային զարգացման հետևանքով. դրանց շուրջը ստեղծվում են նոր քաղաքային բնակավայրեր և կենտրոններ, որոնք տնտեսական, աշխատանքային, մշակութային սերտ կապեր ունեն ագլոմերացիայի միջուկի (կենտրոնի) հետ: Միակենտրոն ագլոմերացիաների սահմանները սովորաբար չեն անցնում կենտրոնական քաղաքի 1,5-ժամյա տրանսպորտային մատչելիության սահմանները, որը մերձքաղաքային տրանսպորտի ժամանակակից զարգացման պայմաններում կազմում է 60–80 կմ:

Հանքարդյունաբերական և առողջարանային տարածաշրջաններում (Ռուր, Դոնբաս, Կուզբաս, Հյուսիսային Կովկաս, Դրիմի հարավային ծովափ և այլն) ձևավորվում են նաև բազմակենտրոն ագլոմերացիաներ փոքր և միջին մեծու-

թյան քաղաքների մեծ կուտակումներով: Բազմակենտրոն ագլոմերացիան առաջանում է բնակավայրերի միաձուլման, մերձեցման հետևանքով: Այստեղ բացակայում է սոցիալ-տնտեսական ներուժով մյուս բնակավայրերին գերիշխող քաղաք-կենտրոնը: Բազմակենտրոն ագլոմերացիաների մասնակի օրինակ են երկկենտրոն ագլոմերացիաները:

Քաղաքային խոշոր ագլոմերացիաների տարածքային կառուցվածքը սովորաբար ընդգրկում է գլխավոր քաղաքը (ագլոմերացիայի միջուկը) և նրան շրջապատող բնակավայրերն ու արդյունաբերական, ռեկրեացիոն, գյուղատնտեսական և այլ գոտիներ: Ներկայումս շուրջ 10 քաղաքային ագլոմերացիաներ (Տոկիո, Ջակարտա, Մեուլ, Դելի, Շանհայ, Մանիլա, Կարաչի, Նյու Յորք, Ման Պատլու, Մեխիկո) ունեն ավելի քան 20 մլն բնակչություն:

Զարգացած որոշ երկրներում միմյանց մոտ գտնվող քաղաքային ագլոմերացիաների տարածական զարգացումը և միաձուլումը սուբուրբանիզացման պայմաններում հանգեցրին **ընդարձակ ուրբանիզացված տարածաշրջանների՝ մեգալոպոլիսների ձևավորմանը (ստղ. 1)**: Մեգալոպոլիսներում նկատվում է բնակչության արտահոսք քաղաքային ագլոմերացիաներից դեպի միջագլոմերացիոն տարածքներ: Սովորաբար մեգալոպոլիսները ձգվում են տրանսպորտային կարևորագույն մայրուղիների երկայնքով, որոնք յուրահատուկ տնտեսական առանցքի դեր են կատարում:

Այսպիսով՝ մեգալոպոլիսների բնորոշ գծերն են կառուցապատման գծային բնույթը և բազմակենտրոն կառուցվածքը:

Սուբուրբանիզացման հետ միաժամանակ տեղի է ունենում ռուրբանիզացում (գյուղերի ուրբանիզացում), երբ քաղաքային ապրելակերպը տարածվում է գյուղական վայրերում: Դրա հետևանքով որակապես փոխվում են գյուղական բնակչության զբաղվածության բնույթը և ապրելակերպը, բնակչության ամենօրյա ճոճանակային տեղաշարժերը, գյուղական վայրերի բարեկարգվածությունը: Դրանք հանգեցնում են ուրբանիզացված տարածաշրջաններում քաղաքի և գյուղի տարբերությունների էական կրճատման: Ուրբանիզացված տարածաշրջաններում գյուղատնտեսությունը մերձքաղաքային մասնագիտացման բնույթ ունի. քաղաքային մեծաքանակ բնակչությանը մատակարարում է թարմ միս և կաթնամթերք (խոզաբուծություն, թռչնաբուծություն, կաթնատու տավարաբուծություն), բանջարեղեն և մրգեր (բանջարաբուծություն, այգեգործություն): Սակայն ուրբանիզացված տարածաշրջաններում գյուղատնտե-

սական հողահանդակների մակերեսները ավելի ու ավելի են կրճատվում ի հաշիվ նոր ավտոմայրուղիների, բնակելի ու արդյունաբերական նոր գոտիների:

Ուրբանիզացված հսկա տարածաշրջաններում, բնակչության տնտեսական գործունեության բարձր համակենտրոնացման պայմաններում բնական լանդշաֆտները վերածվել են մարդածին, հատկապես՝ տեխնոստիկ լանդշաֆտների, կառուցապատված տարածքների՝ ճանապարհներ, բնակելի, արդյունաբերական, սպասարկման գոտիներ և այլն:

Ուրբանիզացված ընդարձակ տարածաշրջաններն ունեն համատարած քաղաքային տարաբնակեցում, ուրբանիզացման բարձր մակարդակ (90–95 %-ից ավելի): Դրանք նախ ձևավորվել են ԱՄՆ-ում (*քարտեզ 1*), իսկ ավելի ուշ՝ մյուս զարգացած երկրներում ու տարածաշրջաններում՝ Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա, Կանադա, Ավստրալիա:

Առաջին մեգալոպոլիսը՝ **Բոսվաշը կամ Հյուսիսարևելյանը** (Մերձատլանտյան), ձևավորվել է ԱՄՆ-ի Ատլանտյան օվկիանոսի մերձափնյա գոտու երկայնքով՝ Բոստոնից մինչև Վաշինգտոն (*քարտեզ 2*): Այս ուրբանիզացված տարածաշրջանի կազմում կա շուրջ 40 քաղաքային ագլոմերացիա՝ 50 մլն բնակչությամբ: Առանձնահատուկ դեր ունի Նյու Յորքը՝ աշխարհի խոշորագույն քաղաքներից և արդյունաբերական, ֆինանսական, մշակութային կենտրոններից մեկը (բնակչությունը՝ 8 մլն, արվարձաններով՝ 17 մլն): Մյուս խոշոր քաղաքները և քաղաքային ագլոմերացիաներն են Ֆիլադելֆիան, Բոստոնը, Բալթիմորը և մայրաքաղաք Վաշինգտոնը: Վերջինս հիմնականում կառավարման, վարչական, գիտամշակութային գործառնություններ է կատարում:

Աղյուսակ 1

Աշխարհի խոշորագույն մեգալոպոլիսների հիմնական ցուցանիշները

Մեգալոպոլիսի անվանումը	Ազլոմե-րացիա-ների թիվը	Բնակչու-թյունը (մլն մարդ)	Մակե-րեսը (հազ. կմ ²)	Բնակչու-թյան խտու-թյունը (մարդ/կմ ²)	Գլխավոր առանցքի ձգվածությունը
Բոսվաշ (Բոստոն-Վաշինգտոն)	40	50	170	300	1000
Չիփիթս (Չիկագո-Փիթսբուրգ)	35	35	160	220	900
Սան-Սան (Սան Դիեգո-Սան Ֆրանցիսկո)	15	20	100	200	800
Տոկայո (Տոկիո-Օսակա)	20	70	70	1000	700
Անգլիական (Լոնդոն-Լիվերպոլ)	30	30	60	500	400
Ռուրիհեռնույան	30	30	60	500	500

ԱՄՆ-ում ձևավորված մյուս ընդարձակ ուրբանիզացված տարածաշրջանը **Մերձլճային կամ Չիփիթս** (Չիկագո-Փիթսբուրգ) մեգալոպոլիսն է, որը ձևավորվել է Մեծ լճերի հարավային մասում 35 ազլոմերացիաների միաձուլմամբ, ավելի քան 35 մլն բնակչությամբ: Խոշորագույն քաղաքը, արդյունաբերական գլխավոր կենտրոնը և տրանսպորտային հիմնական հանգույցը Չիկագոն է: Մյուս խոշոր քաղաքներն ու քաղաքային ազլոմերացիաներն

են Գետրոյտը, Քլիվլենդը, Բուֆալոն, Փիթսբուրգը և Միլուոկին:

ԱՄՆ-ում երրորդ ընդարձակ ուրբանիզացված տարածաշրջանը **Կալիֆոռնիական** (Մերձխաղաղօվկիանոսյան) կամ **Սան-Սան** (Սան Ֆրանցիսկո և Սան Դիեգո քաղաքների հապավումից) մեգալոպոլիսն է, որի մեջ մտնում են 15 ազլոմերացիաներ, այդ թվում՝ Սան Ֆրանցիսկոյի և Լոս Անջելեսի խոշորագույն ազլոմերացիաները՝ ավելի քան 20 մլն բնակչությամբ: Ամենախոշոր քաղաքը

Լուս Անջելեսն է, արվարձաններով՝ ավելի քան 11 մլն), Երևանից հետո՝ հայաշատ երկրորդ խոշոր քաղաքը աշխարհում: Մեգալոպոլիսի երկրորդ խոշոր քաղաքը Սան Ֆրանցիսկոն է: Նրա արևելյան մասում՝ Բերկլիում է գտնվում աշխարհահռչակ Կալիֆոռնիական համալսարանը, հարավում՝ Սան Խոսե քաղաքում՝ Ստենֆորդի համալսարանը, իսկ Սիլիկոնյան հովտում՝ տեխնոպոլիսը:

ԱՄՆ-ում նոր ընդարձակ ուրբանիզացված տարածաշրջաններ, այսինքն՝ մեգալոպոլիսներ են ձևավորվում Մեքսիկական ծոցի ափամերձ գոտում՝ Հյուստոն-Նոր Օռլեան ուղղությամբ, Ֆլորիդայի ափերի երկայնքով (Մայամի-Թամպա), ԱՄՆ-ի հյուսիսարևմտյան խաղաղօվկիանոսյան ափամերձ գոտում (Սիեթլ-Պորտլենդ):

Կանադայում խոշոր մեգալոպոլիս է ձևավորվում Մեծ լճերի ափերին, որտեղ առափնյա նեղ գոտում տեղաբաշխված են 10-ից ավելի խոշոր քաղաքներ և քաղաքային ագլոմերացիաներ: Հարյուրավոր կիլոմետրեր ձգվող ուրբանիզացված վերոնշյալ տարածաշրջանում բնակվում են Կանադայի բնակչության կեսից ավելին: Առավել խոշոր քաղաքներն են Տորոնտոն, Մոնրեալը, Քվեբեկը, Համիլտոնը, Օտտավան:

Ճապոնիայում խոշորագույն քաղաքային ագլոմերացիաները (Տոկիոյի, Օսակայի, Նագոյայի) տեղաբաշխված են Հոնսյու կղզու հարավային ափերին: Տոկիոյից մինչև Օսակա համատարած քաղաքային տարաբնակեցման գոտին ստացել է **Տոկայդո մեգալոպոլիս** անվանումը (70 մլն բնակիչ): Այստեղ ապրում է Ճապոնիայի բնակչության շուրջ 56%-ը: Խոշոր ագլոմերացիաների շրջանում զարգանում

է սուբուրբանիզացման գործընթացը: Արագ են աճում քաղաք-արբանյակները, իսկ 1 միլիոնից ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվն անցնում է մեկուկես տասնյակից: Մեգալոպոլիսի խոշորագույն քաղաքը Տոկիոն է, որը նաև աշխարհի խոշորագույն քաղաքային ագլոմերացիան է և գտնվում է Տոկիոյի ծոցի ու նրա մաս կազմող Սինագավա ծովախորշի մոտ: Տոկիոյի ագլոմերացիան (87 քաղաքներով) զբաղեցնում է 8,5 հազ. քկմ տարածք, որտեղ ապրում է շուրջ 38 մլն մարդ:

Տոկայդո մեգալոպոլիսի հարավարևմտյան մասն է կազմում Հանսին բազմակենտրոն քաղաքային ագլոմերացիան (4,5 հազ. քկմ և 13 մլն բնակիչ), որն աճել է երեք կենտրոնների՝ Օսակայի, Կոբեի և Ճապոնիայի նախկին մայրաքաղաք Կիոտոյի շուրջը:

Արևմտյան Եվրոպայի ուրբանիզացման բնորոշ գիծը բնակչության մեծ համակենտրոնացումն է խոշոր քաղաքներում, որոնց թվով Եվրոպան գերազանցում է Հյուսիսային Ամերիկային: Վերջին տասնամյակներին այստեղ լայն թափ առան սուբուրբանիզացման գործընթացները, ընդգրկեցին ոչ միայն մերձակա արվարձանները, այլև հեռավոր քաղաքներն ու գյուղական վայրերը: Շատ գյուղեր, փաստորեն, վերածվեցին քաղաքաբնակների «ննջարանների»: Մյուս կողմից՝ ագլոմերացիաների սերտաճման հետևանքով Արևմտյան Եվրոպայում առաջացավ երկու մեգալոպոլիս՝ **Անգլիական և Ռուր-հռենոսյան** (Մերձհռենոսյան):

Մեծ Բրիտանիայում ագլոմերացիաները՝ կոնուրբացիաները, մեծ մասամբ բազմակենտրոն են և կազմում են ուրբանիզացված լայն գոտի: Անգլիական մեգալոպոլիսը ձգվում է Լոնդոնից Լի-

վերադառնալու և ընդգրկում նրա 8 կոնուրբացիաներից 6-ը (Լոնդոն, Բիրմինգհեմ, Մանչեստր, Լիվերպուլ, Լիդս, Շեֆիլդ), որոնցից յուրաքանչյուրն ունի մեկ միլիոնից ավելի բնակիչ: Խոշորագույն քաղաքը Լոնդոնն է (8,4 մլն բնակիչ), որի բնակչությունն աշխարհում առաջինը հատեց միլիոնի սահմանը: Լոնդոնի ագլոմերացիայում, որն ընդգրկում է քաղաքի կենտրոնից 70–80 կմ շառավղով տարածք, ապրում է շուրջ 12 մլն մարդ:

Լոնդոնի կենտրոնական մասը բեռնաթափելու համար կառուցվել են բազմաթիվ նոր քաղաք-արբանյակներ: Լոնդոնի արվարձաններում են գտնվում աշխարհահռչակ համալսարանական քաղաքներ Օքսֆորդը և Քեմբրիջը:

Թեև Գերմանիայի խոշորագույն քաղաքը Բեռլինն է, սակայն խոշորագույն քաղաքային ագլոմերացիան ձևավորվել է Ռուրի ավազանում՝ Մեծ Ռուր: Այստեղ Դույսբուրգի, Էսսենի, Բոխումի, Դորտմունդի շուրջը միաձուլվել են տասնյակ քաղաքներ: Դրանք գոյացրել են տասնյակ կիլոմետրեր ձգվող մի համատարած ուրբանիզացված գոտի՝ Ռուրշտադտ՝ 6 մլն բնակչությամբ: Մյուս ուրբանիզացված գոտին ձգվում է Հռենոս գետի երկայնքով՝ Դույսբուրգից Բոնն՝ ընդգրկելով Դյուսելդորֆի և Քյոլնի ագլոմերացիաները:

Նշված ուրբանիզացված գոտիները, ընդգրկելով Գերմանիայի մերձհռենոսյան այլ շրջաններ, ստեղծում են ընդարձակ ուրբանիզացված տարածաշրջան՝ Ռուրհռենոսյան մեգալոպոլիսը՝ ավելի քան 30 մլն բնակչությամբ:

Գիտնականները հեռանկարում Արևմտյան Եվրոպայում կանխատեսում են աշխարհի խոշորագույն և ընդարձակ ուրբանիզացված տարածաշրջանի՝ միջ-

պետական մեգալոպոլիսի ձևավորումը, որն ընդգրկելու է հինգ երկրների ուրբանիզացված տարածաշրջանները՝ Արևելյան Անգլիան, Ռանդստադը (Նիդերլանդներ), Ռուրհռենոսյանը, Բելգիաֆրանսիականը (Անտվերպեն–Բրյուսել–Լիլ) և Փարիզյանը: Նշված տարածքների սահմաններում այն կգրադեցնի 230 հազ. քլմ մակերես և կունենա 85 մլն բնակչություն:

XXI դարի սկզբներին խոշոր մեգալոպոլիս է ձևավորվել Չինաստանի արևելքում՝ Յանցզի գետի դելտայի տարածքում: «Յանցզի ոսկե եռանկյունի» կոչվող ընդարձակ մեգալոպոլիսն ընդգրկում է տասնյակ խոշոր քաղաքներ և քաղաքային ագլոմերացիաներ, որտեղ ապրում է ավելի քան 50 մլն բնակիչ, որից ավելի քան 25 մլն-ը՝ աշխարհի խոշորագույն քաղաքում՝ Շանհայում:

Հայաստանը ուրբանիզացման համեմատաբար բարձր մակարդակ (64 %) ունեցող երկրներից է: ՀՀ ուրբանիզացման հիմնական առանձնահատկությունն այն է, որ ամբողջ բնակչության 1/3-ը և քաղաքային բնակչության կեսից ավելին ապրում են Երևանում, որի անմիջական ազդեցությամբ ձևավորվել է բավականաչափ ուրբանիզացված Երևանյան մայրաքաղաքային տարածաշրջանը (ագլոմերացիան): Այն զբաղեցնում է ՀՀ տարածքի 20 %-ից ավելին, որտեղ բնակվում է ՀՀ բնակչության կեսից ավելին: Երևանի տարածաշրջանը բնութագրվում է ուրբանիզացված տարածաշրջանների բնորոշ գծերով և հատկանիշներով՝ բնակչության ու կառուցապատման զգալի խտությամբ, բնական լանդշաֆտների խիստ փոփոխմամբ, օդի և ջրի մեծ աղտոտվածությամբ, սոցիալ-տնտեսական կապերի մեծ ինտենսիվությամբ և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ժամանակակից ուրբանիզացման բնորոշ գծերը, զարգացման արդի միտումները և հիմնախնդիրները:
2. Ինչպե՞ս են ձևավորվում քաղաքային ագլոմերացիաները և մեգալոպոլիսները:
3. Որո՞նք են ուրբանիզացված տարածաշրջանները: Նշե՛ք դրանց հատկանշական գծերը:
4. Որո՞նք են ուրբանիզացման աշխարհագրական առանձնահատկությունները: Նշե՛ք զարգացող երկրներում ձևավորվող ուրբանիզացված տարածաշրջանները:
5. Որո՞նք են ԱՄՆ–ի ուրբանիզացված տարածաշրջանները: Տվե՛ք դրանց համեմատական բնութագիրը:
6. Բնութագրե՛ք Տոկայոդո ուրբանիզացված տարածաշրջանը:
7. Արևմտյան Եվրոպայում ի՞նչ ուրբանիզացված տարածաշրջաններ գիտեք:
8. Ադյուսակ 1–ի ցուցանիշների հիման վրա տվե՛ք աշխարհի խոշորագույն մեգալոպոլիսների համեմատական բնութագիրը:
9. Որո՞նք են ՀՀ ուրբանիզացման բնորոշ գծերը:

§ 3

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐԸՆԹԱՅ ԱՃ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ ԵՎ ԵՐԿՐՆԵՐ

XX դարի երկրորդ կեսից սկսած՝ զարգացող տարածաշրջանների ու երկրների տնտեսական համակարգերում սրընթաց աճ արձանագրվեց: Որոշ երկրներում դրա պատճառը սեփական հանքային հումքի արդյունահանման անընդհատ աճող ծավալներն էին (Մերձավոր Արևելքի երկրներ, Բրազիլիա, Չիլի), իսկ մյուսներում՝ որակյալ աշխատանքային ռեսուրսների և նորագույն տեխնոլոգիաների շարունակական ներդրման վրա կառուցված տնտեսական համակարգերի զարգացումը:

Տնտեսության զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներն ընդունված է խմբավորել հետևյալ ձևով՝ **թույլ զարգացող, զարգացման միջին մակարդակ**

ունեցող և տնտեսական զարգացման բարենպաստ ռեժիմ ունեցող երկրներ: Վերջիններս կոչվում են նաև **նոր արդյունաբերական երկրներ:**


Երկրների այս խմբին են պատկանում Հարավարևելյան Ասիայի, Լատինական Ամերիկայի ավելի քան 10 պետություններ (Հարավային Կորեա, Սինգապուր, Մալայզիա, Թաիլանդ, Ֆիլիպիններ, Մեքսիկա, Բրազիլիա, Արգենտինա), ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի՝ նավթարդյունահանմամբ առաջատար մի շարք երկրներ: Դրանք բոլորն էլ առանձնանում են ՀՆԱ–ի աճի բարձր տեմպերով և հետևողականորեն արդիականացվող տնտեսության առանձին ճյուղերով:

Նոր արդյունաբերական երկրներում տնտեսության բարձր տեմպերով զարգացման նախադեպը Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ավերված Գերմանիայի ու Ճապոնիայի տնտեսությունների վերականգնումն է և գրեթե երեք տասնամյակում այնպիսի տնտեսական աճի արձանագրումը, որի արդյունքում այդ երկրները տնտեսական զարգացման մակարդակով աշխարհում զբաղեցրին համապատասխանաբար երկրորդ և երրորդ տեղերը:

Տնտեսական բարեփոխումների մոդելների մշակման ու ներդրման այն ուղիները, որոնք իրականացվեցին Գերմանիայում և Ճապոնիայում, XX դարի 60–ական թվականներից Հարավային և Հարավարևելյան Ասիայի ու Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում դարձան տնտեսական ծրագրված բարեփոխումների հիմքը:

Տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրներին բաժին է ընկել աշխարհի ֆինանսական խոշոր տերությունների կողմից դեռևս 1970–ական թվականներին կատարված կապիտալ ներդրումների գրեթե կեսը:

Դա 1970–1980–ական թվականներին այս երկրներում ապահովվեց տնտեսական աճի այնպիսի բարձր տեմպեր, որոնք մի քանի անգամ գերազանցում էին ոչ միայն Ասիայի, Ամերիկայի և Աֆրիկայի զարգացող մի շարք երկրների, այլև նույնիսկ զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների ցուցանիշները (գծ. 1): Հաշվարկվել է, որ 1988–2017 թթ. ընթացքում ասիական տարածաշրջանների ու երկրների տնտեսության զար-



Գծ. 1. Նոր արդյունաբերական երկրների զարգացման տեմպերը 1970–1985 թթ.

գացման տեմպերը կազմել են տարեկան մոտ 4 %, մինչդեռ եվրոպական տարածաշրջաններինն ու երկրներինը՝ շուրջ 2 %: Այդ ժամանակաշրջանում Տայվանի տարեկան տնտեսական աճը կազմել է 5%, Հարավային Կորեայինը՝ 5,2%, Սինգապուրինը՝ 8 %-ից վերջին 10 տարում իջել է 1,7%-ի, իսկ Մալայզիայինը՝ 9 %-ից նվազել է 4,3%-ի: Տնտեսական սրընթաց աճն այս երկրներում հանգեցրեց բնակչության եկամուտների աճին, արդյունքում լուծվեցին նաև սոցիալական, առողջապահական, կրթական և այլ ոլորտներում կուտակված բազմաթիվ խնդիրներ (տաղ. 2):

Հարավային, Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրների մեծ մասի տնտեսական աճի բարձր տեմպերը դեռևս լիովին չեն ապահովել զարգացած տնտեսության անհրաժեշտ մակարդակը: Շատ երկրներում, հատկապես՝ Չինաստանում, Հնդկաստանում, Բնդոնեզիայում, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ասիական տարածաշրջանների միջին ցուցանիշի համեմատ բավականին ցածր է:

Նոր արդյունաբերական երկրների և ԱՄՆ-ի տնտեսական մի շարք ցուցանիշներ

Պետություններ	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2016 թ. (դոլար)	ՀՆԱ-ի աճի տարեկան տեմպը 2015 թ. (%)	Աշխատանքի ար- տադրողականու- թյան աճը 1988-2008 թթ. (%)	Վերանշակող ար- դյունաբերության մեջ զբաղվածների աշխատավարձը 2017 թ. (դոլար/ժ)
ԱՄՆ	57 600	2,6	1,2	21,33
Տայվան	48 000	2,2	5,3	20,5
Հարավային Կորեա	37 700	2,7	5,1	6,7
Հոնկոնգ	58 300	3,5	9,6	8,56
Սինգապուր	87 800	2,5	6,8	13,3

Այս երկրների շարքում առանձնահատուկ զարգացման մակարդակի է հասել Սինգապուրը, որը 1995 թ-ից համարվում է «անհատապես զարգացած» պետություն: Քաղաքական կայունության, տնտեսական սրընթաց աճի շնորհիվ Սինգապուրը 40 տարում փոքրիկ նավահանգստից դարձավ աշխարհի զարգացած երկրներից իններորդը: Բնակչության մեկ շնչի տարեկան միջին եկամտով Սինգապուրը գերազանցում է անգամ իր նախկին գաղութատեր Մեծ Բրիտանիային:

Նոր արդյունաբերական երկրների զարգացման հիմքը կազմում են **վերանշակող արդյունաբերությունը, բարձր տեխնոլոգիաները, աշխատանքի բարձր արտադրողականությունը և արտադրության կազմակերպման համար անհամեմատ քիչ ծախսերը**: Տնտեսության

արդիականացումն ընդգրկում է արտադրական շղթայի բոլոր օղակները՝ հումքի վերանշակմամբ զբաղվող ճյուղերից մինչև գիտատար արտադրություններ:

Տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրների ժամանակակից տնտեսության ձևավորման մեջ զգալի է **օտարերկրյա ներդրումների** բաժինը: Կապիտալ ներդրումների կատարման առումով առաջատար են ԱՄՆ-ը և Ճապոնիան, որոնց պատկանում է նոր արդյունաբերական երկրներում արված ներդրումների 40 %-ը: Զարգացած երկրների համար նոր արդյունաբերական երկրները կապիտալ ներդրումների առումով գրավիչ են մի քանի պատճառներով: Նախ՝ այդ երկրներն ընտրել են տնտեսության զարգացման շուկայական ուղին: Նոր



Մինգապուր. արդյունաբերական խոշոր քաղաք-պետություն

արդյունաբերական որոշ երկրներ (օրինակ՝ լատինամերիկյան երկրները) տիրապետում են բնական ռեսուրսների հսկայական հույճային բազայի, էժան աշխատուժի, որոնք իրենց հերթին դարձել են այդ երկրներում արտադրության տեղաբաշխման հիմնական գործոններ:


Միաժամանակ, մի շարք երկրներ զարգացած երկրների ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական շահերի ազդեցության գոտում են: 1970–1980–ական թվականներին, ի հակակշիռ «կոմունիստական ազդեցության», Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրների ցուցաբերվել է տնտեսական ու ռազմական հսկայական օժանդակություն:

Միայն 2015 թ. նոր արդյունաբերական երկրներում ներդրված արտասահմանյան կապիտալը կազմել է 1,7 տլն դոլար,

որի մեծ մասը ներդրվել է Արևելյան և Հարավարևելյան Ասիայի նոր արդյունաբերական երկրներում:

Այս կարգի երկրների զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել ծովային առևտրական ուղիների հանգույցներում կամ դրանց հարևանությամբ գտնվելը: Այս երկրների զարգացմանը նպաստել է նաև իրենց նախկին գաղութների հետ տնտեսական կապերի վերականգնման եվրոպացիների ձգտումը:

Նոր արդյունաբերական երկրների տեխնոլոգիական զարգացման բարձր տեմպերը զգալի դրական ազդեցություն ունեն տարածաշրջանների մյուս երկրների տնտեսական զարգացման վրա: Հեռավորարևելյան «վիշապների» (Ճապոնիա, Հարավային Կորեա) տեխնոլոգիական առաջընթացը հիմք դարձավ



Քարտեզ 3. ԱՄԵԱՆ և ԼԱԻԱ

Թաիլանդի, Մալայզիայի զարգացման համար, որոնց 1980–ական թվականների կեսերից հաջորդեց զարգացման բարձր տեմպեր ձեռք բերած երկրների «երրորդ սերունդը» (Թուրքիա, Կիպրոս, Թունիս): 1990–ական թվականներին բարձր տնտեսական աճով առանձնացան հատկապես Չինաստանը, Ինդոնեզիան, իսկ վերջին տասնամյակում՝ Վիետնամը:

Նոր արդյունաբերական երկրների սոցիալ–տնտեսական համակարգերի զարգացմանը մեծապես նպաստել են նաև **տարածաշրջանային տնտեսական միությունները**: Հարավարևելյան Ասիայի նոր արդյունաբերական երկրների պարագայում նշանակալից է Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիան

(ԱՄԵԱՆ), իսկ լատինամերիկյան երկրների պարագայում՝ Լատինամերիկյան ինտեգրացման ասոցիացիան (ԼԱԻԱ) և այլն (*քարտեզ 3*):

Նոր արդյունաբերական երկրներից զարգացման տեմպերով առանձնանում է **Մալայզիան**, որը մի շարք ապրանքատեսակների արտադրությամբ աշխարհի առաջատար երկրներից է: Տնտեսության զարգացման հիմքում ընկած հիմնական գործոններից են հանքային հումքի հարուստ պաշարները (անագ, բոքսիտներ, երկաթաքար, նավթ), որոնցով Մալայզիան խաղաղօվկիանոսյան ավազանի առաջատար երկրներից է: Այդ պաշարներն ապահովել են մեքենաշինության, նավթի արդյունահանման ու վերամշակ-

ման ճյուղերի զարգացումը և անուղղակի կերպով նպաստել նաև գյուղատնտեսության զարգացմանը. Մալայզիան Ինդոնեզիայի ու Թաիլանդի հետ միասին բնական կաուչուկի և արմավենու յուղի արտադրությամբ աշխարհում առաջատարներից է (համաշխարհային արտադրության շուրջ 60 %-ը):

Նոր արդյունաբերական երկրների շարքին է դասվում նաև աշխարհի ամենամարդաշատ երկիրը՝ Չինաստանը: Նրա տնտեսության սրբնթաց վերելքը պայմանավորված է հետևողականորեն իրականացվող հետևյալ տնտեսական բարեփոխումներով.

- ▶ ձեռնարկությունների ինքնուրույնության ընդլայնում, պետական պլանավորման կրճատում,
- ▶ տնտեսության մեջ սեփականության տարբեր ձևերի ներգրավում (պետական, կոլեկտիվ, մասնավոր և այլն),
- ▶ փակ բնատնտեսության վերափոխում ապրանքադրամական փոխհարաբերությունների վրա հիմնված շուկայական տնտեսության,
- ▶ ֆինանսավարկային, բանկային և գնագոյացման համակարգերի վերափոխում,
- ▶ արտաքին տնտեսական փոխհարաբերությունների արմատական բարեփոխում՝ հիմնված արտասահմանյան պետությունների հետ կապերի ընդլայնման, սեփական տնտեսության մեջ արտասահմանյան կապիտալի ներգրավման, ազատ տնտեսական գոտիների ձևավորման վրա:

Չինաստանի սրբնթաց տնտեսական աճը հատկապես 2015–2017 թթ. կազմել է տարեկան շուրջ 6,6 %: Ներկայումս կրճատվում է Չինաստանի և ԱՄՆ–ի

ՀՆԱ–ի միջև եղած տարբերությունը: Չինաստանը աստիճանաբար վեր է ածվում տնտեսական հզոր տերության, և վճռորոշ է դառնում նրա ազդեցությունը աշխարհաքաղաքական, համամոլորակային ու տարածաշրջանային գործընթացներում:

Տնտեսական սրբնթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրների (ԵԱԵ) տնտեսական զարգացման բարձր տեմպերը հանգեցրել են համաշխարհային տնտեսության և աշխատանքի միջազգային բաժանման մեջ նրանց դերի կտրուկ մեծացմանը: Արդյունքում՝ այդ կարգի մի շարք երկրներից արտահանվող ապրանքների միագումար արժեքը գերազանցում է զարգացած երկրների (բացի ԱՄՆ–ից, Գերմանիայից ու Ճապոնիայից) արտահանման ծավալները (*ստ. 3*):

Նոր արդյունաբերական երկրներում, չնայած յուրաքանչյուրի զարգացման յուրահատկություններին, առանձնանում են տնտեսական քաղաքականության հետևյալ ուղղությունները.

- ▶ ամբողջ տնտեսության երկարաժամկետ զարգացման պլանավորում,
- ▶ ազատ շուկայի և ձեռներեցության զարգացման խթանում,
- ▶ տնտեսության զարգացմանը արդյունավետ պետական միջամտություն,
- ▶ արտահանումը խթանող հատուկ ընկերությունների հիմնում (դրանց ազդեցությունը տնտեսական զարգացման վրա շոշափելի է Հարավային Կորեայում և Չինաստանում),
- ▶ արտոնյալ պայմաններով արտահանվող արտադրանք տվող ընկերություններին երկարաժամկետ վարկերի տրամադրում, որոշ ընկերությունների առանձին դեպքերում հարկերից լրիվ ազատում,

- ▶ արտասահմանյան կապիտալի ներգրավման արտոնյալ պայմանների ստեղծում:

Ասիական և ամերիկյան տարածաշրջանների՝ տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական

երկրները համախառն արտադրանքի ծավալներով մոտենում են Արևմտյան Եվրոպայի երկրներին, իսկ առանձին գնահատումներով՝ 2025 թ-ին կգերազանցեն Հյուսիսային Ամերիկայի ցուցանիշները:

Աղյուսակ 3

Նոր արդյունաբերական երկրների արտաքին առևտրի շարժընթացը*

Պետություններ (ԵԱԵ)	Մլրդ դոլար				2008 թ. դրությամբ (%)		
	1970 թ.	1980 թ.	1995 թ.	2008 թ.	ԱՄՆ	Ճապոնիա	Արևմտյան Եվրոպա
Հարավային Կորեա	0,7/1,7	13,3/14,8	125/135	133,7/141,0	46,2/23,1	15,6/34,4	14,9/12,4
Տայվան	0,9/1,2	13,0/12,0	99,4/84,3	114,9/103,4	50,1/24,4	11,4/22,4	12,0/13,4
Հոնկոնգ	2,1/1,8	13,6/12,3	176,4/194,3	---	44,9/9,0	4,0/20,4	24,2/14,2
Սինգապուր	0,7/1,3	8,0/11,5	96,8/85,3	121,5/127,5	21,5/25,5	8,5/19,8	12,0/14,2
Մալայզիա	1,0/0,6	6,7/6,8	72,4/72,1	17,4/20,0	17,4/20,0	22,5/20,5	15,2/17,1
Թաիլանդ	0,4/1,1	3,8/5,3	67,8/65,4	21,0/12,6	21,0/12,6	13,4/26,3	21,0/17,9

* Տվյալների համարիչում ներկայացված են ներմուծման, իսկ հայտարարում՝ արտահանման ցուցանիշները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են տնտեսական սրընթաց աճ արձանագրած երկրների զարգացման բարձր տեմպերի հիմնական պատճառները:
2. Ինչպիսի՞ կառուցվածքային փոփոխություններ են կրել նոր արդյունաբերական երկրների տնտեսությունները:
3. Ի՞նչ նշանակություն ունեն աշխարհագրական դիրքի, բնական ռեսուրսների գործոնները նոր արդյունաբերական երկրների զարգացման համար:
4. Ի՞նչ գործոններով է պայմանավորված Չինաստանի, Սինգապուրի ու Մալայզիայի տնտեսական սրընթաց զարգացումը:
5. Ձեր կարծիքով՝ Հայաստանը երբևէ կարո՞ղ է տնտեսական սրընթաց աճ արձանագրած երկիր դառնալ: Ինչպիսի՞ բարեփոխումներ են անհրաժեշտ դրա համար: Կատարե՞ք կանխատեսումներ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեռնային տարածքները ջրային, էներգետիկ, կենսաբանական, հանքային, ռեկրեացիոն ռեսուրսների առաջացման ու տարածման ինքնատիպ բնական տարածքային միավորներ են, որոնք զբաղեցնում են երկրագնդի տարածքի 25–35 %-ը: «Լեռնային տարածքներ» հասկացության հատուկ սահմանում չկա, սակայն լեռնային տարածքը ոչ լեռնայինից տարբերակող չափանիշները հստակ առանձնացվում են: Դրանք են ծովի մակարդակից տարածքի ունեցած բացարձակ բարձրությունը, մակերևույթի թեքությունների անկյունները (լանջերի թեքությունները), բուսականության և լանդշաֆտների վերընթաց գոտիականությունը, կլիմայական պայմանների փոփոխականությունը և խստությունը, տարածքի առանձին մասերի դժվարամատչելիությունը, կենդանի օրգանիզմների վրա բարձրության ազդեցությունը և տարերային բնական երևույթների մեծ ռիսկայնությունը (սելավներ, սողանքներ, ձնահյուսեր և այլն):

Լեռնային տարածաշրջանների ու երկրների առանձնացման հիմքում ընկած է լեռների ֆիզիկաաշխարհագրական դասակարգումը, իսկ սոցիալ-տնտեսական տեսանկյունից լեռնային տարածքների դասակարգման մոտեցումները տարբեր են և առանձին դեպքերում կարգավորվում են երկրների օրենսդրությամբ: Օրինակ՝ Բուլղարիայում լեռնային տարածքներ են համարվում այն համայնքները, որոնց տարածքի 70 %-ը

ծովի մակարդակից ունի 600 մետրից ավելի բարձրություն, իսկ բարձրությունների տատանումները գերազանցում են 400 մետրը:

Լեռնային տարածաշրջանների ու երկրների զարգացման հիմնական խոչընդոտներն են մակերևույթի բացարձակ բարձրությունների մեծ տատանումները, ռելիեֆի մասնատվածությունը և բացարձակ բարձրությունների մեծությունները, որոնք սահմանափակում են տարածքի յուրացման հնարավորությունները: Լեռնային տարածաշրջաններում 2–3 անգամ մեծանում են ճանապարհաշինության, վարելահողերի յուրացման վրա կատարվող ծախսերը, և գրեթե կրկնակի թանկանում են բնակարանաշինությունը, արտադրական ենթակառուցվածքների ստեղծումը, տրակտորների ու ավտոմեքենաների շահագործումը:

Լեռները բարդ, փոխկապակցված, խոշոր էկոհամակարգ են, համամոլորակային էկոհամակարգի գոյության նախապայմանը: Լեռնային էկոհամակարգերը արագ փոփոխվում են. հողերը արագ են ենթարկվում էրոզիայի, արագ են ակտիվանում սողանքները, արագ են կրճատվում կենդանի օրգանիզմների գենետիկ բազմազանության բնակության տարածքները և տեսակային կազմը:

Լեռնային տարածքների առանձնացումն ու սահմանումն ունեն ոչ միայն տեսական նշանակություն: Քաղաքակրթությունների պատմությունը ապացուցում է, որ կյանքը և տնտեսության վարումը



Լեռնային տարածաշրջան Հայաստանում

լեռնային տարածաշրջաններում հարթավայրայինից բավականին տարբերվում են: Աղքատությունը և աշխատանքային մշակույթի ցածր մակարդակը լեռնային տարածաշրջաններում ու երկրներում բնական միջավայրի վատթարացման հիմնական պատճառներից են: Դրա համար էլ լեռնային տարածաշրջանների ռեսուրսների կառավարումը և բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը պահանջում են անհասկալի միջոցառումներ:


Աշխարհի բնակչության 10 %-ը կախված է լեռնային տարածաշրջաններում գոյացած ռեսուրսներից: Այս տեսանկյունից առանձնանում է խմելու և կենցաղային նպատակով օգտագործվող որակյալ քաղցրահամ ջուրը:

Լեռնային տարածաշրջանները հիմնականում հարուստ են ջրաէներգետիկ

ռեսուրսներով: **Ջրաէներգետիկ ռեսուրս** են անվանում երկրի մակերևույթով ջրային հոսքերի (հոսող ջրի) պոտենցիալ էներգիան: Քանի որ երկրագնդի ցամաքի միջին բարձրությունը մոտ 800 մ է, իսկ մակերևութային ջրերի տարեկան հոսքը՝ 48 հազ. կմ³, ապա համաշխարհային ջրաէներգետիկ ներուժը (պոտենցիալը) կկազմի մոտ 1 մլրդ կվտ, որը կապահովի տարեկան 35–40 տրլն կվտ․ժամ էլեկտրաէներգիայի արտադրություն: Սակայն տեխնոլոգիապես յուրացման ենթակա է միայն ջրաէներգետիկ ներուժի 8–10 տրլն կվտ․ժամը: Լեռնային գետերին է պատկանում ջրաէներգետիկ ներուժի 2/3-ը, որի տեղաբաշխումը անհամաչափ է (գծ. 2):

Ջրային էներգետիկայի զարգացման ամենանպաստավոր պայմաններն ունեն Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամե-

րիկայի լեռնային գետերը: Մինևույն ժամանակ, զարգացող երկրներին բաժին է ընկնում լեռնային գետերի համաշխարհային ջրաէներգետիկ ներուժի 2/3-ը:



Գծ. 2. Աշխարհի գետերի ջրաէներգետիկ ներուժի բաշխումն ըստ տարածաշրջանների

Լեռնային տարածաշրջանների էկոլոգիան և ջրհավաք ավազանների դեգրադացումը (վատթարացումը) ուղղակի և անուղղակի կերպով անդրադառնում են երկրագնդի բնակչության գրեթե կեսի կենսագործունեության վրա: Երկրագնդի բնակչության մոտ 10 %-ը ապրում է բարձրլեռնային, իսկ 40 %-ը՝ միջինլեռնային և նախալեռնային շրջաններում: Այս շրջանների ջրհավաք ավազաններում շրջակա միջավայրի վատթարացման հիմնախնդիրները առավել արտահայտ-

ված են: Հարավային Ամերիկայի անդյան երկրների լեռնային գյուղերում սրվել են հողերի էրոզիայի, աղքատացման և կյանքի որակի կտրուկ անկման հետ կապված հիմնախնդիրները: Նույնն է վիճակը Հիմալայների, Հարավարևելյան Ասիայի լեռնային և նախալեռնային տարածքներում. գյուղատնտեսական արտադրության մեջ կատարվել են կենսական նշանակության ներդրումներ, սակայն բնակչության թվի կտրուկ աճի հետևանքով հողերը համատարած վատթարացման սպառնալիքի տակ են: Լեռնային շատ տարածաշրջաններում հողերի վատթարացումը պայմանավորված է ցանքերի չափից ավելի բեռնվածությամբ, անտառազրկմամբ և հողային ծածկի կենսազանգվածի կորստով:

Հողային էրոզիան կարող է աղետալի հետևանքներ ունենալ լեռնային և բլրաշատ տարածքներում ոչ ոռոգելի հողագործությամբ զբաղվող գյուղական բնակչության համար: Աղքատությունը, գործազրկությունը, հիվանդությունները և հակասանիտարական վիճակը բնորոշ են այս շրջանների մի մասին:

Կայուն զարգացման համաշխարհային ծրագրի «XXI դարի օրակարգը» փաստաթղթում առանձնահատուկ ուշադրություն է դարձված **խոցելի էկոհամակարգերի արդյունավետ օգտագործմանը և լեռնային տարածաշրջանների կայուն զարգացմանը**: Լեռնային տարածաշրջանների էկոհամակարգերի հետագա դեգրադացումը կանխելու նպատակով այդ շրջանների բնակչության անմիջական ներգրավմամբ մշակվում և իրականացվում են համալիր ծրագրեր: Ջրային, հողային, բուսական, կենդանական և մարդկային ռեսուրսների պահպանության

ու դրանց որակի բարձրացման համար ամրագրվել է համալիր մոտեցման գաղափարը, որը ներառում է բնակչության կենսապահովման և զբաղվածության ծրագրերի իրականացում, բնակչության կայուն կենսամակարդակի ապահովման համակարգերի ձևավորում, տնտեսական ավանդական համակարգի գործառույթների սահմանափակում:

Լեռնային տարածաշրջաններում տարբեր լանդշաֆտների միջև նյութափոխանակությունը համեմատաբար դանդաղ է ընթանում: Այս հանգամանքը հնարավորություն է ստեղծում հատկապես բարձրլեռնային շրջաններում կուսական բնատարածքների պահպանության համար: Դրան նպաստում են նաև այս շրջաններում մարդու ակտիվ կենսագործունեությունը սահմանափակող գործոնները, հատկապես՝ խիստ կլիման և ռելիեֆի առավել մասնատվածությունը: Բարձրլեռնային շրջաններում այս գործոններն են ապահովում անհետացման վտանգի տակ գտնվող շատ կենդանատեսակների ու բուսատեսակների գոյությունը: Պատահական չէ, որ, օրինակ՝ Հայաստանում բեզոարյան այծը, մուֆլոնը պահպանվել են միայն բարձրլեռնային դժվարամատչելի, կլիմայական խիստ պայմաններ ունեցող շրջաններում:

Լեռնային տարածաշրջաններն ու երկրները մետաղական և ոչմետաղական արժեքավոր հանքային ռեսուրսների հզոր շտեմարաններ են: Լեռնահանքային արդյունաբերության հիմքը կազմող հանքատեսակների ամենամեծ կուտակումները՝ երկրաբանական գործոններով պայմանավորված, առաջացել են լեռներում: Երկաթի, պղնձի, ցինկի,

մոլիբդենի և շատ մետաղների ամենամեծ կուտակումներն աշխարհում գտնվում են լեռնային համակարգերի տարածման շրջաններում: Այս տեսանկյունից առանձնանում են Կորդիլիերների, Անդերի լեռնային համակարգերը Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Ալպ-Հիմալայան լեռնային համակարգը, Սկանդինավյան լեռները, Արևելյան և Հարավային Սիբիրի լեռնային համակարգերը և այլն:

Լեռնային տարածաշրջաններին բնորոշ են ռեկրեացիոն բացառիկ նշանակություն ունեցող հանքային աղբյուրները: Համաշխարհային նշանակություն ունեն Ելոուստոնյան պարկի (ԱՄՆ), Հյուսիսային Կովկասի (Պյատիգորսկ, Ժելեզնովոդսկ), Կառլովի Վարիի (Չեխիա) հանքային աղբյուրները: Դրանք, բուժիչ նշանակություն ունենալուց բացի, լեռնային տարածաշրջանները վերածում են հանգստի ու զբոսաշրջության ակտիվ տարածքների:

Հետաքրքիր է, որ ավելի քան 4000 մ բարձրանալիս մարդու աշխատունակությունը նվազում է 20 %-ով, իսկ 5500 մ բարձրության վրա՝ գրեթե 50 %-ով:

Բարձրլեռնային շրջաններին բնորոշ է այսպես կոչված **լեռնային հիվանդությունը**, որը հիմնականում պայմանավորված է թթվածնային անբավարարությամբ (հիպոքսիա): Լեռնային հիվանդության ախտանիշների ի հայտ գալը կախված է հիմնականում տեղանքի բացարձակ բարձրությունից, աշխարհագրական լայնությունից և յուրաքանչյուր մարդու օրգանիզմի կլիմայավարժեցումից: Բարձր լեռներում մարդու օրգանիզմի կլիմայավարժեցումը տևում է մի քանի օր (*սղ. 4*):

Աղյուսակ 4

**Լեռնային հիվանդության սկզբնական ախտանիշների ի հայտ գալու բարձրությունները
և հիվանդության ընթացքի որակական փոփոխությունները**

Լեռնային տարածաշրջաններ	Բացարձակ բարձրությունը (մ)		Կլինայավարժեցման տևողությունը (օր)
	Լեռնային հիվանդության սկիզբը	Լեռնային հիվանդության ընթացքի փոփոխությունները	
Պատագոնիա	1000	–	1
Կամչատկա	1500	2500, 3500	1
Սկանդինավյան թերակղզի	2000	–	2
Ալպեր	2500	3500	3
Կովկաս	3000	4000	4
Կանադայի և ԱՄՆ-ի արևմուտքի լեռներ	3000	4000	5
Ալթայ և Պամիր	3700	4700, 5700	5–7
Տյան Շան	3800	4800, 5800	5–7
Հիմալայներ, Կարակորում	5000	6000, 7000	7–8

Առանձնահատուկ է լեռնային տարածաշրջանների **ռեկրեացիոն** նշանակությունը: Լեռնային ռեկրեացիոն բնօգտագործման առանձնահատկությունները հետևյալն են՝

1. բնապահպանության ու բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանման վրա հիմնված և բնօգտագործման հետ սերտաճած գոյությունը (գրոսաշրջիկներին և լեռնային ռեկրեացիայի ծառայություններից օգտվողներին անհրաժեշտ է բնական միջավայր),

2. լեռնային ռեկրեացիայի նպատակներով այնպիսի բնատարածքների օգտագործումը (հատկապես՝ բարձրլեռնային), որոնք հողօգտագործման մյուս

ուղղությունների համար սահմանափակ պիտանիություն ունեն,

3. սեփական կարիքների համար բնօգտագործման ենթակա լանդշաֆտի ռեկուլտիվացմանը (մարդու կողմից խախտված հողերի վերականգնում) ուղղված միջոցառումների իրականացումը:

Առանձնացվում են բնատարածքների յուրացման լեռնային ռեկրեացիայի **էքստենսիվ** և **ինտենսիվ** ուղղություններ: **էքստենսիվ** ուղղության համար հատկանշական է ենթակառուցվածքների ձևավորվածության, ռեկրեացիոն ռեսուրսների կառավարման ցածր մակարդակը: Այս ուղղությունը բնորոշ է միայն **լեռնագնացության** (ալպինիզմ) և լեռնային գրոսաշրջության երթու-

դիներով սահմանափակվող լեռնային տարածաշրջաններին: **Ինտենսիվ** ռեկրեացիայի լեռնային տարածաշրջանները հարմարավետ զբոսաշրջության կազմակերպման համար ենթակառուցվածքներով հագեցած բնատարածքներն են, որտեղ բնական և արհեստական լանդշաֆտների տարածքները հավասարակշռված են և հարմարեցված բնական միջավայրի հնարավորություններով պայմանավորված ծառայություններին: Որպես ինտենսիվ ռեկրեացիայի տարածքներ՝ առանձնանում են լեռնային տարածաշրջանների ազգային պարկերը:

Որպես լեռնային երկիր՝ Հայաստանի Հանրապետությունում զարգանում են լեռնային զբոսաշրջության տարբեր տեսակներ (ենթաճյուղեր), որոնցից առանձնանում են բուժիչ (առողջարար) և էկոլոգիական զբոսաշրջությունները: Դրանց համար գլխավոր օբյեկտներ են հանքային բուժիչ ջրերը, լեռնային մաքուր օդը, անտառային լանդշաֆտները, Սևանի լողափերը, ՀՀ ազգային պարկերը (Գիլիջանի և Սևանի), արգելոցները (Խոսրովի և Շիրակի), բնության տարբեր հուշարձաններ:

Լեռնային ռեկրեացիայի տեսակների մեջ առանձնանում է լեռնագնացությունը: Լեռնագնացության տեսակետից լեռնագագաթները, ըստ հաղթահարման դժվարության, դասակարգվում են հետևյալ կերպ.

1. **բարձրադիր**՝ 6000–8000 մ բարձրություն ունեցող գագաթներ,
2. **բարձր դժվարության**՝ 4000–6000 մ բարձրություն ունեցող գագաթներ,
3. **միջին դժվարության**՝ 3000–4000 մ բարձրություն ունեցող գագաթներ,



Լեռնային զբոսաշրջություն

4. **ցածր դժվարության**՝ 2000–3000 մ բարձրություն ունեցող գագաթներ:

Լեռնագագաթների այս դասակարգումը լեռնային երկրների լեռնագնացության (ալպինիստական) ռեսուրսների դասակարգման հիմքն է: Հանգստի և սպորտի տարբեր ձևերի (առողջարարական, զբոսանքային, լեռնադահուկային, լեռնազբոսաշրջային, լեռնագնացային) տեսանկյունից լեռնային տարածաշրջանները և առանձին լեռնագագաթներ նույնպես ենթարկվում են դասակարգման: Օրինակ՝ լեռնադահուկային սպորտի ենթակառուցվածքները, մարզաձևի բնույթով պայմանավորված, դասակարգման առումով ենթարկվում են խիստ կանոնների և ունեն հստակ ճարտարագիտական կառուցվածք:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ սկզբունքներով են առանձնացվում լեռնային տարածաշրջանները (շրջանները):

2. Նշե՛ք լեռնային տարածաշրջաններին ու երկրներին բնորոշ հատկանիշները:

3. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն լեռնային տարածաշրջանները տնտեսական յուրացման տեսանկյունից:

4. Ինչո՞ւ է բնական միջավայրի վատթարացումը լեռնային տարածաշրջաններում ավելի արագ ընթանում:

5. Բնութագրե՛ք մետաղական և ոչմետաղական ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկությունները լեռնային տարածաշրջաններում: Որքա՞ն է համաշխարհային ջրաէներգետիկ ներուժը, և ինչպիսի՞ն է դրա տեղաբաշխման աշխարհագրությունը:

6. Որո՞նք են խոցելի էկոհամակարգերի արդյունավետ օգտագործմանը և լեռնային տարածաշրջանների կայուն զարգացմանն ուղղված միջոցառումները:

7. Ո՞րն է լեռնային տարածաշրջանների ռեկրեացիոն նշանակությունը: Բնութագրե՛ք լեռնային տարածաշրջանների ռեկրեացիոն բնօգտագործման առանձնահատկությունները:


8. Գնահատե՛ք Հայաստանի Հանրապետության՝ որպես լեռնային երկրի ռեկրեացիոն ռեսուրսները և դրանց օգտագործման հեռանկարները:

§ 5

ՉՈՐԱՅԻՆ (ԱՐԻԴ) ԱԳՐԱՐԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ

Չորային կամ արիդ երկրներն ու տարածաշրջաններն առանձնանում են նախ և առաջ իրենց ինքնատիպ կլիմայով, հողերով, ջրագրական ցանցով, բուսական ու կենդանական աշխարհով: Այսինքն՝ այդպիսի **տարածաշրջանների ինքնատիպության գլխավոր «մեղավորը» ֆիզիկաաշխարհագրական առանձնատուկ պայմաններն են**, որոնք մշտապես իրենց ազդեցությունն են թողնում այդ տարածաշրջանների բնակեցման և տնտեսական գործունեության վրա:

Երկրագնդի չորային տարածաշրջանները հիմնականում համընկնում են անապատային տարածքներին: Վերջիններս զբաղեցնում են 16,5 մլն քվմ տարածք կամ ցամաքային տարածքի 12,4%-ը (առանց Անտարկտիդայի և Գրենլանդիայի): Դրանք տարածված են հյուսիսային բարեխառն գոտում, հյուսիսային և հարավային կիսագնդերի արևադարձային և մերձարևադարձային լայնություններում (*քարտեզ 4*): Եգիպտոսի, Լիբիայի, Սուդանի, Չադի, Մավրիտանիայի, Մալիի, Նամիբիայի, Սոմալիի, Արաբական



Քարտեզ 4. Երկրագնդի չորային (արիդ) տարածաշրջանները

թերակղզու բոլոր երկրների, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Մոնղոլիայի, Ղազախստանի և Ավստրալիայի տարածքների մեծ մասը զբաղեցնում են չորային շրջանները: Մասնավորապես, մեծ տարածք ունեցող Ավստրալիայում, Եգիպտոսում, Սաուդյան Արաբիայում և Ալժիրում չորային, աննարդաբնակ տարածքները 75 %-ից ավելի են: Երկրագնդի չորային տարածքների մեծ մասը պլատֆորմային շրջաններում է՝ զբաղեցնելով ցամաքի հնագույն հատվածները: Ասիայի, Ավստրալիայի և Աֆրիկայի չորային տարածքները սովորաբար ծովի մակարդակից 200–600 մ բարձրություններում են, Կենտրոնական Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում՝ ծովի մակարդակից մոտ 1000 մ բարձրություններում: Չորային տարածքների

մեծ մասը սահմանակցում է լեռնային տարածքներին կամ շրջապատված է դրանցով:

Չորային տարածաշրջանները որքան որ հարուստ են արեգակնային էներգիայով և լույսով, նույնքան էլ կարիք ունեն մթնոլորտային տեղումների ու ջրային ռեսուրսների: Օրինակ՝ Արաբական սարահարթում, բացառությամբ եգրային լեռնոտ շրջանների, ուր տեղումների տարեկան քանակը գերազանցում է 500 մմ–ը, մնացած տարածքներում այն չի անցնում 150 մմ–ից: Ռուբ–էլ–Խալի անապատը և դրանից հարավ ընկած առափնյա շրջանները մթնոլորտի խոնավության պայմաններով գրեթե չեն զիջում երկրագնդում չորությամբ հայտնի Լիբիական անապատին և Կենտրոնական Սահարային:

Չորային տարածաշրջաններում տեղումների տարեկան քանակը չի գերազանցում 200 մմ-ը (գերչորային շրջաններում 50 մմ-ից պակաս է, իսկ անապատային որոշ շրջաններում տասնյակ տարիներ տեղումներ չեն լինում):

Չորային տարածաշրջանների օդը խոնավությամբ քիչ է հագեցած և գործնականում չի պաշտպանում հողի մակերևույթն արեգակնային ճառագայթումից (ռադիացիայից): Սովորական է +50 °C ջերմաստիճանը: Արևադարձային անապատներում ջերմաստիճանի օրական տատանումները կարող են կազմել 30–40°, բարեխառն գոտու անապատներում՝ մինչև 20°: Չորային տարածքներին բնորոշ են մշտապես փչող քամիները, որոնց հետևանքով առաջանում են ավազի և փոշու մրրիկներ: Արաբական երկրներում այդ չոր ու տաք քամիները հայտնի են *համսին* և *սամում* անուններով:

Աշխարհագրական դիրքի շնորհիվ չորային տարածաշրջանների մեծ մասը տարվա ընթացքում ստանում են 160–200 կկալ/սմ² արեգակնային գումարային ճառագայթում, որը կարևոր ազդակլիմայական ռեսուրս է համարվում և հնարավորություն ստեղծում ջերմասեր մշակաբույսերի աճեցման համար: Այնտեղ, որտեղ քաղցրահամ ջուր կա, զբաղվում են այգեգործությամբ, մշակում բամբակենի, խաղող, նուռ, սեխ, ձմերուկ և արժեքավոր այլ մշակաբույսեր: Չորային շրջաններում քաղցրահամ ջրերի շուրջը մարդածին լանդշաֆտների տեղամասերը հայտնի են *օսգիս* անունով:

Չորային տարածաշրջաններում նախադրյալներ կան արոտային անասնապահության և ռոռգելի երկրագործության զարգացման համար: Վերջինս կիրառվում է հիմնականում այն տարածք-

ներում, որտեղով անցնում են խոշոր գետեր: Նեղոսի, Սիրդարյայի, Ամուդարյայի և Վոլգայի (Ախտուբայի) դելտաներում ու հովիտներում տարածված է բանջարանոցային մշակաբույսերի, բրնձի ու բամբակենու, տեղ-տեղ՝ խաղողի մշակությունը:

Չորային տարածաշրջաններում հայտնաբերվել են օգտակար հանածոների շատ տեսակներ, իրականացվում է նավթի և գազի հանույթ:

Ունենալով բնաաշխարհագրական պայմանների, տնտեսության ճյուղային կառուցվածքի, տեղաբաշխման և տարաբնակեցման համանման գծեր՝ չորային տարածաշրջաններն ունեն նաև որոշակի տարբերություններ: Դրանք պայմանավորված են նրանց աշխարհագրական դիրքով, բնակեցման վաղեմությամբ, տեղական առանձնահատկություններով և, որ ամենակարևորն է, տնտեսության զարգացման մակարդակով:

Երկրագնդի չորային տարածաշրջանների մեջ առանձնանում են **Նեղոսի հովիտը և դելտան**, որոնք գտնվում են Եգիպտոսի տարածքում: Նեղոսի հովտի երկարությունը Եգիպտոսի տարածքում կազմում է մոտ 1200 կմ, միջին լայնությունը՝ 10 կմ: Դելտան ձգվում է հյուսիսից հարավ՝ 175 կմ, արևմուտքից արևելք՝ 220 կմ: Այն աշխարհի ամենախոշոր դելտաներից է և զբաղեցնում է 24 հազ. քկմ մակերես: Եգիպտոսի տարածքի 75%-ից ավելին զբաղեցնում են Լիբիական և Արաբական քարային անապատները, որոնց միջև ընկած է Նեղոսի հովիտը՝ համաշխարհային երկրագործության հնագույն օջախներից մեկը: Եգիպտոսն աշխարհի եզակի երկրներից է, ուր չկան անջրդի երկրագործություն: Ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը

մեծ չէ, ընդամենը 2,7 մլն հա, սակայն շնորհիվ ոռոգման, արեգակնային ջերմության և լույսի առատության՝ այստեղ տարեկան հավաքում են 2–3 բերք:

Եգիպտոսի տարածքում Նեղոսի հովիտը և դելտան ծածկված են ոռոգման ջրանցքների ու ջրամբարների խիտ ցանցով: Ասուանի խոշորագույն ջրամբարը հնարավորություն է տալիս կուտակելու ջրի բազմամյա պաշարներ և ամբողջ տարին կատարելու ոռոգում՝ հաղթահարելով հաճախակի կրկնվող երաշտները: Այս ջրամբարի շնորհիվ Եգիպտոսում ցանքատարածությունների մակերեսն ավելացել է 1/3–ով:

Տարածաշրջանի երկրագործության մեջ աչքի ընկնող տեղ են գրավում հացահատիկային մշակաբույսերը և լոբազգիները, որոնք զբաղեցնում են ցանքատարածությունների ընդհանուր մակերեսի 2/5–ը: Առավել տարածված է եգիպտացորենի մշակությունը, որի արտադրանքը բնակչության ամենօրյա սննդաբաժնի մեջ կազմում է 80 %, իսկ եգիպտացորենի կանաչ զանգվածն օգտագործվում է որպես անասնակեր: Եգիպտացորենն այստեղ մշակվում է անհիշելի ժամանակներից: Այն եգիպտացիների ամենօրյա սննդամթերքն է, նրա թեփն օգտագործվում է որպես անասնակեր, իսկ կավի հետ խառնած ձողոտային զանգվածը գյուղացիների տների պատերի համար ծառայում է որպես շինանյութ:

Բրնձի մշակությունը Նեղոսի հովտում գյուղատնտեսության համեմատաբար երիտասարդ ճյուղն է: Այն պահանջում է ինտենսիվ ոռոգում: Բրինձ մշակում են Նեղոսի դելտայի հարավային շրջաններում: Եգիպտոսի հարավային շրջաններում մշակվում է նաև շաքարեղեգ, որն

օգտագործվում է ոչ միայն շաքարի, այլև տարբեր ըմպելիքների արտադրության համար:

Եգիպտոսի ցանքատարածությունների 10 %-ը կազմում են այգիներն ու բանջարանոցները: Պտղաբուծությունը և բանջարաբուծությունը դաշտային մշակաբույսերի արտադրության համեմատությամբ ավելի ծախսատար ճյուղեր են, ուստի լայն զարգացում չեն ստացել: Աճեցվում են ցիտրուսներ, արմավ, խաղող, բանան, թուզ, ձիթապտուղ: Բանջարանոցային բույսերից ամենաշատը մշակում են սոխ և լոլիկ:

Նեղոսի հովտի և դելտայի գլխավոր տեխնիկական մշակաբույսը երկարաթել բամբակենին է: Տարբեր տարիների այն զբաղեցրել է երկրի ցանքատարածությունների 10–20 %-ը: Եգիպտոսը երկարաթել բամբակի արտադրության գծով աշխարհում գրավում է առաջին տեղը, ընդ որում՝ դրա հիմնական մասն արտահանվում է:

Նախկին ԽՍՀՄ-ի երկրներից չորային են Ղազախստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի տարածքների մեծ մասը: Ռուսաստանում չորային տարածքներ են Կալմիկիայի արևելքը և Աստրախանի մարզի հարավը: Ուզբեկստանի և Թուրքմենստանի տարածքների զգալի մասը Թուրանի հարթավայրի (Կարակում և Կզըլկում անապատների) սահմաններում է և պատված է ավազային ու լյոսա–կավային անապատներով: Այդ տարածքներն ունեն ջերմության և լույսի առատություն, ցամաքային խիստ չոր կլիմա: Երկրագործությամբ կարելի է զբաղվել միայն արհեստական ոռոգման դեպքում: Այդ պատճառով տնտեսական անգնահատելի դեր ունեն Ամուդարյա և Սիրդարյա գետե-

րը, որոնք տալիս են տարածաշրջանի ռոռզման ջրի մեծ մասը և արգավանդ տիղմ (Ամուդարյան ավելի շատ տիղմ է բերում, քան Նեղոսը): Ամուդարյայի և Սիրդարյայի ավազաններում մշակվում է Միջինասիական տարածաշրջանի բամբակենու 95 %-ը, բրնձի 40 %-ը, խաղողի և մրգերի 32 %-ը, բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի 25 %-ը:

Ուզբեկստանում ռոռզելի հողատարածքները կազմում են ավելի քան 4 մլն հա (մեր հանրապետության տարածքից 1,3 անգամ ավելի): Այստեղ ագրարային ոլորտում զբաղված է աշխատող բնակչության մոտ 40 %-ը, որը երեք անգամ ավելի է արդյունաբերությամբ զբաղվածներից: Երկրի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ գլխավոր մասնագիտացման ճյուղին՝ բամբակագործությանը, բաժին է ընկնում 70 %-ը: Բամբակենու մշակության առավել զարգացած շրջաններն են Ֆերգանայի հովիտը, Չիրչիկ, Սիրդարյա, Ջերավշան և Սուլխանդար գետերի հովիտները: Ուզբեկստանի չորային ռոռզելի հողերում տեխնիկական մշակաբույսերից աճեցնում են նաև կենսաֆ (թելատու մշակաբույս) և ծխախոտ:

Հացահատիկայիններից Ուզբեկստանի ռոռզելի հողերում մշակում են բրինձ (Ամուդարյայի ստորին շրջաններում): Ռոռզելի երկրագործության շատ շրջաններում զբաղվում են նաև խաղողագործությամբ և այգեգործությամբ, գերակշռում են ծիրանենին և այլ կորիզավորներ: Ուզբեկստանի չորային (անապատային և կիսաանապատային շրջաններում) տարածքներում անասնաբուծության զարգացած ճյուղերից է կարակուլային

ոչխարաբուծությունը: Ֆերգանայի հովտում տարածված է շերամապահությունը:

Չորային տարածքների յուրացման օրինակ է Կարակումի ջրագուրկ անապատի յուրացումը Թուրքմենստանում: Միջին Ասիայի ոչ մի երկիր այնքան սակավաջուր չէ, որքան Թուրքմենստանը: Ամուդարյան հոսում է նրա հյուսիսարևմտյան սահմանի մոտով: Ոչ բարձր լեռներից սկիզբ առնող Թեջեն և Մուրղաբ գետերը սակավաջուր են, նրանց ջրերն օգտագործում են ռոռզման նպատակով: Անապատային վիթխարի տարածքները գրեթե գուրկ են ջրից: Կասպից ծովի ափին քաղցրահամ ջուր ստանում են ծովաջրից՝ աղազերծման միջոցով: Միաժամանակ, Թուրքմենստանը Միջին Ասիայի ամենատաք ու արևոտ երկիրն է:

Թուրքմենստանի անապատային հողերը ջրարբիացնելու համար 1954 թ. Ամուդարյայից (Կերկիի մոտ) սկսվեց Կարակումի ջրանցքի շինարարությունը: Ներկայումս այդ ջրանցքի երկարությունը 1100 կմ-ից ավելի է, և այն համարվում է աշխարհում խոշորագույն ռոռզիչ ջրանցքներից մեկը: Ջրանցքը հնարավորություն տվեց ռոռզելի դարձնելու Հարավային Թուրքմենստանի հիմնական երկրագործական շրջանները՝ Մուրղաբի և Թեջենի օազիսները և Մերձկուպետդադյան նախալեռնային հարթությունը՝ մոտ 200 հազ. հա տարածք, որի 2/3-ը նախկինում չէր ռոռզվում: Կարակումի ջրանցքով այդ շրջաններին հասցված ջուրը մի քանի անգամ գերազանցում է սովյալ գոտու բնական հոսքի բոլոր աղբյուրներին: Ջրանցքը խողովակաշարով շարունակվում է դեպի Թուրքմենստանի արևմտյան շրջաններ: Այն ունի ոչ միայն ռոռզիչ նշանակություն, այլ նաև հնարավորություն է տալիս ջրարբիացնել-

լու միլիոնավոր հեկտար արոտավայրեր, օգտագործվում է տրանսպորտային նպատակներով և ձկնաբուծական տնտեսության զարգացման համար: Միաժամանակ, ջրանցքի գոտու զգալի տարածքներ ոչ ճիշտ օգտագործման պատճառով ճահճակալել կամ աղակալել են, և պահանջվում է խոր դրենաժավորում:

Թուրքմենստանի ոռոգելի հողերում հիմնական մշակաբույսը բամբակենին է: Եթե նախկինում Թուրքմենստանը բամբակի բերքով 4-րդն էր Միջին Ասիայում, ապա ներկայումս 2-րդն է՝ Ուզբեկստանից հետո:

Թուրքմենստանի չորային շրջանների ոռոգելի հողերում մշակում են նաև կերայիններ (գլխավորապես՝ առվույտ) և ոչ մեծ չափերով հացահատիկայիններ (բրինձ, եգիպտացորեն), զբաղվում են բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Թուրքմենստանի պայմաններում առանձնապես հեռանկարային են բուստանային մշակաբույսերը (հայտնի են Չարջոուի սելսերը) և բարձր շաքարայնության խաղողի մշակությունը: Զարգացած է նաև շերամապահությունը:

Կարակումի և անապատային այլ շրջանների տարածքի ավելի քան 70%-ը ջրաբեխացման դեպքում կարող է օգտագործվել որպես արոտավայր ոչխարաբուծության և ուղտաբուծության զարգացման համար:

Չորային հսկայական տարածքներ կան նաև Ղազախստանում (անապատներ և կիսաանապատներ):

Երկրագնդի չորային տարածաշրջաններն առանձնանում են նաև բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման բնույթով: Բնակչությունը տեղաբաշխված է հիմնականում օազիսներում, որոնք

տարածվում են գետահովիտների երկայնքով, միջլեռնային գոգավորություններում և ստորերկրյա ջրերի ելքերի շրջաններում: Միաժամանակ, անապատների վիթխարի տարածություններ բնակեցված չեն: Տարաբնակեցման այսպիսի տիպն անվանում են **օազիսային**: Եգիպտոսի բնակչության գրեթե 99%-ը տեղաբաշխված է Նեղոսի հովտում և դելտայում, օազիսներում ու Սուեզի ջրանցքի գոտում, որոնք միասին կազմում են երկրի ամբողջ տարածքի 4%-ից ոչ ավելին: Այդ շրջաններում բնակչության խտությունը հասնում է 1700 մարդ/քկմ: Նեղոսի դելտան երկրագնդի առավել խտաբնակ շրջաններից է, իսկ Լիբիական և Արաբական անապատների տասնյակ հազարավոր քառակուսի կիլոմետր տարածքներ շատ նոսր են բնակեցված, խտությունը չի անցնում 1 մարդ/քկմ:

Աֆրիկայի և Ասիայի անապատային շրջաններում դեռևս պահպանվում է քոչվորային ապրելակերպը:

Հայկական լեռնաշխարհի առանձին տարածքներ ևս կարելի է համարել չորային, որոնք յուրացվել են հազարամյակներ առաջ («Հայոց պատմություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաներից վերհիշե՛ք Հայաստան աշխարհում ոռոգելի երկրագործական մշակույթի ձևավորման օջախները: Որսե՛ղ և ի՛նչ ջրանցքներ են կառուցվել): ՀՀ ամենաընդարձակ չորային տարածաշրջանը Արարատյան դաշտն է: Չնայած չոր մերձարևադարձային կլիմայական պայմաններին՝ այն հարյուրամյակներ շարունակ եղել է խաղողագործության, այգեգործության, հացահատիկայինների և բամբակի մշակության հիմնական շրջաններից մեկը Հայաստան աշխարհում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնակլիմայական ի՞նչ առանձնահատկություններ ունեն չորային (արիդ) երկրներն ու տարածաշրջանները:
2. Աշխարհագրության նախորդ դասարանների դասընթացներից վերհիշե՛ք, թե ինչ տարածում ունեն անապատային և կիսաանապատային տարածքները երկրագնդի վրա:
3. Աշխարհագրական ո՞ր գոտիներում և ո՞ր երկրներում ու տարածաշրջաններում են առավելապես տարածված չորային շրջանները:
4. Ի՞նչ ռեսուրսներով են հարուստ չորային տարածաշրջանները: Տնտեսության ո՞ր ճյուղերի զարգացման համար կարող են օգտագործվել դրանք:
5. Դասակարգում բերված օրինակներից բացի, չորային տարածաշրջանների յուրացման ի՞նչ օրինակներ կարող եք բերել:
6. ՀՀ տարածքում ո՞ր տարածաշրջանները կարելի է համարել չորային. գյուղատնտեսության ո՞ր ճյուղերն են զարգացած այնտեղ:
7. Ուրվագծային քարտեզի վրա նշե՛ք երկրագնդի անապատային տարածքները՝ օգտվելով դասակարգում տրված աղյուսակից:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՍՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

§ 6

Միջազգային տնտեսական միասնացումը (ինտեգրումը) ժամանակակից համաշխարհային տնտեսության բնորոշիչներից է: XX դարի վերջին և XXI դարի սկզբին այն դարձել է առանձին տարածաշրջանների տնտեսությունների սրընթաց զարգացման և մրցունակության բարձրացման հիմնական ուղղությունը:

Միջազգային տնտեսական միասնացումը հարևան պետությունների տնտեսությունների (այդ երկրների ընկերությունների միջև առկա կայուն կապերի հիման վրա) միաձուլումն է միասնական տնտեսական համալիրի

մեջ, որը հիմնված է միջպետական քաղաքական և տնտեսական համաձայնեցված, շարունակական գործընթացների վրա: Առանձին տարածաշրջանների տնտեսությունների միասնացումը ապագա համամոլորակային միասնացման սկիզբն է համարվում:

Տնտեսական և քաղաքական տարածաշրջանային միասնացման գործընթացների աշխարհագրությունը լայն է ու բազմազան և ընդգրկում է գրեթե ողջ երկրագունդը: Աշխարհի քաղաքական քարտեզում չկա մի պետություն, որն այս կամ այն չափով ընդգրկված չլինի տարածաշրջանային գործընթացներում:

Դրանք առավել ամբողջական բնույթ են կրել Արևմտյան Եվրոպայում: Երկրագնդի այլ տարածաշրջաններում տարբեր ուղղություններով ընթացող տնտեսական և քաղաքական միասնացման գործընթացների (օրինակ՝ ԱՄԵՆ-ը, Արաբական պետությունների լիգան կամ Լատինամերիկյան ինտեգրման ասոցիացիան և այլն) ձևավորումն ընթացել է Արևմտյան Եվրոպայի միասնացման մոդելով:

Եվրոպական միասնացման պատմական նախադրյալները: Արևմտաեվրոպական քաղաքակրթության ձևավորումը պայմանավորված է հունահռոմեական անտիկ մշակութային ժառանգության երկարատև և խորքային ազդեցությամբ: Կենտրոնական և Հյուսիսային Եվրոպայի բարբարոս ցեղերը դարեր շարունակ Հին Հունաստանի և Հռոմի քաղաքական ու մշակութային ազդեցության տակ գտնվող Հարավային Եվրոպայի դեմ մղած պատերազմների ընթացքում ենթարկվել են մշակութային ներգործության, ժողովուրդների միաձուլման և այլ ազդեցությունների:

Հին Հռոմի կործանմանը հաջորդել է արևմտաեվրոպական «քաղաքակրթական խավարի» շուրջ վեց դար: Սակայն պարզվել է, որ հարուստ Բյուզանդիայից հեռու՝ ավերված Արևմտյան Եվրոպայի քաղաքակրթական շերտերում, պահպանվել էր գիտելիքների, տեխնոլոգիաների ու մշակույթի որոշակի ծավալ: Այն հնարավորություն ստեղծեց, վերականգնելով կապը կործանված քաղաքակրթության հետ, սկսելու դժվարին առաջընթացը: Դրան նպաստել են նաև քրիստոնեության երկու ճյուղերի՝ կաթոլիկության և բողոքականության արժե-

համակարգերի տարածումը Եվրոպայի ժողովուրդների մեջ և դրանց ձևավորած համակեցության կանոնները:

Ավատատիրությունն իր հերթին տնտեսական, սոցիալական և բարոյական նոր հարաբերություններ է ստեղծել արաբների, վիկինգների և Արևելքի քոչվոր ցեղերի կողմից ասպատակությունների ենթարկված Եվրոպայում: Ավատատիրության խորքում են ձևավորվել ժամանակակից եվրոպական հիմնարար արժեքներ համարվող՝ **օրենքի գերակայության, օրենքի առաջ մարդկանց հավասարության և մարդու իրավունքների իրավական պաշտպանության սահմանները:** Միջնադարյան քաղաքներում է սկիզբ դրվել **նորարարության և բարեխիղճ աշխատանքի մշակույթին, որն էլ հանգեցրել է որակյալ աշխատանքի ու ապրանքների արևմտաեվրոպական պաշտամունքի ձևավորմանը:** XV դարում Արևմտյան Եվրոպայի գյուղատնտեսության վարման արտադրողական եղանակը հաստատեց իր առավելությունները: Գյուղատնտեսական տեխնոլոգիաների հետագա զարգացումն արդեն XVIII դարում նպաստեց կերային մշակաբույսերի ցանքերի ավելացմանը, որը հանգեցրեց անասնազխաքանակի կտրուկ աճին: Գյուղատնտեսական նմանատիպ հեղափոխությունները ոչ միայն քաղաքային բնակչությանը լիարժեք ապահովեցին պարենով, այլև գյուղատնտեսությամբ զբաղված աշխատուժի աստիճանական կրճատման պատճառ դարձան: Արևմտաեվրոպական քաղաքակրթության զարգացման գլխավոր խթանը **արդյունաբերական կապիտալիզմի** ձևավորումն է, որին նպաստել են նաև **ռեֆորմացիան և քրիստոնեա-**



Եվրախորհրդի նստավայրը Բրյուսելում

կան–բողոքական բարոյական նորմերի լայն տարածումը:

XVII դարի փիլիսոփայական գրականության մեջ մշակվեց **քաղաքացիական հասարակության** հայեցակարգը՝ որպես անձի ազատության և մարդկանց միջև հավասարության կատարյալ ձև: Հետագայում այդ հայեցակարգը զարգացավ և հասարակական համակեցության նոր հարաբերությունների հիմքը դարձավ: Կապիտալիզմի բուռն զարգացումը հանգեցրեց դասակարգային անհավասարության և սոցիալական ընդվզումների: Դրանք արևմտաեվրոպական երկրներին տարան պետական հաստատությունների, կապիտալիստների ու արհեստակցական միությունների և հասարակության մյուս ներկայացուցիչների միջև գիտակցված իրավահարաբերություն-

ների կառուցման ճանապարհով՝ հիմք ընդունելով ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլ հիմնարար արժեքներ: Պատմական վերնուշյալ գործընթացները հիմք դարձան ժամանակակից Արևմտյան Եվրոպայի երկրների միջև նոր հարաբերությունների հաստատման համար:

Տնտեսական և քաղաքական միասնացումը Արևմտյան Եվրոպայում: Տնտեսական և քաղաքական միասնացման հիմքը Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայում պատերազմների կրկնության բացառմանն ուղղված գործողություններն էին, որոնց կենսագործմանը նպաստեցին ոչ միայն միջպետական համաձայնագրերը, այլև հետպատերազմյան Եվրոպայում առկա տնտեսական, տեխնոլոգիական ներուժը:

Միասնական Եվրոպայի «կառուցման» գործընթացի սկիզբը համարվում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռ. Շումանի և ֆրանսիացի տնտեսագետ ու քաղաքագետ Ժ. Մոնեի կողմից մշակված ծրագրի հիման վրա Ֆրանսիայի և Գերմանիայի աժխի ու պողպատի արդյունաբերության միավորումը: Ծրագիրը (ընդունվել է 1950 թ. մայիսի 9-ին) ենթադրում էր այդ կազմակերպության շրջանակում աժխի և պողպատի մշակման համակարգում, որին կարող էր միանալ ցանկացած եվրոպական երկիր: Այս ծրագիրը եվրոպական երկրներում տարածանություններ առաջացրեց. Գերմանիան դեռևս ընկալվում էր որպես պատերազմի սպառնալիք: Այդ սպառնալիքը լիովին չեզոքացնելու նպատակով Ռ. Շումանը առաջարկում էր Գերմանիան քաղաքականապես և տնտեսապես կապել եվրոպական պետությունների կայուն խմբավորման հետ: 1951 թ. ստորագրվեց «Քարածխի և պողպատի եվրոպական համայնք» ստեղծելու, Շումանի ծրագիրը, որի մեջ մտան Ֆրանսիան, Իտալիան, Արևմտյան Գերմանիան, Բելգիան, Նիդերլանդները և Լյուքսեմբուրգը: Սա ապագա եվրոպական միասնացման՝ Եվրոպական միության ստեղծման առաջին քայլն էր: Այս գործընթացին մասնակցել է նաև ԱՄՆ-ը, որը 1948 թ-ից Արևմտյան Եվրոպայի տնտեսության վերակառուցման ուղղությամբ խոշորածավալ ծրագրեր էր իրականացրել: Եվրոպական աժխի և պողպատի համայնքի անդամ վեց պետությունները 1958 թ. հունվարի 1-ին հիմնադրեցին երկու նոր կազմակերպություն՝ «Ատոմային էներգիայի եվրոպական համագործակցությունը» և «Եվրոպական տնտեսական համագործակցությունը» (ԵՏՀ): Վերջինիս

հիման վրա 1992-ի պայմանագրով ստեղծվեց Եվրոպական միությունը (ԵՄ):

ԵՏՀ զարգացումը պայմանականորեն բաժանում են մի քանի փուլերի:


Առաջին փուլը (1950-ական թթ. վերջից 1970-ական թթ. կեսեր) Եվրոպական համագործակցության կյանքում համարվում է «ոսկեդար»: Այն նշանավորվում է Եվրոպական մաքսային միության ստեղծմամբ, միասնական ագրարային շուկայի ձևավորմամբ ու Մեծ Բրիտանիայի, Դանիայի և Իռլանդիայի անդամակցությամբ:

Եվրոպական տնտեսական համագործակցության նպատակներն էին.

- ▶ մասնակից երկրների միջև առևտրի բոլոր սահմանափակումների վերացումը,
- ▶ երրորդ երկրների հետ առևտրի ընդհանուր մաքսային տուրքերի սահմանումը,
- ▶ «մարդկանց, կապիտալի և ծառայությունների» ազատ տեղաշարժի սահմանափակումների վերացումը,
- ▶ տրանսպորտի և գյուղատնտեսության ոլորտներում ընդհանուր քաղաքականության մշակումը և իրականացումը,
- ▶ միասնական տարադրամի միության ստեղծումը,
- ▶ հարկային համակարգի միասնականացումը,
- ▶ անդամ երկրների օրենսդրությունների մերձեցումը,
- ▶ փոխհամաձայնեցված տնտեսական քաղաքականության սկզբունքների մշակումը:

Այս նպատակների իրագործման համար ստեղծվեց համալիր կառավարման կառույց, որի մեջ մտնում էին ԵՏՀ նա-

ԵՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



խարարների խորհուրդը, Եվրահանձնաժողովը, Եվրոպական խորհուրդը, Եվրոպական դատարանը և Եվրախորհրդարանը:

ԵՏՀ-ն առաջնային նպատակ հռչակեց կազմակերպության անդամ երկրների համար կապիտալի, ապրանքների, ծառայությունների և աշխատուժի միասնական շուկայի ձևավորումը: Այս նպատակով ստեղծվեց Մաքսային միությունը:

- ▶ Մաքսային միության շրջանակում՝
- ▶ վերացվել են ԵՏՀ անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի բոլոր սահմանափակումները,
- ▶ սահմանվել է երրորդ երկրների հետ առևտրի միասնական մաքսատուրք,
- ▶ հաստատվել է կապիտալի, վարկերի, դրամական փոխանցումների, մատուցվող ծառայությունների ազատություն,

- ▶ ապահովվել են աշխատուժի ազատ տեղաշարժը և բնակության վայրի ազատ ընտրությունը:

Այս բոլոր միջոցառումները նպաստեցին արդյունաբերության միասնացմանը, նրա ճյուղային և տարածքային միավորների ձևավորմանը:

ԵՏՀ ագրարային քաղաքականությունը հիմնվում էր գնային միասնական համակարգի ձևավորման վրա, որը երաշխավորում էր անդամ երկրներում գյուղատնտեսական շատ մթերքների միասնական նվազագույն գնի սահմանումը:

Ընդհանուր շուկայի ձևավորումը արագացրեց ԵՏՀ անդամ երկրների ազգային մոնոպոլիաների վերափոխումը վերագալիսի: ԵՏՀ զարգացումը հանգեցրեց անդամ երկրների «փակ» ազգային տնտեսությունների վերափոխմանը արտաքին

շուկային միտված միասնական տնտեսական համակարգի:

Եվրամիության ձևավորման **երկրորդ փուլը** (1970–ական թթ. կեսերից մինչև 1980–ական թթ. կեսերը) համարվում է լճացման շրջան, որը ժամանակավորապես կասեցրեց եվրոպական ընտանիքի ընդլայնումը: Խորացավ Եվրոպական համագործակցության երկրների ազգային տնտեսությունների զարգացման տեմպերի անհամամասնությունը: Դրա օրինակ է 1981 թ. տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող Հունաստանի անդամակցությունը ԵՏՀ–ին:

Եվրահամագործակցության երկրներն ընդունեցին եվրոպական տարադրամային համագործակցության ծրագիրը, արտաքին քաղաքականության հարցերում ձևավորեցին փոխհամաձայնեցված գործողությունների մեխանիզմ:

Չնայած եվրահամայնքի երկրների միջև մաքսատուրքերը վերացվել էին դեռ 1968 թ–ին, ապրանքաշրջանառությունը լիովին ազատ չէր, և ազգային օրենսդրություններում, այս խնդրի հետ կապված, առկա էին տարբեր մոտեցումներ: Դրանց հաղթահարմանը նպաստեց 1987 թ. ուժի մեջ մտած «Միասնական եվրոպական ակտը», որը, լինելով վեցամյա ծրագիր, միասնական առևտրի և միասնական շուկայի ձևավորման գործընթացի իրավական հիմքն էր ապահովում:

Երրորդ փուլը (1980–ական թթ. երկրորդ կեսից մինչև 1990–ական թթ. սկիզբ) նշանավորվեց Եվրոպական համագործակցության հետագա ընդլայնմամբ: 1986–ին Իսպանիայի և Պորտուգալիայի անդամակցությունը նույնպես բացասաբար ազդեց տնտեսության զարգացման վրա, քանի որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ի

բաժնով այդ երկրները գրեթե կրկնակի զիջում էին ԵՏՀ անդամ մյուս երկրներին: «Միասնական եվրոպական ակտով» ամրագրվել էր նաև ԵՏՀ հիման վրա Եվրամիության ստեղծումը:

Եվրոպական համագործակցության զարգացման **չորրորդ փուլը** (1990–ական թթ. կեսերից XXI դ. սկիզբ) նշանավորվեց միասնական տնտեսական տարածքի ձևավորմամբ և արդեն ԵՏՀ անդամ 15 երկրների կողմից **Եվրոպական միության** ստեղծման վերաբերյալ պայմանագրի ստորագրմամբ (Մասստրիխտ, 1992 թ.): Սա եվրոպական տնտեսական միասնացման որակապես նոր փուլ է: **ԵՄ–ը Եվրոպական համագործակցության անդամ երկրների քաղաքական դաշինք է, որը նախատեսում է ոչ միայն միջպետական տնտեսական, ֆինանսավարկային, հումանիտար բարձր մակարդակի համագործակցություն, այլև արտաքին քաղաքականության, անվտանգության ապահովման խնդիրների փոխհամաձայնեցում:**


ԵՄ ներսում ստեղծվեց Եվրոպական միասնական բանկ, և ներդրվեց միասնական տարադրամ` **եվրո**: Ձևավորվեց միասնական եվրոպական տարածք՝ առանց ներքին սահմանների: ԵՄ շարունակական զարգացումն ու ընդլայնումը այսօր էլ ընթանում են բազմաթիվ ներքին հիմնախնդիրների պայմաններում, որոնք առավել սրվում են նոր երկրների անդամակցության պարագայում: Վերջիններիս տնտեսական, քաղաքական համակարգերի տարբերությունները, զարգացման մակարդակը որոշակիորեն արգելակում են ԵՄ զարգացման տեմպերը: Այնուամենայնիվ, անդամ երկրների համար ԵՄ–ն դարձել է համաշխարհային շուկայում



Քարտեզ 5. Եվրամիություն

մրցունակ տնտեսություն ունենալու միակ հեռանկարը:

Հայաստանի անկախացումից հետո խորանում են ԵՄ և Հայաստանի միջև տնտեսական ու քաղաքական փոխհարաբերությունները: 1991 թ-ից ի վեր տարբեր ծրագրերով մեր երկրին տրամադրվել է շուրջ 700 մլն եվրո օժանդակություն: Այսօր ԵՄ-ն Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերն է, 2008 թ. ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության 35,3 %-ը (1698 մլն դոլար) բաժին է ընկնում ԵՄ-ին (գծ. 3):



Գծ. 3. ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 2017 թ.

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 2009 թ. մարտից ընդունված՝ ԵՄ Արևելյան գործընկերության նոր ծրագրին, որին անդամակցում են նաև ԱՊՀ վեց երկրներ (*քարտեզ 5*): Սա Եվրամիություն–Արևելք միասնացման գործընթացների ընդլայնման հեռա-

նկարային ծրագիր է: 2017 թ. Հայաստանի և ԵՄ միջև ստորագրվեց համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որը ևս մեկ քայլ է ՀՀ–Եվրամիության համագործակցության ընդլայնման գործընթացում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է միջազգային տնտեսական ու քաղաքական միասնացումը: Ինչո՞վ են պայմանավորված պետությունների՝ տարբեր ուղղություններով միասնացման գործընթացները:
2. Որո՞նք են ժամանակակից արևմտաեվրոպական քաղաքակրթության ձևավորման սոցիալական պայմանները:
3. Ժամանակակից եվրոպական ի՞նչ հիմնարար արժեքներ ձևավորվեցին ավատատիրության խորքում:
4. Ի՞նչ նշանակություն ունեցան արևմտաեվրոպական քաղաքակրթության զարգացման գործում արդյունաբերական կապիտալիզմը, ռեֆորմացիան և քրիստոնեական–բողոքական բարոյական նորմերի տարածումը:
5. Երկրորդ աշխարհամարտից հետո ի՞նչ գործընթացներ նպաստեցին եվրոպական միասնացմանը:
6. Ի՞նչ նշանակություն ունեցան արևմտաեվրոպական քաղաքակրթության զարգացման գործում արդյունաբերական կապիտալիզմը, ռեֆորմացիան և քրիստոնեական–բողոքական բարոյական նորմերի տարածումը:
7. Տարածաշրջանային միասնացման ի՞նչ նպատակներ է հետապնդում Եվրոպական միությունը:
8. Ինչպիսի՞ն է համագործակցությունը ՀՀ և ԵՄ միջև. փորձե՞ք կանխատեսել դրա ապագան:

§ 7

ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲՆԱՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՄԵԾ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՅՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ


Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) բնական ռեսուրսներով աշխարհի հարուստ երկրներից է: Բնական ռեսուրսների առանձին տեսակների քանակական և որակական պաշարների հետախուզումն ու գնահատումը Ռուսաստանում դեռևս շարունակվում են: ՌԴ-ն աշխարհում հայտնի է հանքահումքային, հողային, ջրային, անտառային և այլ ռեսուրսների մեծ ներուժով: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են **տարածքային գործոնը, տարածքի ձևավորման երկրաբանական առանձնահատկու-**

թյունները, բնակլիմայական պայմանների բազմազանությունը:

Բնառեսուրսային ներուժը տվյալ տարածքի տնտեսական զարգացման հիմքը կազմող բնական ռեսուրսների առանձին տեսակների ներուժի հանրագումարն է: Այն բնութագրում է բնական ռեսուրսների տեղաբաշխումը, դրանցով տնտեսության տարբեր ճյուղերի ապահովվածությունը և բնական ռեսուրսների ազդեցությունը տնտեսության մասնագիտացման ու տարածքային կազմակերպման վրա:



Նավթի հանքավայր Արևմտյան Սիբիրում



Գծ. 4. Ռուսաստանի Դաշնության հողային ֆոնդը

Ռ-Դ ընդերքի համախառն արժեքը գնահատվում է 28 տրլն դոլար (այդ թվում՝ բնական գազի բաժինը կազմում է 32 %, ածխինը՝ 23 %, նավթինը՝ 16 %, մետաղային հանքանյութինը՝ 14 %)։ Ռ-Դ բնառեսուրսային ներուժը շատ մեծ է։ Սակայն բնական ռեսուրսների՝ գերազանցապես Ուրալից արևելք բաշխվածությունը, օգտագործման գլխավոր շրջաններից, ծովային նավահանգիստներից կտրվածությունը, բնական խիստ պայմանները մեծ դժվարություններ են առաջացնում այդ ռեսուրսների յուրացման գործընթացում։

Արդյունքում՝ ռեսուրսների տարբեր տեսակների պաշարների 1/3-ից 2/3-ը ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում գնահատվում է ոչ եկամտաբեր։ Ռ-Դ բնական ռեսուրսների ընդհանուր ծավալի ընդամենը 25 %-ն է յուրացվում։

Ռ-Դ-ն իր բնական ռեսուրսների գնահատված պաշարներով 3,8 անգամ գերազանցում է ԱՄՆ-ին և 4,5 անգամ՝ Չինաստանին։

Ռ-Դ-ն անգերազանցելի է հիմնական բնական ռեսուրսի անփոխարինելի տեսակ հանդիսացող **տարածքով**, որն ընդգրկում է երկրագնդի ցամաքային տարածքի շուրջ 12 %-ը (17,4 մլն կմ²) և բնառեսուրսային բազմազանության ու մեծ ներուժի գլխավոր պատճառն է։ Տարածքի մեծությամբ է պայմանավորված Ռ-Դ հարուստ **հողային ֆոնդը**։ Այն կազմում է 1709,8 մլն հա։

Ռ-Դ հողային ֆոնդի կառուցվածքը առանձնահատուկ է. գերիշխում են անտառային հողերը, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են հողային ֆոնդի 23,6 %-ը (գծ. 4)։ Հողային ֆոնդի նմանատիպ կառուցվածքը պայմանավորված է խիստ բնակլիմայական գործոններով, հատկապես՝ Ռ-Դ տարածքի մեծ մասի բարեխառն ցամաքային և խիստ ցամաքային կլիմայական պայմաններով։ Գյուղատնտեսական նշանակության հողերը ջրային և հողմնային էրոզիայի, ճահճացման, անտառների և թփուտների բնական ընդարձակման


հետևանքով վերջին 25 տարիների ընթացքում կրճատվել են շուրջ 35 մլն հեկտարով: Վերջին տվյալներով՝ ակտիվ էրոզիայի ենթարկվող հողահանդակների տարածքը գերազանցում է 50 մլն հեկտարը:

Ռ-Դ հողերի 1100 մլն հեկտարը հավերժական սառցույթի գոտում է: Ռ-Դ-ում հողերի վատթարացմանը նպաստում է նաև օգտակար հանածոների ստորգետնյա և հատկապես մեծածավալ բաց հանույթը:

Ռ-Դ տարածքի տարբեր մասերի՝ պլատֆորմների և գետահնկլիխալների երկրաբանական զարգացման առանձնահատկությունները պայմանավորել են վառելիքային, մետաղական և ոչմետաղական հանքային հումքի մի շարք տեսակների համաշխարհային նշանակության պաշարների առաջացումը: Այստեղ հետախուզված հանքավայրերի թիվը մոտ 20 հազ. է, որոնց 37%-ը շահագործվում է: Խոշոր ու եզակի հանքավայրերում (ընդհանուր թվի 5%-ը) կուտակված է հետախուզված պաշարների մոտ 70%-ը, այդ հանքավայրերից է արդյունահանվում հանքային հումքի 50%-ը: Նավթի համաշխարհային պաշարների Ռ-Դ բաժինը կազմում է 12%, բնական գազինը՝ 32%, ածխինը՝ 16%, երկաթինը՝ 17%, կապարինը՝ 10%, ցինկինը՝ 15%, կալիումական աղինը՝ 31%: Նիկելի, ոսկու, արծաթի, ալմաստի և մի քանի այլ օգտակար հանածոների պաշարներով Ռ-Դ-ն զբաղեցնում է աշխարհում առաջինից երրորդ տեղերը:

Ռ-Դ-ն առանձնանում է գազի հետախուզված պաշարներով (50 տրլն մ³): Ավելի քան 1 տրլն մ³ պաշարներ ունեցող 20 հանքավայրերից 9-ը Ռ-Դ-ում է: Աշխարհում ամենախոշոր՝ Ուրենգոյի

(10,2 տրլն մ³), ինչպես նաև Յամբուրգի, Ջապոլյարնիի, Մեդվեժիեի հանքավայրերը Արևմտասիբիրական նավթագազաբեր շրջանում են (գծ. 5):



Գծ. 5. Վառելիքաէներգետիկ պաշարները

Չնայած երկաթաքարի արդյունահանման տեմպերով Ռ-Դ-ն զիջում է մի շարք երկրների, բայց երկաթի հետախուզված պաշարներով առաջատարն է, իսկ հանքաքարում երկաթի միջին պարունակությամբ (36%) զգալի զիջում է պաշարներով համապատասխանաբար երկրորդ և երրորդ տեղը զբաղեցնող Բրազիլիային (58%) և Ավստրալիային (62%): Երկաթաքարի պաշարների 55%-ը գտնվում է մեկ հանքավայրում՝ Կուրսկի մագնիսական անոմալիայում: Ռուսաստանը առանձնանում է նաև



Քարտեզ 6. Ջրային ռեսուրսների օգտագործման ինտենսիվությունը


գունավոր ու հազվագյուտ մետաղների պաշարներով: Մետաղների արդյունահանման և սպառման համաշխարհային գործընթացում ՌԴ-ն իր ուրույն տեղն է զբաղեցնում ու առանձնանում անընդհատ աճող ծավալներով (*հավելված 2*):

Ռուսաստանի բնական ռեսուրսների շարքում կարևոր նշանակություն ունեն **քաղցրահամ ջրի պաշարները (4300 կմ³)**, որոնցով զիջում է միայն Բրազիլիային (6950 կմ³):

Ռուսաստանում գետերի միագումար հոսքը կազմում է 4,2 կմ³/տարի, մեկ մարդու հաշվարկով գետային հոսքի ծավալը կազմում է 29 մ³/տարի, որն աշխարհում բավականին բարձր ցուցանիշ է:

ՌԴ-ում 1990-ական թվականների երկրորդ կեսին, տնտեսական ճգնաժամով պայմանավորված, քաղցրահամ

ջրի օգտագործումը տնտեսական գործունեության մեջ և կենցաղում որոշակիորեն նվազել է և 2000 թ. կազմել ընդամենը 85 կմ³: Այս ցուցանիշը 2009 թ. դրությամբ լուրջ փոփոխություն չի կրել (*քարտեզ 6*): ՌԴ-ում օգտագործվող ջրի 56%-ը ծախսվում է արդյունաբերության կողմից, 21%-ը՝ կենցաղային և խմելու նպատակներով, 17%-ը՝ ոռոգման և գյուղատնտեսության ջրամատակարարման, 6%-ը՝ այլ կարիքների համար: Արդյունքում՝ Ռուսաստանում օգտագործվում է գետային հոսքի միջոցով տարեկան ձևավորվող քաղցրահամ ջրային պաշարների ընդամենը 2%-ը: Սա միջինացված ցուցանիշ է և առանձին գետավազաններում հասնում է 50-75%-ի: Կենտրոնական, Կենտրոնական սևահողային և Պովոլժիեի շրջաններում մեկ



Քարտեզ 7. Ռ-Դ անտառապատվածությունը

շնչի ջրապահովվածությունը կազմում է 3000–4000 մ³/տարի, իսկ Հեռավոր Արևելքում՝ 300 հազ. մ³:

Ռուսաստանը տիրապետում է ջրաէներգետիկ շատ մեծ ռեսուրսների: Նրան բաժին է ընկնում երկրագնդի ջրաէներգետիկ պաշարների 9 %-ը: Ռ-Դ ջրաէներգետիկ ներուժը տեսականորեն գնահատվում է 2900 մլրդ կվտ․ժ: Սակայն Ռ-Դ ջրաէներգետիկ ռեսուրսները խիստ անհավասարաչափ են տեղաբաշխված. Ռ-Դ եվրոպական մասին բաժին է ընկնում ջրաէներգետիկ ռեսուրսների 15 %-ը, իսկ ասիական մասին՝ 85 %-ը: Ռ-Դ ջրաէներգետիկ ռեսուրսներից յուրացված է ընդամենը 18 %-ը (եվրոպական մասում՝ 50 %-ը, Սիբիրում՝ 19 %-ը, Հեռավոր Արևելքում՝ 4 %-ը):

Ռ-Դ **բնակլիմայական պայմանների** բազմազանությամբ են պայմանավորված նաև անտառային համաշխարհային նշանակության ռեսուրսները: Սա անտառային ռեսուրսներով ամենահարուստ երկիրն է աշխարհում (*զժ. 6*): Ռուսաստանի անտառները կազմում են աշխարհի անտառածածկ տարածքների 22,1 %-ը (*քարտեզ 7*): Ռուսաստանի անտառապատվածությունը մեծ է և կազմում է 8149 հազ. կմ² կամ երկրի ողջ տարածքի 46,8 %-ը:


Ռ-Դ-ում անտառներն, ըստ տնտեսական նշանակության և գործառույթային առանձնահատկությունների, բաժանվում են երեք խմբի: *Առաջին խմբին* են պատկանում ջրապաշտպան, սանիտարահիգիենիկ, ռեկրեացիոն գործառույթներ իրականացնող անտառները, *երկ-*

րորդ խմբին՝ խտաբնակ տարածքների անտառները, որոնք ունեն բնապահպան նշանակություն և ենթակա են սահմանափակ շահագործման: *Երրորդ խմբին* են պատկանում միայն տնտեսական շահագործման նպատակով առանձնացված խիտ անտառները:

Ռ-Դ անտառափայտի պաշարները 82 մլրդ մ³ են, 1 հա-ի միջին պաշարը կազմում է շուրջ 150 մ³: Անտառափայտի բնական հավելաճը կազմում է մոտ 867 մլն մ³, որից անտառապատ տարածքների յուրաքանչյուր հեկտարին բաժին է ընկնում մոտ 1,33 մ³: Անտառափայտի պաշարներով Ռ-Դ-ն զիջում է միայն Լատինական Ամերիկային, իսկ մեկ շնչին ընկնող ցու-

ցանիշներով՝ Կանադային: Ռուսաստանի անտառապատվածությունը անհավասարաչափ է. անտառապատ տարածքի 9/10-ը ընկած է տայգայի զոնայում՝ հատկապես Արևելյան Սիբիրում և Հեռավոր Արևելքում:

Ռուսաստանը աշխարհում առանձնաևնում է երկրաջերմային էներգետիկ հարուստ պաշարներով, որոնք հանդիպում են հին և երիտասարդ գետինկլիինալների տարածման շրջաններում (Հեռավոր Արևելք): Երկիրը հարուստ է նաև քամու մակընթացային էներգիայի ռեսուրսներով: Դրանց ներուժի գնահատումները նախնական են, իսկ օգտագործումը՝ աննշան:



Գծ. 6. Անտառապատ տարածքների մեծությամբ աշխարհի առաջատար 10 երկրները

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գործոններով է պայմանավորված ՌԴ բնական ռեսուրսների որոշ տեսակների մեծ ներուժը:
2. Ինչո՞ւ է ՌԴ-ն համարվում հողային ռեսուրսներով աշխարհի ամենահարուստ երկիրը: Ինչպիսի՞ն է ՌԴ հողային ֆոնդի կառուցվածքը:
3. Ի՞նչ հանքահումքային ռեսուրսների պաշարներով է ՌԴ-ն առաջատար աշխարհում:
4. Բնութագրե՛ք ՌԴ քաղցրահամ ջրի պաշարները և ջրօգտագործման կառուցվածքը: Ի՞նչ հեռանկարային ուղղություններով կարող են օգտագործել ՌԴ ջրային ռեսուրսները:
5. Ինչպիսի՞ վերականգնվող էներգետիկ ռեսուրսային ներուժ ունի ՌԴ-ն:
6. Ի՞նչ նշանակություն ունեն ՌԴ անտառային ռեսուրսները երկրագնդի համար:

§ 8

ԱՄՆ-Ը ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿԻՐ

Ամերիկայի Միացյալ Նահանգները «Մեծ ությակի» երկրներից է և աշխարհում քաղաքական ու տնտեսական կարևոր դերակատարում ունեցող երկիր: Տարածքի մեծությամբ (9,4 մլն քկմ) այն աշխարհի չորրորդ պետությունն է (ՌԴ-ից, Կանադայից և Չինաստանից հետո), բնակչության թվով (326 մլն մարդ)՝ երրորդը (Չինաստանից և Հնդկաստանից հետո):

Ըստ պետական կարգի՝ ԱՄՆ-ը դաշնային նախագահական հանրապետություն է՝ բաղկացած 50 նահանգներից և Կոլումբիա դաշնային օկրուգից, որտեղ մայրաքաղաք Վաշինգտոնն է: ԱՄՆ-ի նահանգներն ունեն լայն ինքնավարություն, յուրաքանչյուրն ունի իր սահմանադրությունը, օրենսդիր և գործադիր մարմինները:

ԱՄՆ-ը գաղութատեր պետություն է: Նրա տիրապետություններն են Պուերտո Ռիկոն և Վիրջինյան կղզիները՝ Կարիբյան ծովում, Արևելյան Սամոան, Գուամը և մի շարք փոքր կղզիներ Խաղաղ օվկիանոսում: Այդ տարածքներում տեղաբաշխված են ռազմածովային և ռազմաօդային հենակետեր:

Գեռևս XIX դարի վերջերին ԱՄՆ-ը, գերազանցելով Մեծ Բրիտանիային, **դարձավ կապիտալիզմի գլխավոր կենտրոնն աշխարհում**: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը դարձավ համաշխարհային բանկիր, իսկ միջազգային վճարումներում ֆունտ ստեռլինգին փոխարինեց ԱՄՆ դոլարը:

ԱՄՆ տնտեսական զարգացմանը նպաստել են բարենպաստ աշխարհագրական դիրքը, հարուստ և բազմատեսակ բնական ռեսուրսները, բնակչության բարձր կրթական մակարդակը, աշխատունակ բնակչության, հատկապես «ուղեղների» զանգվածային ներգաղթը, ազատ շուկայական հարաբերությունների զարգացումը:

Երկրի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է: Երկու օվկիանոսների միջև գտնվելով՝ ԱՄՆ-ը ծովային էժան ուղիներով կապված է բոլոր աշխարհամասերի հետ: Միաժամանակ, այդ տարածաշրջաններից հեռու գտնվելը ռազմավարական-պաշտպանական առումով ԱՄՆ-ին լրացուցիչ առավելություններ է ապահովում:

Ցամաքային սահմաններով անցկացված տրանսպորտային մայրուղիները բարենպաստ պայմաններ են ստեղծում անմիջական հարևանների՝ Կանադայի և Մեքսիկայի հետ տնտեսական սերտ կապերի հաստատման համար:

ԱՄՆ-ը բացառիկ խոշոր երկրներից է, որի տարածքի մեծ մասը բնական պայմանների և ռեսուրսների տեսակետից նպաստավոր է բնակչության կյանքի և տնտեսական գործունեության համար: Մակերևույթն ու կլիմայական պայմանները աչքի են ընկնում մեծ բազմազանությամբ: Տարածքի մեծ մասը հարթավայրային է և գտնվում է բարեխառն ու մերձարևադարձային գոտիներում: Տարածքի օգտագործման տեսանկյունից դժվարություններ են առաջանում միայն Ալյասկայի բարձրլեռնային ու ցուրտ գոտիներում և արևմուտքում՝ Կորդիլիերների բարձրլեռնային շրջաններում:

Հսկայական է ԱՄՆ-ի տնտեսության զարգացման **բնառեսուրսային ներուժը**: ԱՄՆ-ը հարուստ է բնական ռեսուրսներով՝ վառելիքային, մետաղային, ջրային, հողային, անտառային և ռեկրեացիոն:

Վառելիքաէներգետիկ պաշարների 90%-ը բաժին է ընկնում ածխին: Այստեղ է գտնվում ածխի համաշխարհային պաշարների 20%-ից ավելին (1,6 տրլն տ): Քիչ են նավթի և բնական գազի պաշարները (աշխարհի պաշարների 3-4%): Մետաղային օգտակար հանածոներից ԱՄՆ-ը հարուստ է մոլիբդենի (աշխարհի պաշարների 30%), կապարի, պղնձի, ցինկի և ոսկու (10-15%), ինչպես նաև երկաթաքարի, ուրանի և վոլֆրամի պաշարներով (5-7%): Դրանց մեծ մասը գտնվում է Ժայռոտ լեռներում:

Մեքսիկական ծոցի շրջանում և Ֆլորիդայի հյուսիսում առկա են ֆոսֆորիտների և ծծմբի համաշխարհային նշանակության պաշարներ:

Սպառվող ու չվերականգնվող սեփական հանքային ռեսուրսները խնայելու նպատակով նախապատվությունը տրվում է դրանց ներմուծմանը:

ԱՄՆ-ը հարուստ է ջրային ռեսուրսներով: Նրա գետային ընդհանուր հոսքը փոքր-ինչ զիջում է ամբողջ Եվրոպային: ԱՄՆ-ում է գտնվում աշխարհի ամենամեծ լճային համակարգը՝ Մեծ լճերը, և գետային գլխավոր համակարգը՝ Միսիսիպին, որոնք ունեն տրանսպորտային մեծ նշանակություն: ԱՄՆ-ի ջրաէներգետիկ ներուժը աշխարհում առավել խոշորներից է:

Բազմազան են ԱՄՆ-ի ռեկրեացիոն և զբոսաշրջային ռեսուրսները: Համաշխարհային մեծ հռչակ են վայելում Ելոուստոնյան, Յոսեմիթյան, Մեծ կանիոն,

Մամոնտի քարանձավ, Սեքվոյա և այլ ազգային պարկերն ու արգելոցները: ԱՄՆ-ի «արևային նահանգ» Ֆլորիդայում է գտնվում աշխարհի խոշորագույն առողջարանային կենտրոններից մեկը՝ Մայամին: Ամեն տարի ԱՄՆ են ժամանում ավելի քան 50 մլն զբոսաշրջիկներ: Միջազգային տուրիզմի գծով ԱՄՆ-ը զիջում է Եվրոպային, բայց ներքին տուրիզմը հասել է բարձր զարգացման:

Բարենպաստ են գյուղատնտեսության զարգացման նախադրյալները: ԱՄՆ-ն աշխարհում հողային ռեսուրսներով առավել լավ ապահովված երկրներից է: Կլիմայական պայմանները ամբողջությամբ հնարավորություն են տալիս աճեցնելու բարեխառն և մերձարևադարձային գոտիների գյուղատնտեսական բույր մշակաբույսերը, իսկ երկրի հարավային մասերում՝ նաև արևադարձային մշակաբույսեր: ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է մշակվող հողերի (վարելահողեր, բազմամյա տնկարկներ) զբաղեցրած տարածքով (186 մլն հա):

Այլ զարգացած տարածաշրջանների ու երկրների համեմատությամբ (Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա) ԱՄՆ-ի բնակչությունն արագ է աճում. 2000–2017 թթ. ավելացել է 16 %-ով: Բնակչությունն ավելանում է ոչ միայն բնական վերարտադրության, այլև մեխանիկական աճի՝ ներգաղթի հաշվին: Այժմ ներգաղթը կրճատված է, և բնակչության 90 %-ից ավելին արդեն ԱՄՆ-ում ծնվածներն են: Ժամանակակից ամերիկյան ազգը ձևավորվել է բազմաթիվ ժողովուրդների և ռասաների միախառնումից: ԱՄՆ բնակչության 78 %-ը սպիտակամորթներ են, որից ավելի քան 3/4-ը ունեն եվրոպական ծագում: Վերջին երկու

տասնամյակում կրկնապատկվել է լատինամերիկյան ծագում ունեցողների թիվը: Բնակչության շուրջ 13 %-ը սևամորթներ են:

Բնակչության մեծ մասը (70 %-ից ավելին) անգլախոս է, վերջին տասնամյակներին հատկապես հարավային նահանգներում՝ Կալիֆոռնիայում, Տեքսասում, Ֆլորիդայում, արագորեն աճում է իսպանախոս բնակչության թիվը (12 %-ից ավելին): Բնակչության կեսից ավելին բողոքականներ են, 1/4-ից ավելին՝ կաթոլիկներ:


ԱՄՆ-ը ապահովված է որակյալ և մեծաքանակ աշխատանքային ռեսուրսներով:

Տնտեսապես ակտիվ բնակչության 70 %-ը զբաղված է սպասարկման ոլորտում (աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկը): Բարձր են բնակչության կրթական մակարդակն ու կենսամակարդակը: Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աշխարհում առավել բարձրներից է՝ 57,0 հազ. դոլար (2016 թ.):

ԱՄՆ-ի բնակչության 81 %-ը ապրում է քաղաքներում: Երկրի քաղաքաբնակների մեծ մասը կենտրոնացած է խոշոր ագլոմերացիաներում: Խոշոր քաղաքների արվարձաններին հատուկ է ցածրահարկ առանձնատներով կառուցապատումը, որտեղ ապրում է ամերիկացիների 1/3-ից ավելին:

Աշխարհի խոշորագույն քաղաքներից է Նյու Յորքը՝ ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային նշանակության «նորաձևությունների օրենսդիրը», «նորությունների մայրաքաղաքը»: Այնտեղ են ամերիկյան խոշոր հեռուստաընկերությունները, ազդեցիկ թերթերի և ամսագրերի խմբագրությունները: Նյու

Տեղը աշխարհում



Գծ. 7. ԱՄՆ-ի բաժինը համաշխարհային տնտեսության մեջ XXI դ. սկզբին

Յորքում է Միավորված ազգերի կազմակերպության 39-հարկանի շենքը:

Մեծ է ԱՄՆ-ի ներդրումը ոչ միայն համաշխարհային տնտեսության, այլև գյուտերի և տեխնիկայի, տարբեր գիտությունների, մասնավորապես՝ տիեզերքի նվաճման բնագավառում: Գիտնականներից շատերը ծնվել և աշխատել են այլ երկրներում և «ուղեղների արտահոսքի» արդյունքում ԱՄՆ են ներգաղթել: Առաջին ԱՄՆ-ում են ստեղծվել փողոցների լուսավորության լամպերը, շոգենավը, շոգեքարը, կարի մեքենան, հեռագրական ապարատը, հեռախոսը, տրամվայը,

ջրատուրբինը, բամբակագույն մեքենան, գրամեքենան, ռոտոպրինտը, օդանավը, ուղղաթիռը, հաշվիչ մեքենան: Այստեղ է առաջինը կառուցվել ջերմաէլեկտրակայանը, արձակվել հրթիռը, Հ. Ֆորդի կողմից ստեղծվել առաջին ավտոմոբիլային հարահոսը, որը հեղափոխական նշանակություն ունեցավ արդյունաբերության մեջ: Հարվարդի համալսարանում 1943 թ. ստեղծվեց առաջին լամպային էՀՄ-ն, իսկ Կոլումբիայի համալսարանում՝ թարգմանող մեքենան: Առաջինն այստեղ կառուցվեց միջուկային ռեակտորը, ստեղծվեցին ատոմային և ջրածնային ռումբերը:

Տնտեսությունը: ԱՄՆ-ը ժամանակակից աշխարհի տնտեսական, քաղաքական և ռազմական ամենահզոր ուժն է: Համաաշխարհային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) գրեթե 1/4 մասը ստեղծվում է ԱՄՆ-ում: Արտաքին առևտրի շրջանառության ծավալով և կապիտալի արտահանմամբ, գիտատեխնիկական ներուժով և սպասարկման ոլորտի զարգացման մակարդակով աշխարհի առաջատար տերությունն է: ԱՄՆ-ի տնտեսությանը բնորոշ է արտադրության և կապիտալի համակենտրոնացման բարձր աստիճանը:

ԱՄՆ-ի արդյունաբերությունը ներառում է գոյություն ունեցող բոլոր ճյուղերը, ենթաճյուղերը և արտադրության տեսակները (գծ. 7): Երկրի «դեմքը» աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ որոշում են էլեկտրաէներգետիկան, ավտոմոբիլաշինությունը, ավիահրթիռատիեզերական, նավթավերամշակման և նավթաքիմիական արդյունաբերությունները: Արագ են զարգանում ռադիոէլեկտրոնիկան, համակարգիչների արտադրությունը և կենսատեխնոլոգիան:

Ավտոմոբիլաշինությունն ԱՄՆ-ի արդյունաբերության ազգային ճյուղն է: Աշխարհում առաջին անգամ այնտեղ է սկսվել ավտոմեքենաների զանգվածային թողարկումը: ԱՄՆ-ի «ավտոմոբիլաշինության մայրաքաղաքը» Գետրոյան է՝ «Ֆորդ», «Ջեներալ Մոտորս», «Կրայսլեր» ընկերությունների գրասենյակներով և ձեռնարկություններով: Համակարգչային տեխնիկայի արտադրության և ավիահրթիռատիեզերական արդյունաբերության նոր կենտրոնները ստեղծվել են Արևմուտքում, հատկապես՝ Կալիֆոռնիա

նահանգում: «Բոինգը» ինքնաթիռներ արտադրող ամենախոշոր ընկերությունն է աշխարհում: Համակարգչային տեխնիկայի արտադրությամբ հանրահայտ են «Այ Բի Էմ» և «Մայքրոսոֆթ» ընկերությունները:

Երկրի մի շարք շրջաններում էներգետիկան, մետաղաձուլությունը և քիմիական արդյունաբերությունը բացասական ազդեցություն են թողել շրջակա բնական միջավայրի վրա: ԱՄՆ-ին բաժին է ընկնում շրջակա միջավայրի համաաշխարհային աղտոտման մոտ 1/4-ը:

ԱՄՆ-ի գյուղատնտեսությանը բնորոշ են բազմաճյուղ կառուցվածքը, զարգացման բարձր մակարդակը և աշխատանքի բարձր արտադրողականությունը, տեխնիկական հագեցվածությունը, տարածաշրջանային մասնագիտացումը: Մեծ հարթավայրերում ձևավորվել է «ցորենի գոտին», Կենտրոնական հարթավայրերում՝ «եգիպտացորենի գոտին», հարավային նահանգներում՝ «բամբակի գոտին», մերձլճային շրջանում և հյուսիս-արևելքում՝ «կաթնային գոտին»: Տիրապետող են խոշոր ագարակները:

ԱՄՆ-ի գյուղատնտեսության կարևոր առանձնահատկությունն այն է, որ համախառն արտադրանքի մեծ մասը (ավելի քան 65 %) տալիս է անասնապահությունը, որի առաջատար ճյուղը տավարաբուծությունն է:

ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը լիովին բավարարում է բնակչության պարենի պահանջմունքները, իսկ կարևոր մի շարք արտադրանքների գծով աշխարհում գրավում է առաջատար տեղ:

ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է տրանսպորտային ուղիների երկարությամբ, բեռնաշրջանառության և ուղևո-

րաշրջանառության ծավալներով: ԱՄՆ-ը մյուս երկրներից զգալիորեն առաջ է անցել ավտոմեքենաների ու ինքնաթիռների պարկով: Համաշխարհային նշանակության տրանսպորտային հանգույցներ են Նյու Յորքը, Չիկագոն, Լոս Անջելեսը:

Աշխարհի բոլոր երկրներից առաջինը հետադարձաբերական փուլը թևակոխած այդ երկրում ծառայություններ մատուցող ճյուղերի բաժինը համախառն ներքին արդյունքում կազմում է մոտ 80 %, իսկ արտադրական ոլորտին բաժին է ընկնում ընդամենը 20 % (այդ թվում՝ գյուղատնտեսությանը՝ 1 %): ԱՄՆ-ը ծառայությունների խոշորագույն արտահանողն է աշխարհում:

ԱՄՆ-ը ֆիլմեր և հեռուստատեսային ծրագրեր արտադրող ու արտահանող երկիր է: Լատինամերիկյան երկրները հեռուստատեսային ծրագրերի կեսը ներմուծում են ԱՄՆ-ից: Լոս Անջելեսի արվարձաններում է գտնվում Հոլիվուդը՝ աշխարհի խոշորագույն կինոարտադրության կենտրոնը:

ԱՄՆ-ի տնտեսության զարգացման գործում վճռական դերը պատկանում է գիտությանը. գիտական ներուժով՝ 2,8 մլն մարդ, և գիտական հետազոտությունների ծավալով աշխարհում առաջին երկիրն է: Առաջին տեղն է գրավում նաև գիտությանը հատկացված ներդրումների ծավալով և համարվում է գիտատեխնիկական նոր գիտելիքների համաշխարհային գլխավոր վաճառողը: ԱՄՆ-ում մշտապես խրախուսվում է «ուղեղների ներհոսքը»: Աշխարհում հայտնի գիտական կենտրոններից են Հարվարդի, Յեյլի, Փրինստոնի, Կոլումբիայի, Ստենֆորդի, Կալիֆոռնիայի համալսարանները: Կիրառական հետազոտությունների, փորձա-

րարական-նախագծային մշակումների և դրանց հիման վրա գիտատար արտադրությունների իրականացման համար ստեղծվում են տեխնոլոգիական պարկեր՝ տեխնոպոլիսներ:

ԱՄՆ-ի տնտեսության կախվածությունը արտաքին առևտրից ավելի քիչ է (արտահանվում է համախառն արտադրանքի միայն 10 %-ը, որը 2-3 անգամ ցածր է այլ երկրների համեմատ), քան Ճապոնիայինը կամ Արևմտյան Եվրոպայի երկրներինը: Արտաքին առևտրի ծավալով վերջին տարիներին (ավելի քան 3,8 տրլն դոլար) ԱՄՆ-ը աշխարհում Չինաստանի հետ առաջին տեղն է կիսում: Նրա արտաքին առևտրի աշխարհագրությունն ընդգրկում է ամբողջ աշխարհը, բայց ամենից առաջ՝ Կանադան (արտահանման՝ 18,7 %, ներմուծման՝ 13,1 %), Մեքսիկան (15,7 % և 12,9 %), Չինաստանը (7,7 % և 21,8 %), Եվրոպական և լատինամերիկյան երկրները:

Արտահանման 3/5-ը բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերության, այդ թվում՝ գիտատար մեքենաշինության արտադրանքին: ԱՄՆ-ը մեծ եկամուտներ է ստանում ռազմարդյունաբերական համալիրի արտադրանքի, այդ թվում՝ զենքի, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների թույլտվությունների և արտոնագրերի վաճառքից: ԱՄՆ-ը գյուղատնտեսական մթերքների, այդ թվում՝ եգիպտացորենի, ցորենի, սոյայի, ծխախոտի խոշոր արտահանողներից է:

Ներկրման մեջ գերակշռում են պարենամթերքը, նավթը, սարքավորումները, սպառման առարկաները և այլն: Վերջին տարիներին ներկրման մեջ բարձրացել է պատրաստի արտադրանքի բաժինը, որը ներկայումս կազմում է 60 %:

ԱՄՆ-ը շարունակում է մնալ աշխարհի ֆինանսավարկային գործունեության կենտրոններից մեկը: Նրա արտասահմանյան ներդրումները զգալի կշիռ ունեն համաշխարհային ներդրումների մեջ: Դրա շնորհիվ ԱՄՆ-ին հաջողվել է իր սահմաններից դուրս ստեղծել հզոր «երկրորդ տնտեսություն»: Նյու Յորքն իր Ուոլ սթրիթով և ֆոնդային սակարանով շարունակում է մնալ աշխարհի ֆինանսական կենտրոններից մեկը: ԱՄՆ-ի ֆինանսական ու տնտեսական մեծ դերի և ազդեցության մասին է վկայում այն փաստը, որ վերջին տարիներին այնտեղ սկսված ֆինանսական ճգնաժամը վերածվեց համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի:

ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական դերը աշխարհում մեծացավ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ստեղծված երկրներ աշխարհում դարձավ կապիտալիստական աշխարհի առաջատարն ու գլխավորը: Եթե նախկինում նրա դերն ու ազդեցությունը մեծ էր արևմտյան կիսագնդի երկրներում (Կանադա, Լատինական Ամերիկա), ապա հետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ը փորձում էր իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունը տարածել մնացած ոչ սոցիալիստական տարածաշրջանների ու երկրների վրա: ԱՄՆ-ի անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ ստեղծվեց ռազմաքաղաքական ՆԱՏՕ կազմակերպությունը, որի կազմի մեջ մտան Արևմտյան Եվրոպայի հիմնական երկրները:

ԻՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի փլուզումից հետո՝ 1990-ական թվականներից, ստեղծվեց նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Աշխար-

հի երկու գերտերություններից մեկի՝ ԽՍՀՄ-ի վերացումից հետո մնալով միակ գերտերությունը՝ ԱՄՆ-ն իրական հնարավորություն ստացավ միաբևեռ աշխարհ ստեղծելու համար: Վերջին երկու տասնամյակներին ԱՄՆ-ը փորձում է ակտիվ մասնակցություն ունենալ տարածքային հակամարտությունների (Բալկաններ, Հարավային Կովկաս և այլն) լուծմանը, գլխավորել միջազգային ահաբեկչության դեմ պայքարը, փոխել առանձին երկրների վարչակարգերը կամ աջակցել դրանց (Իրաք, Աֆղանստան, Սիրիա և այլն): ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական և տնտեսական դերն ու հետաքրքրությունները մեծ են հատկապես նավթով հարուստ տարածաշրջաններում (Պարսից ծոցի ավազան, Հյուսիսային Աֆրիկա):

Վերջին տասնամյակներին համաշխարհային տնտեսության մեջ ԱՄՆ-ի տնտեսական և ֆինանսական դերն ու կշիռը նվազել են: Ավանդական տնտեսական մրցակիցների՝ Ճապոնիայի և արևմտաեվրոպական երկրների կողքին հայտնվել է Չինաստանը, որը ներկայումս տնտեսական ներուժով հասել է ԱՄՆ-ին և մոտակա տարիներին կշրջանցի նրան:

Միաբևեռ աշխարհի ստեղծման ճանապարհին ԱՄՆ-ը հանդիպում է լուրջ խոչընդոտների և դիմակայությունների աշխարհի մնացած ռազմաքաղաքական ու տնտեսական կենտրոնների՝ Չինաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի և այլ տարածաշրջանների ու երկրների կողմից: Այդ պայմաններում հնարավոր կլինի ստեղծել ավելի հավասարակշռված և բազմաբևեռ աշխարհ, որտեղ հաշվի կառնվեն տարբեր տարածաշրջանների ու երկրների շահերը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ դեր են խաղացել աշխարհագրական դիրքն ու բնական գործոնները ԱՄՆ-ի տնտեսության զարգացման գործում: Բնական ո՞ր ռեսուրսներով է ԱՄՆ-ն աշխարհում առաջատար դիրքեր գրավում:
2. Որո՞նք են ԱՄՆ-ի բնակչության աճի, կազմի և ուրբանիզացման առանձնահատկությունները:
3. Նշե՛ք ԱՄՆ-ի տնտեսության բնորոշ գծերը և զարգացման միտումները:
4. Գնահատե՛ք համաշխարհային արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ ԱՄՆ-ի տեղն ու դերը:
5. Ինչպիսի՞ն է ԱՄՆ-ի դերը համաշխարհային տրանսպորտում և արտաքին տնտեսական կապերում:
6. Գծապատկեր 7-ի հիման վրա նշե՛ք այն ճյուղերն ու արտադրանքները, որոնցով ԱՄՆ-ն առաջնակարգ տեղ է գրավում աշխարհում:
7. Որո՞նք են ԱՄՆ-ի զարգացման հետարդյունաբերական փուլի բնորոշ գծերը:
8. Գնահատե՛ք ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական դերը:
9. Փորձե՛ք գնահատել ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական և տնտեսական դերը մեր տարածաշրջանում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 1

Չորային ագրարային տարածաշրջաններ

Հավելված 1-ի աղյուսակի տվյալների հիման վրա կատարեք ստորև նշված առաջադրանքները:

1. Ուրվագծային քարտեզի վրա նշեք աշխարհի գլխավոր անապատային շրջանները:
2. Խմբավորեք անապատային շրջանները ըստ բացարձակ բարձրության (մինչև 500 մ, 500 մ–ից 1000 մ և 1000 մ–ից ավելի):
3. Համեմատեք և վերլուծեք ըստ բացարձակ բարձրության առանձնացված անապատային շրջանների ջերմության և խոնավության բաշխման պայմանները և նշեք գլխավոր օրինաչափությունները:
4. Առանձնացրեք այն անապատային շրջանները, որոնք ունեն գյուղատնտեսական առումով յուրացման առավել բարենպաստ պայմաններ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞վ է պայմանավորված տարածաշրջանային բազմազանությունը աշխարհում: Ինչպե՞ս են առաջանում միասնական և բաղադրիչային տարածաշրջանները: Նշեք դրանց հատկանշական գծերը և հիմնական տարբերությունները:

2. Որո՞նք են երկրագնդի ինքնատիպ տարածաշրջանները: Ինչպե՞ս են դրանք ձևավորվում: Փորձե՞ք դրանք պատկերել ուրվագծային քարտեզի վրա:

3. Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնատիպ տարածաշրջանի ձևավորման գործում ո՞ր գործոններն են վճռական դեր կատարում: Որո՞նք են ՀՀ ինքնատիպության դրսևորման հիմնական գծերն ու հատկանիշները:

4. Տարածաշրջանների ինքնատիպության ձևավորման գործում ի՞նչ դեր է խաղում աշխարհագրական դիրքը: Բերե՞ք ինքնատիպ տարածաշրջանների օրինակներ, որոնց բնության և տնտեսության ձևավորման գործում որոշիչ դեր է խաղում աշխարհագրական դիրքը:

5. Ինչպե՞ս են բնական և հասարակական գործոնները ազդում տարածաշրջանների ինքնատիպության ձևավորման վրա: Բերե՞ք ինքնատիպ տարածաշրջանների օրինակներ, որոնց ձևավորման գործում վճռական դեր են խաղում բնական պայմանները, ռեսուրսները, բնակչությունը և տնտեսությունը:

6. «Մարդ–բնություն» փոխհարաբերությունները ինչպե՞ս են փոփոխվում տարբեր տիպի տարածաշրջաններում:

7. Ինչպե՞ս են ձևավորվում ուրբանիզացված տարածաշրջանները: Որո՞նք են դրանց հատկանշական գծերը: Ներկայացրե՞ք աշխարհի ուրբանիզացված տարածաշրջանների համեմատական վերլուծությունը:

8. Նշե՛ք տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններն ու երկրները և դրանց աշխարհագրական առանձնահատկությունները:

9. Որո՞նք են լեռնային տարածաշրջանների բնության, բնակչության և տնտեսության բնորոշ հատկանիշները: Օգտագործելով լեռնային տարածաշրջանների զարգացման համաշխարհային փորձը՝ նշե՛ք Հայաստանի Հանրապետության՝ որպես լեռնային տարածաշրջանի զարգացման հիմնական ուղղությունները:

10. Որո՞նք են չորային տարածաշրջանների բնության, բնակչության և տնտեսության բնորոշ գծերը:

11. Որո՞նք են տարածաշրջանային միասնացման հիմնական ուղղություններն ու բնորոշ գծերը Եվրոպայում, փորձե՛ք գնահատել միասնացման հնարավորությունները աշխարհի այլ տարածաշրջաններում:

12. Ռուսաստանի օրինակով ցո՛յց տվե՛ք, թե ինչպես են բնական ռեսուրսների բազմազանությունը և ապահովվածության բարձր մակարդակը ազդում տարածաշրջանի տնտեսության կառուցվածքի և զարգացման առանձնահատկությունների վրա:

13. Օգտագործելով դասագրքի փաստական նյութերը՝ փորձե՛ք գնահատել ԱՄՆ-ի տնտեսական ու աշխարհաքաղաքական դերը ամբողջ աշխարհում և առանձին տարածաշրջաններում:

ՄԱՐԳԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում համամոլորակային հիմնախնդիրների առաջացման համար օրյեկտիվ նախադրյալներ են հանդիսացել մարդկության ծայրահեղ անհավասարաչափ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, գիտատեխնիկական, բնապահպանական և մշակութային զարգացումները: Համամոլորակային են այն հիմնախնդիրները, որոնք առնչվում են ամբողջ մարդկության կենսական շահերին: Պատահական չէ, որ արդի դարաշրջանի համար հաճախ օգտագործվում է «**համամոլորակային հիմնախնդիրների դարաշրջան**» արտահայտությունը:

Համամոլորակային են այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում նրանց ներկային ու ապագային, և դրանց լուծման համար պահանջվում է բոլոր ժողովուրդների ու երկրների գործողությունների միասնությունը:

Իրենց բնույթով համամոլորակային հիմնախնդիրները տարբեր են, սակայն բոլորը համակված են մարդկության աշխարհագրական միասնության և կենսակայունության գաղափարով:

Մեր օրերում մարդկության համար առավել հրատապ են հետևյալ համամոլորակային հիմնախնդիրները.

1. խաղաղության պահպանության հիմնախնդիրը,
2. բնապահպանական հիմնախնդիրը՝ կապված բնական միջավայրի խախտման հետ,
3. զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը,
4. թույլ զարգացած երկրներում հարյուր միլիոնավոր մարդկանց մշտական թերսնման և սովի հետ կապված պարենային հիմնախնդիրը,
5. մոլորակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը,
6. նախկին գաղութների (զարգացող երկրների) հետամնացության հաղթահարման հիմնախնդիրը, որը, ցավոք, ոչ միայն չի վերանում, այլև երկրագնդի որոշ տարածաշրջաններում դրսևորվում է առավել ցայտուն,


7. Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը՝ առաջին հերթին կապված նրա կենսաբանական արդյունավետության և աղտոտման հետ,
8. տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը,
9. կլիմայի փոփոխության հիմնախնդիրը:

Բացի հիմնականներից, կան նաև մի շարք մասնավոր հիմնախնդիրներ, որոնք ևս շատ կարևոր են (օրինակ՝ հանցագործությունների, թմրամոլության, ժողովրդավարության պակասի, տեխնածին աղետների, բնական աղետների և այլն): Վերջին ժամանակներս առավել արդիական է դարձել միջազգային ահաբեկչության հիմնախնդիրը:

Նախկին հիմնախնդիրների սրությունը և ծավալները չեն կարող համեմատվել

վերջին մի քանի տասնամյակներին տեղի ունեցող գործընթացների ու երևույթների հետ: Համընդհանուր հիմնախնդիրները ծնվում են տեղային, տարածաշրջանային և ազգային հիմնախնդիրներից, սակայն դրանց լուծման համար պահանջվում են ոչ թե առանձին երկրների անջատական ջանքերը, այլ համաշխարհային հասարակության միասնական գործունեությունը:

Մեր մոլորակն իր պատմության ընթացքում երբևէ չի բախվել այնպիսի հիմնախնդիրների, որոնք կան մեր օրերում: Արդեն գոյություն ունեն մեր մոլորակի բնակեցված տարածքի բնապահպանական հատկությունների անվերադարձ փոփոխության, ճնավորվող համաշխարհային հասարակության միասնականության խախտման և քաղաքակրթության ինքնառնչացման սպառնալիքները:



Գծ. 8. Ժամանակակից համամոլորակային հիմնախնդիրների առանձնահատկությունները

Համամոլորակային հիմնախնդիրների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել համաշխարհային տնտեսության զարգացման ընդհանուր օրինաչափություններն ու միտումները (այդ թվում՝ ԳՏՀ ազդեցությունը), սոցիալական գործոնների դերը (մոլորակի բնակչության արագ աճը, պետությունների փոխազդեցության մեծացումը):

Վերջին հարյուրամյակում մարդկային գործունեության բոլոր ոլորտներում տեղի է ունեցել որակական մեծ թռիչք: Տնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում խոշորամասշտաբ տնտեսական գործունեությունը և դրա շարժընթացն իրենց հետ բերում են ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքներ, այդ թվում.

- ▶ բնական ռեսուրսների կտրուկ և ոչ միշտ արդարացված սպառում,
- ▶ արտադրական գործունեության բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և մարդկանց կյանքի էկոլոգիական պայմանների վատթարացում,
- ▶ արդյունաբերական զարգացած և զարգացող երկրների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամաչափության մեծացում,
- ▶ զանգվածային ոչնչացման զենքի ստեղծում, որը սպառնում է մարդկային քաղաքակրթությանը:

Նշված բոլոր գործոններն այս կամ այն չափով նպաստել են համամոլորակային հիմնախնդիրների առաջացմանը և սրմանը: Առաջնորդվելով միայն տնտեսական խնդիրներով, զարկ տալով նյութական արտադրությանը և բնությունը դիտելով միայն որպես շահագործման օբյեկտ ու արտադրական թափոնների ու կենսազործունեության վայր՝ մարդկությունը

կարող է կանգնել համամոլորակային աղետի առջև:

Համամոլորակային հիմնախնդիրների ընդհանուր հատկանիշներն են.

1. համամոլորակային մասշտաբները և դրսևորման սրությունը,
2. համալիրային բնույթը (բոլոր հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են),
3. համամարդկային բնույթը,
4. մարդկության պատմության հետագա ընթացքի կանխորոշման առանձնահատկությունն այս կամ այն տեսակետից,
5. դրանց լուծման հնարավորությունը միայն համաշխարհային հանրության միավորված ջանքերով:

Գոյություն ունեն համամոլորակային հիմնախնդիրների տարբեր դասակարգումներ, օրինակ՝ առանձնացնում են առավել հին և համեմատաբար նոր հիմնախնդիրներ:

Ըստ բնույթի՝ առանձնացնում են հետևյալ հիմնախնդիրները.

- ա) առավել համընդհանուր քաղաքական և սոցիալ-տնտեսական,
- բ) բնատնտեսական,
- գ) սոցիալական,
- դ) խառը:

Հիմնախնդիրների գերակայության աստիճանը ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել: Եթե XX դ. երկրորդ կեսին առավել արդիական էր համաշխարհային պատերազմի կանխման հիմնախնդիրը, ապա ներկայումս գերակա են բնապահպանական և ժողովրդագրական հիմնախնդիրները:

Առավել համընդհանուր են համարվում խաղաղության պահպանման, զինաթափման և միջուկային պատերազմի

կանխման, միջազգային ահաբեկչության դեմ պայքարի և զարգացող երկրների հետամնացության հաղթահարման կամ մեղմացման հիմնախնդիրները: Չնայած սառը պատերազմի ավարտից հետո աշխարհը դարձել է ավելի «բարիդրացիական», սակայն միջազգային անվտանգությանը սպառնացող վտանգը մեր օրերում ևս պահպանվում է:

Աշխարհում գինված ուժերի թիվը անցնում է 20 մլն–ից, շարունակվում է գենքի համաշխարհային առևտուրը, դեռևս շատ են գինված բախումները:

2001 թ. Նյու Յորքի և Վաշինգտոնի, 2002 թ. Մոսկվայի, 2004 թ. Բեսլանի, վերջին 2–3 տարիներին եվրոպական տարբեր երկրներում տեղի ունեցած ահաբեկչությունները ցույց տվեցին այդ հիմնախնդրի խիստ վտանգավորությունը մարդկության համար:

Զարգացող երկրներում ապրող ավելի քան 1,3 մլրդ մարդ դեռևս գտնվում է աղքատության շեմից ցածր պայմաններում, որի պատճառով այդ երկրներում առաջանում են պարենային, առողջապահական, բնապահպանական և այլ հիմնախնդիրներ:

Առավելապես բնատնտեսական բնույթ ունեն բնապահպանական, պարենային, էներգետիկական ու հումքային հիմնախնդիրները: Իսկ ժողովրդագրական և բնակչության առողջապահության հիմնախնդիրներն ունեն առավելապես սոցիալական բնույթ:

Վերջին տասնամյակում միջինացված տվյալներով երկրագնդի վրա յուրաքանչյուր ժամ մոտավոր հաշվարկով 700 հաարգավանդ հող վերածվում է անապատի, 2000 երեխա մահանում է սովից, 55 մարդ՝ թունաքիմիկատներից, 1000 մարդ՝

վարակված ջրից, հյուսիսային կիսագնդում տեղում է 2000 տ թթվային անձրև, կենդանիների կամ բույսերի 5–6 տեսակ վերանում է մոլորակից: Յուրաքանչյուր բույս ոչնչանում է 20 հա արևադարձային անտառ, օգտագործվում է 5500 տ նավթ, ոչ ճիշտ օգտագործման պատճառով ոչնչանում է 50 հա բերրի հող, մթնոլորտ է արտանետվում 12 000 տ ածխաթթու գազ:


Երկրագնդի՝ օգտագործման համար պիտանի հողերի (առանց անապատների և լեռների) շուրջ 25 %-ը վատթարացման (դեգրադացման) վիճակում է, որի հետևանքով նվազում է դրանց արդյունավետությունը: Դա վտանգի տակ է դնում մոտ 1 մլրդ մարդու համար գոյության միջոցների ստեղծումը: Տարեցտարի ավելանում են բնակեցված տարածքները:

Համամոլորակային հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են. չի կարելի լուծել մեկը՝ ուշադրություն չդարձնելով մյուսներին (*գծ. 9*):

Խաղաղության պահպանման և միջուկային պատերազմի կանխման հիմնախնդիրը կարելի է համարել առաջնային, քանի որ դրա լուծմամբ պայմանավորված է ոչ միայն երկրագնդի վրա կյանքի գոյության, այլև սպառազինման նպատակով ծախսվող հսկայածավալ միջոցները մյուս հիմնախնդիրների լուծման համար օգտագործելու հարցը:

Բնապահպանական հիմնախնդիրը պայմանականորեն կարելի է համարել երկրորդը: Շրջակա միջավայրի նկատմամբ անփոյթ վերաբերմունքը կարող է սպառնալ մարդկության գոյությանը:

Միմյանց հետ սերտորեն կապված պարենային և ժողովրդագրական հիմնախնդիրների լուծումը բազմաթիվ թելերով կապված է շրջակա միջավայրի պահպա-



Գծ. 9. Համամոլորակային հիմնախնդիրների փոխադարձ կապը

նության, Համաշխարհային օվկիանոսի պահպանության և յուրացման, հանքահումքային հիմնախնդիրների հետ:

Ըստ էության՝ համամոլորակային հիմնախնդիրներն իրենցից ներկայացնում են համամոլորակային հաշվեկշիռներ: Միայն դրանց հավասարակշռության պայմաններում մարդկությունը (աշխարհը) կարող է բնականոն զարգացում ունենալ: Հավասարակշռության խախտումները հղի են ամենալուրջ հետևանքներով, ընդհուպ մինչև մարդկության ոչնչացման սպառնալիքը:

Մարդկության ապագայի վերաբերյալ որոշ տեսակետներ իրենց արտացոլումն են գտել համամոլորակային գիտական վարկածներում: Դրանցից առավել հայտնի են *ջերմոցային էֆեկտի, երկրագնդի բնակչության թվի կայունացման և Օկլոսենասպոլիսի (համաշխարհային քաղաքի)* վարկածները:

Համամոլորակային հիմնախնդիրների հետ կապված՝ գիտնականների կողմից արվել և արվում են տարբեր կանխատեսումներ, առաջ են քաշվել վարկածներ և նախագծեր: Կանխատեսումները վե-

րաբերում են մարդկության մոտակա և հեռավոր ապագային:

Գոյություն ունեն նաև ոչ քիչ թվով համամոլորակային ճարտարագիտական նախագծեր, որոնք վերաբերում են երկրագնդի խոշոր տարածաշրջանների (հիմնականում՝ Համաշխարհային օվկիանոսի) վերակառուցմանը:

Համամոլորակային հիմնախնդիրների լուծումը կախված է ինչպես ամբողջ մարդկության ջանքերի համատեղումից, այնպես էլ առանձին երկրների ու տարածաշրջանների գործունեությունից: Պետք է գործի **«Մտածել համամոլորակային, գործել տեղային մասշտաբով»** սկզբունքը:

Մարդկությունը դեռևս չի հայտնաբերել ժամանակակից համամոլորակային հիմնախնդիրների լուծման միջոցը, սակայն բնականոն զարգացման ուղին արդեն որոշված է. դա **կայուն զարգացման** ուղին է:

Ներկայումս աշխարհի բազմաթիվ երկրներ օրենքներ են ընդունել, որը հասարակությանը տանելու է կայուն զարգացման ուղիով: Կայուն զարգացումը հասարակության և բնության զարգացման կառավարելի գործընթաց է, որը պետք է նպաստավոր նախադրյալներ ապահովի բնության պահպանության ու մարդու կյանքի համար:

Շրջակա միջավայրի նվազագույն կորուստներով հասնել զարգացման ստաբիլացույն արդյունքների. սա է կայուն զարգացման հայեցակարգի էությունը, որի կենտրոնում հասարակական առաջընթացի և մարդկանց շահերի գաղափարն է:

Հասարակության կայուն զարգացման ռազմավարությունն ունի երեք գլխավոր բաղադրիչ:

Առաջինը բնապահպանական կայուն զարգացումն է: Մարդկությունը պետք է սովորի ապրել կենսոլորտի տարողունակության սահմաններում՝ սահմանափակելով ինչպես բնությունից վերցրած ռեսուրսների ծավալները, այնպես էլ իր գործունեության ընթացքում բնությանը հանձնվող թափոնների քանակը:

Երկրորդը տնտեսական կայուն զարգացումն է, ըստ որի՝ պետք է տեղի ունենան համաշխարհային տնտեսության կառուցվածքային և տարածքային փոփոխություններ, տնտեսության ինտենսիվացում և արդյունավետության բարձրացում: Եվ վերջապես՝ պետք է հասնել տնտեսական աճի բարենպաստ մակարդակի՝ բնության և հասարակության միջև ապահովելով հավասարակշռություն:

Երրորդը սոցիալական կայուն զարգացումն է, որը ենթադրում է ժողովրդագրական հիմնախնդրի լուծում և զբաղվածության ապահովում, կյանքի որակի և կենսամակարդակի բարձրացում, անհատի համակողմանի զարգացում, մարդկանց քաղաքացիական իրավունքների պաշտպանություն և անվտանգության ապահովում:

Այսպիսով՝ **կայուն զարգացումը եռամիասնական համակարգում իրար է կապում շրջակա միջավայրը, տնտեսական զարգացումը և մարդկանց բարեկեցությունը:**

Այսպիսով՝ համամոլորակային հիմնախնդիրները ժամանակակից քաղաքակրթության հիվանդություններն են, և դրանք կարելի է բուժել միայն մոլորակի բոլոր ժողովուրդների համատեղ ուժերով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են համամոլորակային հիմնախնդիրների էությունը և արդիականությունը:
2. Ինչո՞վ է պայմանավորված համամոլորակային հիմնախնդիրների առաջացումը:
3. Ներկայումս որո՞նք են համամոլորակային առաջնահերթ հիմնախնդիրները և ինչո՞ւ:
4. Ի՞նչ է տալիս մարդկությանը համամոլորակային հիմնախնդիրների լուծումը:
5. Ո՞րն է «Հասարակության կայուն զարգացում» հայեցակարգի էությունը, այն ի՞նչ բաղադրիչներ ունի:

§ 2

ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐ-ԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ


Մարդկային հասարակության զարգացումը բոլոր ժամանակներում կապված է եղել բազմազան ռեսուրսների օգտագործման հետ: Ժամանակակից համաշխարհային տնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսների թվում կարևորագույն և առանձնահատուկ տեղ ունեն վառելիքաէներգետիկ ռեսուրսները և հանքային հումքը: Ռեսուրսների օգտագործման աստիճանը կախված է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից: Գիտության և տեխնիկայի նվաճումները կարծես բնությունից մարդու մեկուսացվածության և նույնիսկ նրա նկատմամբ գերիշխանության պատրանք են ստեղծել: Սակայն իր պահանջմունքները բավարարելու համար ժամանակակից մարդն ավելի մեծ քանակությամբ ռեսուրսների կարիք ունի, քան ունեցել է նախկինում: Վիթխարի չափով աճել է

մարդու կողմից շահագործվող հանքային ռեսուրսների ինչպես տեսականին, այնպես էլ գումարային քանակը: Այդ պատճառով մարդկությունը կանգնած է բնական ռեսուրսների օգտագործման և բնության պահպանության լուրջ ու բարդ հիմնախնդիրների առջև: Միայն վերջին հարյուրամյակում արդյունահանվող վառելիքի սպառումն ավելացել է ավելի քան 30 անգամ, իսկ համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 55 անգամ: Ընդ որում՝ վառելիքի օգտագործման 75 % և արդյունաբերական արտադրանքի ծավալի 80 % աճը տեղի է ունեցել 1950 թ. հետո՝ ԳՏՀ-ի ժամանակաշրջանում:

Բնական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրը նախ և առաջ պայմանավորված է օրգանական և հանքահումքային կարևորագույն ռեսուրսների սահմանափակությամբ: Երկրի ընդերքից արդյունահան-

վող օրգանական և հանքային հումքը համարվում է չվերականգնվող և սպառվող ռեսուրս: Գիտնականները նախագգուշացնում են նավթի ու գազի մատչելի պաշար-

ների, երկաթաքարի, պղնձի հանքանյութի, նիկելի, մանգանի, ալյումինի և այլ կարևորագույն հանքային պաշարների առաջիկա հնարավոր սպառման մասին:



Գծ. 10. Հումքային հիմնախնդրի առաջացումը

Հայտնի է, որ տարբեր երկրներ և տարածաշրջաններ տարբեր չափով են ապահովված բնական, մասնավորապես՝ վառելիքաէներգետիկ և հումքային ռեսուրսներով: Երկրների մի մասն ունի վառելիքային կամ հումքային ռեսուրսների մեծ կուտակումներ, մյուս մասը՝ սուր պակաս: Տարեցտարի մեծանում են այդ ռեսուրսների միջազգային առևտրի ծավալները: Մշտապես տեղի է ունենում վառելիքային և հումքային ռեսուրսների տարածքային վերաբաշխում:

Ընտանաբար, **ռեսուրսային հիմնախնդիրն ունի երկու կողմ. 1) տնտեսության հուսալի ապահովումը վառելիքա-**

էներգետիկ ու հումքային ռեսուրսներով և 2) դրանց վերաբաշխումն աշխարհի երկրների միջև:

Ռեսուրսների լրիվ կամ բացարձակ սպառման մասին խոսելը դեռևս վաղ է (հետախուզական աշխատանքների ընդլայնման շնորհիվ առանձին ռեսուրսների հավաստի պաշարները նույնիսկ ավելացել են), սակայն սպառման գործընթացը դանդաղ զարգանում է: Ըստ հաշվարկների՝ երկաթաքարի պաշարները մարդկությանը կբավարարեն 150, նավթը՝ 40–45, ածուխը՝ 600, նիկելը՝ 100, ալյումինը՝ 60–70, պղինձը՝ 60, ուրանի արդյունաբերական պաշարները՝ մոտ 40 տարի և այլն:

Երկրագնդի վառելիքաէներգետիկ և հանքային ռեսուրսների բազան

	Բնական ռեսուրսներ	Պաշարների վիճակի, օգտագործման աստիճանի և հեռանկարի համառոտ բնութագիրը
<i>Էներգետիկ ռեսուրսներ</i>		
1	Նավթ	Պաշարները՝ 270–300 մլրդ տ ՆԷ (նավթային էկվիվալենտ): Տարեկան օգտագործումը՝ 3 մլրդ տ–ից ավելի: Հեռանկարային է առաջիկա 40–45 տարում:
2	Բնական գազ	Պաշարները՝ 270 մլրդ տ ՆԷ (145 տրլն մ ³): Տարեկան օգտագործումը՝ 2400 մլրդ մ ³ : Հեռանկարային է 30–60 տարի:
3	Ածուխ	Պաշարները՝ 10 տրլն տ ՆԷ (15 տրլն տ): Տարեկան օգտագործումը՝ 5 մլրդ տ: Հեռանկարային է 200 և ավելի տարի:
4	Թերթաքար	Պաշարները նշանակալից են (40 տրլն տ ՆԷ): Օգտագործվում է շատ քիչ: Քիչ հեռանկարային է արդյունահանման շատ աշխատատարության և մեծ քանակությամբ թափոնների պատճառով:
5	Տորֆ	Պաշարները նշանակալից են (150 մլրդ տ՝ ըստ ածխածնի): Քիչ հեռանկարային է տորֆի բարձր մոխրայնության և արդյունահանման ժամանակ մի շարք էկոլոգիական հիմնախնդիրների պատճառով:
6	Գետերի ջրաէներգիա	Պաշարները սահմանափակ են: Չնայած էկոլոգիական հիմնախնդիրներին՝ ակտիվորեն օգտագործվում են: Հեռանկարային են հատկապես զարգացող երկրներում:
7	Ատոմային և միջուկային սինթեզի էներգիա	Պաշարները ֆիզիկապես անսպառ են, էկոլոգիական առումով վտանգավոր են, քանի դեռ չեն հայտնաբերվել էներգիայի այս տեսակի արտադրության հուսալի անվտանգության միջոցներ և թափոնների վնասագերծում:
8	Երկրաջերմային էներգիա	Պաշարները նշանակալից են: Քիչ են օգտագործվում: Հեռանկարային են:
9	Մակընթացությունների, տեղատվությունների և օվկիանոսային հոսանքների էներգիա	Պաշարները նշանակալից են: Քիչ են օգտագործվում: Հեռանկարային են:

10	Արեգակնային ճառագայթում	Պաշարները գործնականում անսպառ են: Օգտագործումը սահմանափակվում է կենսոլորտից էներգիայի բնական հոսքով: Հեռանկարային են:
11	Քամու էներգիա	Պաշարներն օգտագործվում են վաղուց: Ունեն տեղական նշանակություն: Այդ առումով հեռանկարային են:
<i>Հանքային ռեսուրսներ</i>		
1	Մետաղային հանքանյութեր, ոչմետաղային օգտակար հանածոներ	Պաշարներն աստիճանաբար սպառվում են: Բացառությամբ պղնձի, կապարի, արծաթի, ոսկու հանքանյութերի՝ մնացած պաշարները շատ են: Պահանջվում է կարգավորում:

Գիտության և տեխնիկայի զարգացման ընթացքում պաշարների ծավալները փոխվում են, հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվում են նորերը: Մետաղների (երկաթաքարի, մանգանի, պղնձի, կոբալտի և այլն) խոշորագույն պաշարներ են հայտնաբերվել Համաշխարհային օվկիանոսի հատակում: Բավական քիչ են ուսումնասիրված զարգացող մի շարք երկրների դժվարմատչելի շրջանները: Ներկայումս աշխարհում անցում է նկատվում դեպի համեմատաբար դժվարմատչելի շրջաններում գտնվող հանքավայրերի ոչ արդյունավետ շահագործումը, որն էականորեն թանկացնում է արդյունահանումը: Օրինակ՝ նավթի հանույթը օվկիանոսի ծանծաղուտային շրջանում շատ ավելի ծախսատար է, քան Մերձավոր Արևելքի հարուստ հանքավայրերում: Շատ երկրներում նավթի և գազի հետախուզման աշխատանքներ են իրականացվում մինչև 5–6 կմ խորություններում:

Բացի նոր հանքավայրերի հետախուզումից՝ համաշխարհային ռեսուրսային հիմնախնդրի լուծման համար գոյություն ունի ևս մեկ իրական հնարավորություն. նյութերի, օրինակ՝ մետաղների կրկնակի օգտա-

գործումը և դրանց փոխարինումն այլ նյութերով՝ պլաստմասսայով, հախճապակիով, թղթի թափոնի օգտագործումը՝ թղթի արտադրության դեպքում և այլն:

Այժմ բոլոր երկրների տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից է հանքահումքային ռեսուրսների համալիրային և արդյունավետ օգտագործումը:

Համաշխարհային էներգետիկան դեռ հիմնված է էներգիայի չվերականգնվող ռեսուրսների՝ օրգանական վառելիքի և հանքային հանածոների, ինչպես նաև գետերի և ատոմային էներգիայի վրա:

Աշխարհում գլխավոր էներգակիրներն են նավթը, գազը և ածուխը: Օրգանական վառելիքի համաշխարհային պաշարների մոտ 60%–ը բաժին է ընկնում աժխին, իսկ 27%–ը՝ նավթին և գազին: Մինչդեռ օրգանական վառելիքի համաշխարհային հանույթում պատկերը այլ է. աժխին բաժին է ընկնում 30%–ը, իսկ նավթին և գազին՝ 67%–ը:

Մարդկության առջև էներգետիկ հիմնախնդիրն առաջին անգամ հանդես է գալիս 70–ական թվականներին, որը համընկավ համաշխարհային էներգետիկ ճգնաժա-

մի հետ: Որո՞նք էին դրա պատճառներն ու հետևանքները:

Նավթը ցածր գնի շնորհիվ երկար ժամանակ համարվում էր հիմնական վաճառելիք և էներգիայի աղբյուր: Արաբական նավթարդյունահանող երկրներն իրենց իրավունքների համար պայքարում նավթի վաճառքն օգտագործեցին որպես քաղաքական միջոց (զենք) և կտրուկ բարձրացրին նավթի գները: Արդյունքում աշխարհում սկսվեց էներգետիկ ճգնաժամ, որի պատճառը ոչ միայն տնտեսական էր, այլև քաղաքական ու սոցիալական: Այդ ճգնաժամը վերջ տվեց էներգիայի էժան աղբյուրների ժամանակաշրջանին և կասկածի տակ դրեց ապագայում նավթն ու գազը էներգետիկ նպատակներով օգտագործելու հարցը, քանի որ դրանք արժեքավոր հումք են քիմիական արդյունաբերության համար:

Գիտնականների կարծիքով՝ մոտ ապագայում էներգետիկայի զարգացումը կապված կլինի էներգակիրների տարբեր տեսակների այնպիսի զուգակցման հետ, որը հնարավորություն կտա նվազեցնելու հեղուկ վառելիքի քանակը: Մարդկությունն այժմ աստիճանաբար անցում է կատարում օրգանական, սպառվող էներգակիր ռեսուրսների օգտագործումից գործնականում անսպառ էներգակիր ռեսուրսների (ատոմային էներգիա, արեգակնային էներգիա, երկրաջերմային էներգիա և այլն) կիրառմանը: Այս փուլին բնորոշ է նաև էներգախնայողական տեխնոլոգիաների զարգացումը և մարդկային գործունեության բոլոր ոլորտներում իրականացվող էներգախնայողությունը: Ներկայումս ատոմակայաններ կան և կառուցվում են աշխարհի 40 երկ-

րում: Առանձին երկրներում աէկները նշանակալից տեղ են զբաղեցնում էլեկտրաէներգիայի արտադրության մեջ (Լիտվա՝ 80 %, Ֆրանսիա՝ 78 %, Բելգիա՝ 55 %, Շվեդիա՝ 50 %, Շվեյցարիա՝ 40 %, Հայաստան՝ 35 %, ԱՄՆ՝ 16 %): Սակայն աշխարհում կա հասարակական ակտիվ շարժում ատոմային էներգետիկայի զարգացման դեմ: Որպես գլխավոր փաստարկ՝ նշվում են, օրինակ, Ուկրաինայում՝ Չեռնոբիլի, Ճապոնիայում՝ Ֆուկուսիմայի աէկների վթարները և ատոմակայանների թափոնների թաղման դեռևս չլուծված հարցը: Այդ թափոնները հարկ կլինի պահել դարերով: Պահեստարանները երկրաբանական առումով պետք է լինեն խիստ հուսալի, որպեսզի երկրաշարժի դեպքում ռադիոակտիվ թափոնները չտարածվեն երկրագնդում: Ատոմային էներգետիկայի զարգացման կողմնակիցները կարծում են, որ էկոլոգիական առումով այն ավելի մաքուր է, քան էներգիայի ստացման ժամանակակից այլ եղանակներ. աէկը չի աղտոտում մթնոլորտը, նավթի ու գազի համեմատությամբ միջուկային հումքի պաշարներն ավելի շատ են: Աշխարհում ատոմային էներգետիկայի զարգացման գլխավոր հիմնախնդիրն այդ էլեկտրակայանների հուսալիության բարձրացումն է և թափոնների անվտանգ պահպանումը:

Մեծ հույսեր են ներշնչում նաև էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրները: Օրինակ՝ Կալիֆոռնիայում արեգակնային էլեկտրակայանների տնտեսական ցուցանիշները չեն զիջում այլ տիպի էլեկտրակայաններին: Մի շարք երկրներում կան քամու, մակընթացության և երկրաջերմային էլեկտրակա-

յաններ (Իսլանդիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստան և այլն): Այնուհանդերձ, մոտ ապագայում այդպիսի էլեկտրակայաններից ստացվող էներգիան կլինի աննշան, քանի որ դրանց ինքնարժեքը դեռևս բարձր է: Մեր օրերում օրակարգային խնդիր է նաև էներգիայի ստացումը ջրածնից և ջերմամիջուկային սինթեզից:

Վերջին տասնամյակներին աշխարհում սրվող էներգետիկ և հումքային հիմնախնդիրն այս կամ այն չափով վերաբերում է աշխարհի բոլոր երկրներին: Զարգացած երկրների հումքային և էներգետիկ պահանջները հիմնականում բավարարվում են զարգացող երկրների հաշվին: Օրի-

նակ՝ Ճապոնիան 100 %-ով ներկրում է իրեն անհրաժեշտ նավթը, բոքսիտները և միջուկային վառելիքը: Եվրամիության երկրները ներկրում են երկաթաքարի 85 %-ը, պղնձի 99 %-ը և այլն: Նույնիսկ ռեսուրսներով առավել լավ ապահովված ԱՄՆ-ը ներկրում է երկաթաքարի 35 %-ը, բոքսիտների 80 %-ը, նավթի մինչև 40 %-ը:

Բազմաթիվ երկրներում ձեռնարկվում են հսկայական միջոցառումներ հանքային հումքի և էներգիայի խնայողության համար: Այսօր արդեն աշխարհում օգտագործվող այլումինի, պղնձի, ցինկի, կապարի և անագի 1/3-ը ստացվում է թափոններից և երկրորդային հումքից:

Աղյուսակ 7

**Ատոմային էլեկտրակայանների հզորությամբ
աշխարհի առաջատար երկրները 2007 թ.**

Երկրները	Բլոկների թիվը	Հզորությունը (մգՎտ)	Կառուցվող
ԱՄՆ	109	105356	3
Ֆրանսիա	56	61130	2
Ճապոնիա	52	44068	3
Մեծ Բրիտանիա	35	15020	–
Ռուսաստան	29	21242	6
Կանադա	21	15805	–
Գերմանիա	20	23451	–
Ուկրաինա	14	12818	5
Շվեդիա	12	10452	–
Հարավային Կորեա	12	10315	–

Երկրագնդի հանքային և վառելիքային չվերականգնվող ու էժան ռեսուրսների սահմանափակությունը մարդկության համար անհրաժեշտություն է դարձնում հուճքի և էներգիայի խիստ խնայողությունը, ռեսուրսախնայողական նոր տեխնոլոգիաների օգտագործումը:

Հանքային հուճքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդրի լուծումից է կախված մարդկության առաջընթացի ապագան: Այդ հիմնախնդրի լուծումը պահանջում է բոլոր երկրների համատեղ ջանքերը:

Օրինակ՝ Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) ամեն տարի մարտի վերջին շաբաթ օրվա երեկոյան մեկ ժամը հայտարարում է Երկիր մոլորակի ժամ, երբ մարդիկ, ի նշան մեր մոլորակի նկատմամբ հոգատարության, անջատում են բոլոր լույսերն ու էլեկտրական սարքավորումները: Աշխարհի առաջավոր շատ երկրներ, նաև մեր երկիրը միացել են այդ նախաձեռնությանը, որպեսզի խնայեն վառելիքաէներգետիկ ռեսուրսները և նպաստեն մեր մոլորակի բնության պահպանությանը:


Հարցեր և առաջադրանքներ

1. Հիմնավորե՞ք հանքային հուճքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդրի գոյությունը:
2. Ինչո՞ւ ռեսուրսային հիմնախնդիրը սրվեց հատկապես XX դ. վերջերին:
3. Ձեզ հայտնի է, որ աշխարհի շատ երկրներ ունեն հանքանյութերի հսկայական պաշարներ: Այդ դեպքում ինչո՞վ է բացատրվում ռեսուրսային հիմնախնդրի համամոլորակային բնույթը:
4. Հանքային հուճքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ կան:
5. Հանքային հուճքի և էներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրն արտահայտվո՞ւմ է արդյոք մեր հանրապետությունում: Եթե այո, ապա ինչպե՞ս:
6. Հանքային հուճքի և էներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ կարող եք առաջարկել ինքներդ:

§ 3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Հազարամյակներ շարունակ Երկիր մոլորակի վրա աշխարհագրական միջավայրի բոլոր տարրերի և մարդու գործունեության միջև գոյություն է ունեցել

փոխադարձ կապ (գծ. 11): Առանց աշխարհագրական միջավայրի հետ փոխադարձ ներգործության մարդկությունը չի կարող գոյատևել:



Գծ. 11. Աշխարհագրական միջավայրի գործոնների և մարդու գործունեության փոխադարձ կապը

Աշխարհագրական միջավայրի սահմաններում մշտապես տեղի է ունենում նյութերի և էներգիայի փոխանակություն: Այսինքն՝ երկրագնդի բոլոր ոլորտները՝ քարոլորտը, ջրոլորտը, կենսոլորտը և մթնոլորտը, սերտորեն փոխկապակցված են, դրանց միջև մշտապես տեղի է ունենում նյութերի և էներգիայի փոխանակություն:

Ժամանակակից մարդն իր կյանքով և գործունեությամբ ակտիվորեն միջամտում է այդ փոխանակությանը, փոխազդեցության մեջ է մտնում աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների հետ:

Մարդու տնտեսական գործունեության ընթացքում փոփոխված շրջակա միջավայրը ճգնում է ինքնավերականգնման. դա բնության մեծագույն հատկությունն է: Եթե բնության ինքնավերականգնման գործընթացը տեղի է ունենում, ապա ասում ենք, որ գոյություն ունի **էկոլոգիական հավասարակշռություն**: Իսկ եթե շրջակա միջավայրը չի կարողանում ինքնավերականգնվել մարդու գործունեության հետևանքներից, ապա առաջանում է **էկոլոգիական ճգնաժամ**:

Մարդկության պատմությունն ուղեկցվել է էկոլոգիական ճգնաժամային իրավիճակներով: Տնտեսավարման ամեն մի նոր տիպի անցում կարելի է դիտել որպես մարդածին էկոլոգիական ճգնաժամների պատմության հերթական փուլ: Էկոլոգիական առաջին ճգնաժամի պատճառը հավաքչությունից ու որսորդությունից մարդու անցումն էր երկրագործության:

Հարյուրամյակներ շարունակ մարդկությունն անվերահսկելի ձևով վերցրել է այն ամենը, ինչ տվել է բնությունը:

Շրջակա միջավայրի բաղադրիչներն օգտագործվում են որպես արտադրության հումքային բազա (օգտակար հանածոների արդյունահանումը, անտառների արդյունաբերական հատումը և այլն): Մարդու արտադրական և ոչ արտադրական գործունեությունն իր ազդեցությունն է թողնում բնության վրա: Գրապառճառով տեղի է ունենում մթնոլորտի աղտոտում, ոչնչանում են միլիոնավոր հեկտար արգավանդ հողատարածքներ, թունաքիմիկատներով և ռադիոակտիվ թափոններով վարակվում են հողերը, ջրային օբյեկտները, փոխվում է երկրագնդի կլիման, հսկայական չափերի են հասնում անտառազրկումը և անապատացումը:

Բերենք մի քանի օրինակ: Արագ տեմպերով տեղի է ունենում համաշխարհային անտառային երկու խոշոր զանգվածների՝ Ամազոնիայի և Հարավարևելյան Ասիայի անտառների ոչնչացում, որը կարող է հանգեցնել այդ յուրահատուկ անտառային գենոֆոնդի վերացմանը:

Զուգահեռաբար տեղի է ունենում անապատացում, որը գյուղատնտեսական օգտագործումից տարեկան հանում է շուրջ 6 մլն հա տարածք: Այս երևույթն առավել ինտենսիվ տեղի է ունենում Աֆրիկայի երկրներում՝ Սահարայի և սավաննաների սահմանային հատվածներում (Սահելի երկրներում):

Աշխարհի մի շարք երկրներում լուրջ հիմնախնդիր է դարձել ջրային ռեսուրսների հարցը՝ ոչ միայն պակասուրդի, այլև աղտոտվածության առումով:

Երկրագնդի յուրաքանչյուր բնակչի հաշվով տարեկան արդյունահանվում է ավելի քան 20 տ հանքային հումք, որի

97-98 %-ը թափոնների տեսքով թափանցում է մթնոլորտ, ջրային ավազաններ և հողեր: Շրջակա միջավայր թափանցող թափոնների և աղտոտող նյութերի զանգվածը տարեկան անցնում է 40 մլրդ տ-ից: Դրա հետևանքով վտանգվում են մարդկանց առողջությունը, բուսական և կենդանական օրգանիզմների գոյությունը:

Հսկայական քանակությամբ վառելիքային ռեսուրսների օգտագործման հետևանքով մթնոլորտում խախտվում է ածխածնի երկօքսիդի հաշվեկշիռը, որի հետևանքով առաջանում է լուրջ սպառնալիք **ջերմոցային էֆեկտի** առաջացման և **օզոնային շերտի** քայքայման համար:

Երկիր մոլորակի բնակչության թվաքանակի աստիճանական ավելացումը, բնականաբար նաև սպառման ծավալների մեծացումն ուղեկցվել են էկոլոգիական տեղական աղետներով: Դրանց մասշտաբները մեծացել են արդյունաբերական և գիտատեխնիկական հեղափոխությունների ժամանակաշրջաններում (*վերհիշե՛ք երբ են տեղի ունեցել արդյունաբերական և գիտատեխնիկական հեղափոխությունները, և ի՞նչ փոփոխություններ են առաջացել հասարակական արտադրողական ուժերի ու բնօգրագործման մեջ*): Միայն վերջին հարյուր տարում սպառման ծավալները մինչարդյունաբերական ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են երկու անգամ՝ ինչպես մեկ շնչի կողմից սպառման աճի, այնպես էլ բնակչության ընդհանուր թվաքանակի ավելացման պատճառով: Սպառման աճն ավելացրել է մարդածին բնույթի հիմնախնդիրները.

1) շրջակա միջավայրի վրա տեղային աղբյուրներից առաջացած մշտական ու

ֆիզիկաքիմիական ազդեցությունները դարձել են ավելի լայնամասշտաբ (օրինակ՝ թթվային անձրևները),

2) մի շարք տարածաշրջաններում ջրային ռեսուրսների վատթարացող վիճակը դարձել է առաջնահերթ խնդիր,

3) մեծացել է օդային և ջրային ավազանների աղտոտվածության ծավալը:

Տեղային էկոլոգիական աղետների հետևանքներն աստիճանաբար ձևավորում են շրջակա բնական միջավայրի համամոլորակային փոփոխությունների միտումներ: Բնօգտագործման համամոլորակային բնույթի հիմնախնդիր մասին վկայում են մի շարք փաստեր. 1) բնական միջավայրի վատթարացման նշանները (կենսաբանական տեսակների վերացում, անտառային տարածքների կրճատում, անապատացում, հողերի էրոզիա, օզոնային շերտի քայքայում և այլն), 2) էկոլոգիական աղետալի շրջանների աճը, 3) մարդկանց ապրելավայրի և բնական էկոհամակարգերի միջավայրի առանձնապես վտանգավոր տեսակի աղտոտումները:

Էկոլոգիական լարվածության մեծացումն արտահայտվում է նաև մի շարք սոցիալական հետևանքներով.

- ▶ պարենամթերքի պակասով,
- ▶ բնակչության հիվանդացությունների աճով և նոր հիվանդությունների առաջացումով (այդ թվում նաև գենետիկական բնույթի),
- ▶ բնակչության էկոլոգիական միգրացիայով և էկոլոգիական փախստականների առաջացումով,
- ▶ էկոլոգիական ծայրահեղականությանը՝ տեղային էկոլոգիական հակամարտություններով, որոնք պայմանա-

- վորված են էկոլոգիապես վտանգավոր արտադրությունների հիմնումով,
- ▶ էկոլոգիական ազդեցիայով՝ թունավոր տեխնոլոգիաները և թափոններն այլ երկրներ տեղափոխելով,
 - ▶ միջազգային իրավունքի նորմ են դարձել բնապահպանական առումով առանձնապես վտանգավոր գործունեության և վնասարարության (այդ թվում՝ ոչ կանխամտածված) համար պատասխանատվության, ինչպես նաև միջազգային էկոլոգիական հակամարտությունների կարգավորման վերաբերյալ դրույթները,
 - ▶ շրջակա միջավայրի վիճակի մասին հասարակության լայն շերտերի, գիտնականների և քաղաքական գործիչների մտահոգությունների աճով:

Սկսած XX դարի 60-ական թվականներից հասարակական կյանք մտան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են **էկոլոգիական աղետը, էկոլոգիական անվտանգությունը** և այլն: XX դարի 70–80-ական թվականներին ստեղծվեցին բնապահպանական հարցերով ակտիվորեն զբաղվող հասարակական կազմակերպություններ և «**կանաչների**» կուսակցություններ:

Մարդածին ճգնաժամային գործընթացների և երևույթների նշանակալից մասշտաբները, որոնք վտանգում են հասարակության գոյության հիմքերը, ժամանակակից բնօգտագործման հիմնախնդրի բնորոշ հատկանիշներն են:


Որևէ տարածքի էկոլոգիական ճգնաժամին նախորդում են լարված էկոլոգի-

ական և վտանգավոր (կամ տագնապալից) էկոլոգիական վիճակները: Էկոլոգիական ճգնաժամը կանխել, իսկ եթե այն սկսվել է, ապա վերացնել կարելի է բնապահպանության միջոցով:

Բնապահպանությունը միջոցառումների համակարգ է, որը պետք է ապահովի բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, բնական ռեսուրսների պահպանումը և վերականգնումը:

Էկոլոգիական ճգնաժամը կարող է լինել ոչ միայն համամոլորակային մասշտաբով, այլև տարածաշրջանային և տեղային մակարդակներով (առանձին տարածաշրջանների և տեղանքների սահմաններում) (*գծ. 12*): Մարդկության խնդիրն է կանխել համամոլորակային էկոլոգիական ճգնաժամը, իսկ եթե այն առկա է առանձին տարածաշրջաններում կամ երկրային թաղանթի առանձին բաղադրիչներում, միջոցառումներ իրականացնել հավասարակշռությունը վերականգնելու համար:

Բնապահպանական հիմնախնդիր են համարվում նաև խոշոր քաղաքներում և ագլոմերացիաներում կյանքի պայմանների վատթարացումը, Համաշխարհային օվկիանոսի աղտոտումը և այլն: Երկրագնդի որոշ տարածաշրջաններում տեխնածին էներգիայի ուժը համեմատելի է, իսկ հաճախ նաև գերազանցում է արեգակնային էներգիայի ուժին (օրինակ՝ Նյու Յորքում, Մոսկվայում): Քաղաքային միջավայրը նաև սոցիալական միջավայր է:



Գծ. 12. Միջավայրի համամոլորակային էկոլոգիական հիմնական փոփոխությունները XXI դ.

Աղմկային աղտոտում են առաջացնում քաղաքային տրանսպորտը, առևտրային կենտրոնները, շուկաները, գործարանները, ֆաբրիկաները և ավտոկայանատեղերը, որոնք մոտ են բնակելի թաղամասերին: Մասնագետների կարծիքով՝ մարդու վրա հոգնեցնող ազդեցություն է թողնում արդեն 60 դբ (դեցիբել) աղմուկը: Աղմկային աղտոտման պատճառով առաջանում են գլխացավեր, անքնություն, ցավեր սրտի շրջանում և այլն: Քաղաքային բնակավայրերում աղմկային աղտոտման մակարդակը հաճախ հասնում է ցավագին շեմին՝ 140 դբ: Լռության մշտական պակասը կարող է հանգեցնել լսողության կորստի, և մարդու կյանքը կարող է կրճատվել 8–12 տարով:

Էկոլոգիական իրավիճակը սրված է զարգացած արդյունաբերական շրջաններում (չնայած վերջին տարիներին բնապահպանական բազմազան միջոցառումների շնորհիվ իրավիճակը լավանում է): Այժմ աշխարհի խոշոր արդյունաբերական ագլոմերացիաների մեծ մասին բնորոշ են սմոգը (ծխամուժ), թթվային անձրևները: Հատկապես թթվային անձրևներից տուժում են քաղաքների և հարակից շրջանների շենքերն ու հուշարձանները, հողերը, անտառները, գետերը և լճերը:

Վերջին տասնամյակներին գիտական հետազոտությունները և սոցիալական պրակտիկան ցույց են տալիս, որ **համամոլորակային բնապահպանական հիմնախնդրի էպիկենտրոնը զարգացած երկրներից աստիճանաբար տեղափոխվում է զարգացող երկրներ:** Եթե զարգացած երկրներում բնապահպանական

հիմնախնդիրն ունի առավելապես «արդյունաբերական բնույթ», ապա զարգացող երկրներում այն պայմանավորված է բնական ռեսուրսների գերօգտագործմամբ, չնայած վերջին տարիներին այդ երկրներում ևս դիտվում է արդյունաբերական շրջանների աղտոտվածության մեծացում: Այլ կերպ ասած, **եթե զարգացած երկրները տառապում են իրենց «հարստությունից», ապա զարգացողները՝ «աղքատությունից»:**

Աշխարհի տարածաշրջանների հիմնական էկոլոգիական հիմնախնդիրների մասին պատկերացում է տալիս հավելված 3–ը:

Վերջին տարիներին միջազգային հանրությանն անհանգստություն են պատճառում համամոլորակային այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են թմրանյութերի օգտագործումը, ՁԻԱՀ-ի և այլ՝ կյանքի համար վտանգավոր հիվանդությունների տարածումն ու դրանց հետևանքների ազդեցությունը գալիք սերնդի կամ մոլորակի ապագայի վրա: Թմրամիջոցների չարաշահումը շրջակա միջավայրի ինքնատիպ աղտոտում է, որն ունի համամարդկային բնույթ: Թմրանյութերով վարակումն իրականացվում է գիտակցված (դիտավորյալ) կերպով: Թմրամիջոցներ տարածողները շահադիտական նպատակներով օգտագործում են մարդկանց թուլությունները, պետությունների տնտեսական և իրավական համակարգերը:

Այսպիսով՝ **բնապահպանական հիմնախնդիրները համամոլորակային են, երկրների սահմաններ չեն ճանաչում, և դրանց լուծումը հնարավոր է միայն միջազգային լայն համա-**

գործակցության պայմաններում: Այս խնդրի իրագործման ճանապարհին կարևոր քայլ է ՄԱԿ-ի կողմից ընդուն-

ված «**Բնության պահպանության միջազգային ռազմավարությունը**» փաստաթուղթը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է բնական հավասարակշռության խախտումը:
2. Ինչո՞ւ շրջակա միջավայրի ծանրաբեռնվածությունը կտրուկ աճեց հենց XX դ. երկրորդ կեսին:
3. Շրջակա միջավայրի փոփոխություններն ի՞նչ առանձնահատկություններ ունեն զարգացած և զարգացող երկրներում:
4. Ըստ ձեզ՝ ինչպիսի՞ն պետք է լինեն բնապահպանական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ա) բարձր զարգացած երկրներում, բ) զարգացող և թույլ զարգացած երկրներում:
5. Բնապահպանական ի՞նչ հրատապ հիմնախնդիրներ կան ՀՀ-ում:

§ 4

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՄՈՒՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ


Ներկայումս աշխարհի բնակչության թիվն աճում է արագ տեմպերով: Եթե նախկինում տարեկան աճը հաշվվում էր հազարներով և միլիոններով, ապա մեր օրերում՝ տասնյակ միլիոններով: Աշխարհի բնակչության թիվն արդեն անցնում է 7,5 մլրդ-ից և յուրաքանչյուր տարի աճում է 80–85 մլն-ով: Դա նշանակում է, որ ներկայումս երկրագնդի բնակչության թիվը տարեկան աճում է մոտ 1,1%-ով:

Ո՞րն է ժողովրդագրական հիմնախնդրի էությունը, ինչո՞ւ է այն մտահոգում ոչ միայն գիտնականներին և քաղաքագետներին, այլև ամբողջ հասարակությանը:

Այդ հիմնախնդրի էությունն այն է, որ բնակչության թվի աճի բարձր տեմպերի

պատճառով ավելանում է սովյալների, անտունների ու գործազուրկների թիվը, ավելանում է մարդկանց կուտակումը խոշոր քաղաքներում, մեծանում է ճնշումը բնության վրա, որի հետևանքով վատթարանում է բնական միջավայրի որակը, նվազում են բնական պաշարները, շատանում են հիվանդությունները: Բնակչության թվի աճի տեմպերը համամոլորակային մասշտաբով չեն համապատասխանում երկրագնդի տնտեսական, սոցիալական և բնապահպանական պահանջներին ու հնարավորություններին:

Գիտնականները ժողովրդագրական հիմնախնդիրը համարում են կարևորներից մեկը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա լուծումից է կախված



Քարտեզ 8. Աշխարհի բնակչության թվի ենթադրվող աճը 2008–2050 թթ. (մլն մարդ)

համամոլորակային այլ հիմնախնդիրների լուծումը:

Մասնագետները կարծում են, որ գոյություն ունեցող վիճակը շտկելու գլխավոր միջոցը **բնակչության վերարտադրության կարգավորումը և աճի դադարեցումն են**: Ձեզ հայտնի է, որ բնակչության վերարտադրության ցուցանիշները տարբեր երկրներում տարբեր են, և, ըստ այդ ցուցանիշների, առանձնացնում են առաջին և երկրորդ տիպի երկրներ:

Համամոլորակային հիմնախնդիր ծնող «ժողովրդագրական պայթյունը» տեղի է ունենում գլխավորապես երկրորդ տիպի վերարտադրություն ունեցող երկրներում: Դրանք Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի զարգացող երկրներն են, որոնց տնտեսական աճը չափազանց դանդաղ է ընթանում: Այդ պատճառով էլ ժողովրդի բարեկեցության մակարդակը մնում է ցածր, սրվում են սոցիալական հակասությունները, դժվարանում է բնակչությանը պարենով ապահովելը, անզրագիտության հաղթահարումը, աճում է գործազրկությունը: Այդ տիպի երկրներին բաժին է ընկնում աշխարհի բնակչության տարեկան աճի 90 %-ից ավելին:

Այդ երկրների տնտեսական և սոցիալական զարգացումն արագացնելու, դրա միջոցով սովյալների ու աղքատների թիվը կրճատելու և բնական միջավայրը բարելավելու ջանքերը հաճախ ցանկալի արդյունք չեն տալիս: Բնակչությունը շարունակում է ավելի արագ աճել, քան տնտեսությունն ու պարենամթերքի արտադրությունը:

Հիմնախնդրի լուծման գլխավոր միջոցը մնում է **ծնելիության կրճատման միջոցով բնական աճի կրճատումը, այլ կերպ ասած՝ ընթանիքի պլանավորումը**: Դրան էլ ուղղված է այդ երկրների ժողովրդագրական քաղաքականությունը: Այս առումով առանձնանում են Չինաստանը և Հնդկաստանը, որտեղ կենտրոնացած է աշխարհի

բնակչության ավելի քան 1/3-ը: Տարվող քաղաքականության շնորհիվ բնակչության ընդլայնված վերարտադրության տեմպերը զգալիորեն թուլացել են:

Մակայն զարգացող երկրներում «Ժողովրդագրական պայթյունը» դեռևս շարունակվում է (*հավելված 4*) և իր բացասական ազդեցությունն է թողնում ոչ միայն այդ երկրների, այլև համաշխարհային տնտեսության վրա՝ դժվարացնելով պայքարն աղքատության և հետամնացության դեմ: Նշված երկրներում ծնելիության բարձր մակարդակի հետևանքով ձևավորված բնակչության տարիքային կառուցվածքը աչքի է ընկնում երեխաների բարձր տեսակարար կշռով (30–40%), որը նշանակում է, որ բնակչության բարձր բնական աճը բարձր է լինելու նաև մոտակա 1–2 տասնամյակներին: Հաճախ «Ժողովրդագրական պայթյունը» ուղեկցվում է «քաղաքային պայթյունով», որի պատճառով մեծանում է նաև քաղաքային բնակչության արագ աճի քաղաքաշինական, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բացասական հետևանքները:



Իսկ ինչպիսին է բնակչության վերարտադրության առաջին տիպի, այսինքն՝ զարգացած երկրների վիճակը: Միջոց այնտեղ ժողովրդագրական հիմնախնդիրներ չկան: Իհարկե կան: Բայց դրանք հիմնականում տեղական նշանակություն ունեն:

Առաջին տիպի երկրներում, ինչպես գիտեք, բնակչության բնական աճը շատ փոքր է, կամ ընդհանրապես աճ չկա: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ վերարտադրությունն ընդհանրապես խախտվում է, բնակչության թիվը՝ կրճատվում, և տեղի է ունենում **սապարնակեցում** (դեպոպուլյացիա): Դրա արդյունքում ավելի շատ երկրներում է տարածվում ժողովրդագրական ճգնաժամը:

Նկատելի է դառնում բնակչության ծերացման և տնտեսությունն անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներով ապահովելու հիմնախնդիրը, որը մասամբ լուծվում է ներգաղթյալ բնակչության հաշվին: Միաժամանակ Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրներից եկած ներգաղթյալների կուտակումները Արևմտյան Եվրոպայի խոշոր քաղաքներում սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային և այլ բնույթի հիմնախնդիրներ են առաջացնում:

Ներկայումս ժողովրդագրական ճգնաժամ դիտվում է ոչ միայն արևմտաեվրոպական որոշ զարգացած երկրներում (Գերմանիա, Շվեդիա, Իսպանիա և այլն), այլև նախկին սոցիալիստական կամ արևելաեվրոպական գրեթե բոլոր երկրներում (Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Բուլղարիա, Ռումինիա և այլն): Այդ երկրներում բնակչության թվի կրճատումը լուրջ համապետական հիմնախնդիր է: Նրանք ջանում են ապահովել բնակչության ընդլայնված վերարտադրություն, այսինքն՝ բնակչության բացարձակ թվի աճ: Դրա համար մշակում և իրականացնում են հատուկ **ժողովրդագրական քաղաքականություն**: Ծնելիության խթանման նպատակով արտոնություններ են նախատեսում բազմազավակ ընտանիքների համար, երեխաներին լրացուցիչ նպաստներ են տալիս և այլն: Ընտանիքի պլանավորման ծրագրեր են իրականացնում Ֆրանսիան, Գերմանիան և մի շարք այլ զարգացած երկրներ:

Ժողովրդագրական հիմնախնդիրն դեռևս XIX դ. սկզբին անդրադարձել է անգլիացի տնտեսագետ, լուսավորիչ Թոմաս Մալթուսը: XVIII–XIX դդ. Արևմտյան Եվրոպայի երկրների բնակչության թիվն աճում էր բարձր տեմպերով: Հաշվի առնելով այդ



Գծ. 13. Աշխարհի բնակչության
թվի հեռանկարային հնարավոր
փոփոխությունները

հանգամանքը՝ Մալթուսը զարգացրեց մի տեսություն, որը ստացավ «Մալթուսի ազգաբնակչության տեսություն» անվանումը: Նրա կարծիքով՝ մարդիկ, ինչպես և բոլոր կենդանի էակները, բազմանում են ավելի արագ, քան թույլ է տալիս առկա պարենի քանակը: Երկրագործական արտադրանքը կարող է աճել լավագույն դեպքում թվաբանական պրոգրեսիայով, մինչդեռ բնակչության թիվն ավելանում է երկրաչափական պրոգրեսիայով: Դրա հետևանքով երկրագունդը գերբնակեցվում է, խախտվում է հավասարակշռությունը պարենային ռեսուրսների և բնակչության թվի միջև, մարդկության մի մասը մնում է առանց գոյամիջոցների: Արդյունքում տարածվում են **սովը, աղքատությունը, հանցագործությունները:**

Որպես գերբնակեցման վերացման գործոններ՝ Մալթուսը և նրա կողմնակիցները նշում էին **համաճարակները, պատերազմները, ծնելիության կրճատումը**, որոնց միջոցով, իբր, վերականգնվում է հավասարակշռությունը, մարդկությունը նորից սկսում է աճել մինչև անհավասարակշռության նոր սրումը:

Մալթուսականության հետևորդները մեր օրերում նեոմալթուսականության ներկայացուցիչներն են: Նրանց կարծիքով՝ երկրագունդն արդեն մոտենում է բացարձակ գերբնակեցման սահմանագծին, և մեր մոլորակն ի վիճակի չի լինի կերակրելու ամբողջ բնակչությանը: Ունանք պնդում են, որ ներկայումս մարդկությանը սպառնում է ոչ այնքան **ատոմային**, որքան **ժողովրդագրական ռումբը:**

Իրականում այդ անհանգստությունը հիմքեր չունի: Գերբնակեցումը ոչ թե բացարձակ է, այլ հարաբերական, այսինքն՝ սովը, աղքատությունը առաջացել են ոչ այնքան բնակչության չափազանց մեծ թվի, որքան տնտեսության թույլ զարգացման հետևանքով: Հիշենք, որ Մալթուսի ժամանակների համեմատ երկրագնդի բնակչության թիվն ավելացել է ավելի քան 7 անգամ: Մինչդեռ սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ ներկայումս բնակչությունն ապրում է ավելի բարեկեցիկ կյանքով, քան Մալթուսի ժամանակ:

Այժմ, ի հակակշիռ նեոմալթուսականության, գիտական շրջանակներում տարածում է գտել ժողովրդագրական անցման տեսությունը, որին ծանոթ եք 10-րդ դասարանի աշխարհագրության դասընթացից: Այդ տեսության համաձայն՝ ծնելիության և մահացության մակարդակը կարգավորվում է ոչ միայն կենսաբանական օրենքներով, այլև սոցիալական պայմաններով, որոնք իրենց հերթին կախված են տնտեսական և մշակութային զարգացման մակարդակից: Ժողովրդագրական անցումը ծնելիության, մահացության և բնական աճի հաջորդական փոփոխությունների գործընթաց է, որը պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումով:

Ժողովրդագրական անցման տեսության կողմնակիցները ելնում են այն փաստից, որ բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում, հետևապես և ամբողջ աշխարհում սոցիալ-տնտեսական առաջընթաց է տեղի ունենում, «ժողովրդագրական պայթյունն» արդեն անցել է իր բարձրակետը և սկսում է մարել: Եթե 1960-ական թվականներին

աշխարհի բնակչության տարեկան աճը կազմում էր 2%, ապա 80-ական թվականներին իջավ 1,6%-ի: Այժմ այն կազմում է 1,1%, իսկ մոտակա ժամանակներում կիջնի 1%-ից: Տեսության կողմնակիցների գիտական կանխատեսումներով՝ XXI և XXII դարերի սահմանագլխին աշխարհի բնակչության թիվը կկայունանա և մոտավորապես կլինի 10-12 մլրդ: Բնակչության ծնելիության և մահացության ցուցանիշները կհավասարվեն, այսինքն՝ կդադարեն ընդլայնված վերարտադրությունը և բնակչության աճը: Ընդ որում՝ բնակչության թվի կայունացումը երկրագնդի տարբեր մասերում կկատարվի ոչ միաժամանակ: Այն կսկսվի XXI դ. կեսերին Եվրոպայից (մի շարք երկրներում արդեն սկսվել է), ապա կտարածվի մյուս աշխարհամասերում: Կայունացումը տեղի կունենա բնական եղանակով՝ մարդկանց կյանքի սոցիալական և տնտեսական պայմանների բարելավման, նրանց գիտակցության աճի միջոցով: **Միայն երկրների տնտեսական և սոցիալ-մշակութային առաջադիմության պայմաններում է հնարավոր լուծել ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը:**

Ժողովրդագրական հիմնախնդիրը վերաբերում է աշխարհի բոլոր երկրներին, քանի որ բնակչության արագ աճի հետևանքով մի շարք այլ հիմնախնդիրներ՝ պարենային, ռեսուրսային, բնապահպանական և այլն, դրսևորվում են ոչ միայն առանձին երկրներում, այլև ամբողջ երկրագնդում: Այդ պատճառով էլ ժողովրդագրական հիմնախնդիրն ունի համամոլորակային բնույթ և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ուշադրության կենտրոնում է: Ժողովրդագրական համա-

մոլորակային հիմնախնդրի և դրա լուծման ուղիների վերաբերյալ հիմնահարցերը քննարկվել են 1984 թ. Մեխիկոյում, 1994 թ.

Կահիրեում, ավելի ուշ՝ ՄԱԿ-ի կողմից հրավիրված ազգաբնակչության հարցերով այլ համաշխարհային խորհրդածողովներում:

Հարցեր և առաջադրանքներ


1. Ո՞րն է ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի էությունը: Քարտեզի և աղյուսակի օգնությամբ ցո՛ւյց տվեք հիմնախնդրի դրսևորման աշխարհագրական առանձնահատկությունները:
2. Ի՞նչ է «ժողովրդագրական պայթյունը», և ինչպե՞ս է այն կապվում ժողովրդագրական հիմնախնդրի հետ:
3. Ինչպե՞ս է ժողովրդագրական հիմնախնդիրը դրսևորվում զարգացած երկրներում: Ի՞նչ է ժողովրդագրական ճգնաժամը:
4. Որո՞նք են ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի լուծման ուղիները: Ինչպե՞ս է իրականացվում ժողովրդագրական քաղաքականությունը բնակչության վերարտադրության տարբեր տիպ ունեցող երկրներում:
5. Համեմատե՛ք ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի լուծման ուղիների մասին գիտնականների տեսակետները: Նշե՛ք հիմնական տեսությունները:
6. Համամոլորակային ի՞նչ այլ հիմնախնդիրների հետ է կապված ժողովրդագրական հիմնախնդիրը:
7. Գպրոցական նախորդ դասընթացներից հիշե՛ք ժողովրդագրական հիմնախնդրի դրսևորման ձևերը ՀՀ-ում:

§ 5

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Գյուղատնտեսական արտադրության դանդաղ աճի և միաժամանակ բնակչության արագ աճի հետևանքով երկրագնդի վրա միջոտ էլ գոյություն է ունեցել պարենային հիմնախնդիր: Դա համամոլորակային հիմնախնդիրներից ամենահինն է: Սովը՝ որպես նրա ծայրահեղ դրսևորում, զանգվածային

բնույթ է կրել ինչպես Հին աշխարհում, միջին դարերում, այնպես էլ նոր և նորագույն ժամանակներում: Պարենային հիմնախնդիրը ազդում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա և լուրջ վտանգ է ներկայացնում տասնյակ պետությունների համար: Գործնական կյանքում շրջանառության մեջ է մտել



Քարտեզ 9. Սովյալ ժամանակակից աշխարհում

«պարենային անվտանգություն» հասկացությունը: Դեռևս 200 տարի առաջ գիտնականներին անհանգստացրել է հողի բերրիության նվազման մոայլ հեռանկարը: Դրա հիման վրա է Մալթուսը կառուցել իր հանրահայտ տեսությունը:

Պարենային հիմնախնդիրը չափազանց սրվել և համամոլորակային բնույթ է ստացել «ժողովրդագրական պայթյունի» հետևանքով, երբ մեծ խզում է առաջացել բնակչության թվաքանակի արագ աճի ու գյուղատնտեսական մթերքների, հատկապես պարենամթերքի արտադրության աճի միջև: Տնտեսապես հետամնաց երկրներում վերջին տասնամյակներին նվազել է բնակչության մեկ շնչին ընկնող կալորիաների քանակը:

Գիտնականների հաշվարկներով՝ **մեկ մարդուն օրական միջին հաշվով անհրաժեշտ է ոչ պակաս, քան 2400–2600 կկալ պարունակող բազմապիսի սնունդ:**

Այդ ցուցանիշը կարող է փոփոխվել՝ կախված մարդու սեռից, տարիքից, աշխատանքի բնույթից, տեղանքի բնակլիմայական պայմաններից և այլ գործոններից: Մարդկանց նորմալ գործունեության համար կարևոր է ոչ միայն սննդի կալորիաների, այլև անհրաժեշտ սպիտակուցների (հատկապես՝ կենդանական ծագման), ճարպերի, վիտամինների, միկրոտարբերի քանակը: Թերսնումը սկսվում է 1800 կկալ/օր-ից, իսկ սովն առաջանում է 1000 կկալ/օր-ից պակասի դեպքում:

XX դ. ընթացքում սննդի սպառման քանակական ցուցանիշները աշխարհում ավելացել են: 1930 թ. մեկ մարդու կողմից միջին հաշվով օրական սպառվել է 2100 կկալ սնունդ, 1970-ական թվականների սկզբներին՝ 2450 կկալ, իսկ ներկա ժամանակներում՝ ավելի քան 2700 կկալ: Դրան նպաստել է հացահատիկի համաշխարհային արտադրության զգալի

աճը, որը որոշ զարգացող երկրներում տեղի է ունեցել «կանաչ հեղափոխության», իսկ զարգացած երկրներում՝ կենսատեխնոլոգիայի զարգացման և սելեկցիայի բարելավման շնորհիվ: Զգալիորեն ավելացել է նաև մսի ու ծովային մթերքների արտադրությունը: Դա չի նշանակում, որ պարենային համամուրրակային հիմնախնդիրը լուծվել է: Մեծ են մեկ մարդու կողմից սպառվող կալորիաների աշխարհագրական տարբերությունները: ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում մարդու սնունդը միջին հաշվով կազմում է 3500 կկալ/օր, որից կենդանական ծագման կալորիաների բաժինը 30 % է, Լատինական Ամերիկայում՝ 2750 կկալ/օր, որից կենդանական ծագմանը՝ 17 %, իսկ Աֆրիկայում՝ Սահարայից հարավ՝ ընդամենը 2050 կկալ/օր, որից ընդամենը 7 %-ն է կենդանական ծագման:

Պարենային հիմնախնդիր գոյություն ունի բոլոր երկրներում: Նույնիսկ բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում, սոցիալական անհավասարության պայմաններում, բնակչության մի մասը մշտապես թերսնվում է: Միևնույն ժամանակ, զարգացած երկրների մի մասում՝ ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա և այլն, առաջանում է պարենամթերքի զգալի ավելցուկ: **Խնդիրը համամուրրակային մասշտաբով պարենամթերքի ճիշտ վերաբաշխումն է և նպատակային օգտագործումը:** Միավորված ազգերի կազմակերպության փորձագետների տվյալներով՝ պահանջվող կալորիականության ռացիոնալ սննդով ապահովված է աշխարհի բնակչության մեծ մասը: Սակայն մեկ միլիարդից ավելի բնակչության սնունդը թերի է կամ ծավալով, կամ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի, հանքային աղերի և

մյուս բաղադրիչների պարունակությամբ, իսկ սովյալների թիվն անցնում է 400 միլիոնից: Դրանք հիմնականում տնտեսապես հետամնաց երկրների բնակիչներ են: Եթե 1970-ական թվականներին սովյալներն ու թերսնվողները կազմում էին աշխարհի բնակչության 36 %-ը, ապա 2005-2007 թթ. կազմում են 13 %-ը, որը նույնպես բավականին բարձր ցուցանիշ է: Պարենամթերքի պակասը բացասաբար է ազդում բնակչության կյանքի միջին տևողության վրա: Հասարակածի երկու կողմերով ձգվող՝ սովյալների և թերսնվողների գոտին հատկապես ընդլայնվում է Աֆրիկայում (*քարտեզ 9*): 2005-2007 թթ. սովյալների և թերսնվողների բաժինը Կենտրոնական Աֆրիկայում կազմել է բնակչության ընդհանուր թվի 53 %-ը, Արևելյան Աֆրիկայում՝ 34 %-ը, Հարավային Աֆրիկայում՝ 33 %-ը (*աղ. 8*): Սովյալների և թերսնվողների բաժինը զգալի է նաև Հարավային և Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրներում (Հնդկաստան, Բանգլադեշ, Պակիստան, ԿԺԴՀ, Մոնղոլիա, Տաջիկստան, Լաոս, Կամբոջա և այլն), որտեղ 2005-2007 թթ. տվյալներով թերսնվում է բնակչության 20-30 %-ը: Լատինական Ամերիկայում թերսնվողները շատ են Կենտրոնական Ամերիկայում, Կարիբյան ավազանի երկրներում (Հայիթի, Գվատեմալա, Գոնիմիկյան Հանրապետություն և այլն): Սովը, թերսնումը բնորոշ է տնտեսապես զարգացած երկրներին (բնակչության 1 %-ից պակաս): Այդ երկրներն այժմ արտադրում և սպառում են համաշխարհային պարենամթերքի 3/4-ը, չնայած որ այնտեղ ապրում է աշխարհի բնակչության 15 %-ը: Այդ երկրների բնակչության 20-30 %-ը ունեն գիրացման և ճարպակալման խնդիր:

Աշխարհի և նրա տարածաշրջանների թերսնվողների թվի փոփոխությունները 1990–2007 թթ.


Տարածաշրջանները	1990–1992 թթ.		2005–2007 թթ.	
	Թերսնվողների թիվը (մլն մարդ)	Բաժինը ընդհանուր բնակչության թվում (%)	Թերսնվողների թիվը (մլն մարդ)	Բաժինը ընդհանուր բնակչության թվում (%)
Ամբողջ աշխարհը	843,4	16	847,5	13
Զարգացած երկրներ	16,7	1,3	12,3	0,9
Զարգացող երկրներ, այդ թվում՝	826,6	20	835,2	16
Արևելյան Ասիա	215,6	18	139,5	10
Հարավարևելյան Ասիա	105,4	24	76,1	14
Հարավային Ասիա	255,4	22	331,1	22
Կենտրոնական Ասիա	4,2	8	6,0	10
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	54,3	12	47,1	8
Մերձավոր Արևելք	14,6	7	26,3	9
Հյուսիսային Աֆրիկա	5,0	3,7	6,1	3,8
Կենտրոնական Աֆրիկա	20,4	32	51,8	53
Արևելյան Աֆրիկա	76,2	45	86,9	34
Հարավային Աֆրիկա	30,6	43	33,9	33
Արևմտյան Աֆրիկա	37,6	20	28,5	10

Սովի ու թերսնման վերացման հիմնախնդրով զբաղվում է ՄԱԿ-ի **պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ)**: Փորձագետների կարծիքով՝ պարենային հիմնախնդրի լուծման գլխավոր ուղին բնակչությանը **պարենամթերք մատակարարող** հուսալի աղբյուրների ստեղծումն է, որը, ՊԳԿ-ի (ՖԱՕ) ձևակերպմամբ, այն իրավիճակն է, երբ բոլոր մարդիկ հնարավորություն ունեն ցանկացած պահի օգտվելու առողջ ու ակտիվ ապրելակերպի պահպանման համար անհրաժեշտ անվտանգ ու սննդաբար պարենամթերքից:

Պարենամթերքի արտադրության գլխավոր ոլորտը եղել և մնում է գյուղատնտեսությունն իր երկու հիմնական ճյուղերով՝ բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Ներկայումս պարենամթերքի արտադրության կարևոր ոլորտ են դառնում սննդի արդյունաբերության ճյուղերը: Տարբեր են բուսաբուծությունը և անասնապահությունը զարգացնելու բնական և սոցիալ-տնտեսական պայմանները աշխարհի տարբեր տարածաշրջաններում ու երկրներում: Կան տարածաշրջաններ, որտեղ ողջ տարվա ընթացքում զբաղվում են բուսաբուծությամբ և տարեկան 2-3 անգամ բերք են ստանում: Շատ են նաև այն տարածաշրջանները, որտեղ կարող են մշակել կամ միայն չորադիմացկուն, կամ միայն ցրտադիմացկուն մշակաբույսեր, իսկ բևեռամերձ և բարձրլեռնային տարածքները գյուղատնտեսական տեսանկյունից անօգտագործելի են:

Զարգացող երկրների շուրջ 60 %-ում պարենամթերքի արտադրության աճը հետ է մնում բնակչության աճի տեմպերից: Պարենամթերքի ամենամեծ պակաս

ունեցող տարածաշրջաններն ու երկրներն են Աֆրիկայի, Հարավային և Հարավարևելյան Ասիայի առավել հետամնաց երկրները: Ծանր է պարենային հիմնախնդիրը Աֆրիկայի մոտ 30 երկրներում, որտեղ պարենամթերքի արտադրության ծավալը նույնիսկ նվազել է:



Գծ. 14. Բնակչության թվի և հացահատիկի արտադրման համեմատական աճը 1950-2000 թթ.

Վերջին տասնամյակներում բնակչության թվի աճի համեմատ դանդաղել է գլխավոր պարենի՝ հացահատիկի համախառն բերքի ծավալի աճի տեմպը (գծ. 14): 1990-2005 թթ. հացահատիկի համախառն բերքի աճի միջին տարեկան տեմպը կազմել է ընդամենը 1 %, իսկ բնակչության աճինը՝ 1,3 -1,4 %: 2011-2014 թթ. հացահատիկի համախառն բերքի միջին տարեկան տեմպը (1,3 %) գերազանցել է բնակչության աճի տեմպը (1,1-1,2 %):

Բնակչության արագ աճի հետևանքով վերջին 50 տարվա ընթացքում մեկ շնչին հասնող հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները նվազել են 0,23 հա/մարդուց մինչև 0,12 հա/մարդ: Ըստ ՄԱԿ-ի կանխատեսման՝ 2030 թ. այդ ցուցանիշը կհասնի 0,08 հա/մարդու:

Զարգացող երկրներին, որտեղ ապրում է աշխարհի բնակչության 3/4-ից ավելին, բաժին է ընկնում հացահատիկի համախառն բերքի 1/3-ը, մսի, կաթի և ձվի համախառն արտադրանքի 1/5-ը: Վերջին տասնամյակներին զգալիորեն ավելացել է զարգացող երկրների կողմից պարենամթերքի ներմուծումը: Եթե 1969-1971 թթ. զարգացող երկրները ներմուծել են 20 մլն տ հացահատիկ, 1983-1985 թթ.՝ 69 մլն տ, 2000 թ.՝ 110 մլն տ, ապա 2011 թ. այն կազմել է 160 մլն տ: XXI դարի սկզբին ընդհանուր սպառվող պարենամթերքի մեջ ներմուծվող պարենամթերքի բաժինը կազմել է Աֆրիկայում՝ 13%, Լատինական Ամերիկայում՝ 15%, Մերձավոր Արևելքում՝ 23%, Արևելյան Ասիայում՝ 7%: Ներմուծվող պարենամթերքի մի մասը զարգացած երկրների կողմից (հատկապես ԱՄՆ-ի) տրամադրվել է օգնության տեսքով: Ի տարբերություն զարգացած երկրների՝ հետամնաց երկրներում ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը, այսինքն՝ բնորոշ է գյուղատնտեսության զարգացման էքստենսիվ ուղին, որի պայմաններում մեկ աշխատողը կարող է կերակրել ոչ ավելի, քան 3-5 մարդու, իսկ ինտենսիվ գյուղատնտեսության պայմաններում՝ մի քանի տասնյակ մարդու: Բելգիայում, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում գյուղատնտեսության ոլորտի մեկ աշխատողը կերակրում է 80-100 մարդու, Ճապոնիայում 1 հա վարելահողը կերակրում է 27 մարդու, Շվեյցարիայում և Նիդերլանդներում՝ 17 մարդու: Էքստենսիվ գյուղատնտեսություն ունեցող երկրներում այդ ցուցանիշը զգալիորեն ցածր է:

Պարենամթերքի արտադրության դանդաղ աճի մյուս պատճառը գյուղատնտե-

սական ամենաարժեքավոր՝ ոռոգելի հողա հան դակ ների մակերեսի աճի դանդաղումն է, իսկ որոշ երկրներում (ԱՄՆ, Չինաստան)՝ նույնիսկ կրճատումը: Ներկայումս ոռոգելի հողատարածությունները կազմում են մշակվող հողերի մոտ 18 %-ը, սակայն տալիս են գյուղատնտեսական մթերքների 40 %-ը: Աշխարհի 270 մլն հա ոռոգելի հողերից 25-30 մլն հեկտարն այս կամ այն չափով աղակալել, իսկ 80 մլն հեկտարը միաժամանակ և՛ աղակալել, և՛ ճահճակալել է: Յուրաքանչյուր տարի գյուղատնտեսական արտադրության շրջանառությունից դուրս է գալիս երկու անգամ ավելի մեծ հողային մակերես, քան մտցվում է շրջանառության մեջ: Պատճառներից մեկը քաղաքների արագ աճն է, կառուցապատված տարածքների, ճանապարհների ընդարձակումը:

Երկրագնդի ցամաքային մակերեսի միայն 57 %-ը՝ 8,7 մլրդ հեկտարն է բարեբեր: Սակայն այդ հողերն էլ չեն կարող ամբողջությամբ օգտագործվել գյուղատնտեսության համար: Այնտեղ են աճում անտառները, որոնք պետք է պահպանվեն հանուն երկրագնդի բնապահպանական հավասարակշռության: Ներկայումս երկրագնդի գյուղատնտեսական հողահանդակները կազմում են 4,6 մլրդ հա կամ ամբողջ ցամաքի 31 %-ը և բարեբեր հողերի 54 %-ը: Գյուղատնտեսական հողերի մեծ մասը (գրեթե 70%) արոտավայրերն ու խոտհարքներն են, իսկ գյուղատնտեսության մեջ հողօգտագործման ակտիվ ձևերը՝ վարելահողերը և բազմամյա տնկարկները, կազմում են ընդամենը 1,5 մլրդ հա կամ ցամաքի 11 %-ը: Գրեթե բոլոր բերրի և արժեքավոր հողահանդակները գործնականորեն յուրացված են: Նոր հողերի յուրացման զգալի պահուստներ կան

միայն Լատինական Ամերիկայում, Ավստրալիայում և Սահարայից հարավ ընկած տարածքներում (աղ. 9):

Գիտնականների մի մասը կարծում է, որ բնական գործոնները (կլիմայի չորությունը, ցածր ջերմաստիճանը, գերխոնավությունը, լանջերի թեքությունները, հողերի փոքր հզորությունը և այլն) սահմանափակում են գյուղատնտեսական հողերի ընդարձակման հնարավորու-

թյունները: Երկրագնդի բնակչության արագ աճի պայմաններում անընդհատ նվազում է գյուղատնտեսական հողահանդակներով մեկ բնակչի ապահովվածության աստիճանը: Ներկայումս աշխարհի մեկ բնակչին միջին հաշվով բաժին է ընկնում 0,68 հա գյուղատնտեսական հողահանդակ, այդ թվում՝ 0,20 հա վարելահող, իսկ 2050 թ. այն կարող է հասնել 0,07 հա-ի:

Աղյուսակ 9

Աշխարհի յուրացված և պահուստային հողային ռեսուրսներն ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	Վարելու համար պիտանի հողերը (մլն հա)	Հողագործության համար յուրացված հողերը		Յուրացման պահուստային հողերը		
		մլն հա	յուրացվածության աստիճանը	մլն հա	յուրացվածության աստիճանը	բաժինը աշխարհում
ԱՊՀ	360	230	64	130	36	13
Եվրոպա*	160	140	88	20	12	2
Ասիա*	600	460	76	140	24	14
Աֆրիկա	430	185	43	245	57	25
Հյուսիսային Ամերիկա	380	275	72	105	28	11
Հարավային Ամերիկա	410	140	34	270	66	27
Ավստրալիա	130	50	38	80	62	8
Ամբողջ աշխարհը	2470	1480	60	990	40	100

* Առանց ԱՊՀ երկրների

Աշխարհի մշակովի հողատարածությունների մեծ մասն օգտագործվում է երեք գլխավոր հատիկային բույսերի՝ ցորենի, բրնձի և եգիպտացորենի մշակության համար: Չնայած դրան՝ հիմնախնդիրը տարեցտարի ավելի է սրվում: Թույլ զարգացած երկրների զգալի մասում գերակշռում է միօրինակ սնունդը: Հարավային և Հարավարևելյան Ասիայի բնակչության հիմնական սնունդը բրինձն է (75 %), իսկ Կենտրոնական Ամերիկայի և Արևելյան Աֆրիկայի շատ երկրներինը՝ եգիպտացորենը: Գվատեմալայում սննդի ամբողջ կալորիականության 70 %-ը ստանում են եգիպտացորենից: Հայիթիում հիմնական մթերքը շաքարն է, իսկ Հոնդուրասում՝ բանանը: Մինչդեռ հայտնի է, որ միօրինակ սննդի պայմաններում օրգանիզմը չի ստանում անհրաժեշտ բոլոր նյութերը:

Աշխարհի բնակչությանը պարենամթերքով ապահովելու գործում սահմանափակ են նաև Համաշխարհային օվկիանոսի կենսաբանական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները, որոնք, ըստ գնահատականների, արդեն մոտենում են վերին սահմանին: Այս պայմաններում պահանջվում են այնպիսի արմատական միջոցառումներ, որոնք առաջիկա 15–20 տարում առնվազն պետք է ապահովեն գյուղատնտեսական արտադրանքի ծավալի 2 անգամ ավելացում, իսկ մինչև XXI դ. կեսերը՝ 4–5 անգամ:

Պարենային հիմնախնդրի լուծման համար պահանջվում են համալիր միջոցառումներ: Դրանք պետք է ապահովեն գյուղատնտեսության ինտենսիվացումը ոչ միայն առանձին երկրներում, այլև ամբողջ աշխարհում: Գյուղատնտեսության ինտենսիվության կտրուկ բարձ-

րացման գլխավոր ուղիներն են **ռոտզելի հողագործության զարգացումը, մշակաբույսերի նոր՝ բարձր բերքատու տեսակների և անասունների նոր՝ բարձր մթերատու ցեղերի բուծումը, հողի մշակման նոր մեթոդների կիրառումը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումն ու քիմիացումը**: Գիտնականները պարենամթերք ստանալու համար մեծ հույսեր են կապում **գենետիկայի և կենսատեխնոլոգիայի նվաճումների օգտագործման հետ**:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետները առաջարկել են պարենային հիմնախնդիրը լուծելու **հիմնական ուղիները**.

1) Զարգացող երկրների գյուղատնտեսությունը պետք է զարգանա ոչ միայն և ոչ այնքան հողատարածությունների մակերեսի ու անասունների գլխաքանակի ավելացման հաշվին, որքան գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման ուղիով:

2) Անհրաժեշտ է վերացնել կամ գոնե նվազեցնել պարենամթերքի կորուստները: ՄԱԿ-ի ՊԳԿ մասնագետների տվյալներով՝ միայն հացահատիկի գծով կրճողների հասցրած տարեկան վնասը կազմում է շուրջ 65 մլն տ: Զգալի կորուստներ են առաջանում նաև պարենամթերքի փոխադրման ու պահպանման ընթացքում:

3) ՄԱԿ-ը և զարգացած երկրները տնտեսապես հետամնաց երկրներին պետք է ցույց տան պարենային, ֆինանսական, տեխնիկական և տեղեկատվական օգնություն, տրամադրեն գյուղատնտեսական առաջավոր տեխնիկա, մշակաբույսերի պահպանության միջոցներ, պարարտանյութեր և խորհրդատու մասնագետներ:

4) Զարգացող կամ տնտեսապես հետամնաց երկրներում պետք է էապես ընդլայնել ոռոգման ցանցն ու ոռոգվող հողերի տարածքը, սելեկցիայի շնորհիվ ստանալ բարձր բերքատու տեսակներ: Այս և նման միջոցառումների համալիր իրականացումը, որը կոչվում է **«կանաչ հեղափոխություն»**, արդեն դրական արդյունքի է հասել հատկապես այն երկրներում, որոնք առավել հետևողականորեն են իրագործում այդ համալիր ծրագիրը:

Այս տեսանկյունից առանձնապես կարևոր են բնակչության թվով երկրագնդի երկու խոշորագույն երկրների՝ Չինաստանի և Հնդկաստանի նվաճումները:

Տնտեսապես հետամնաց երկրների սոցիալ-տնտեսական հետագա զարգա-

ցումը կնպաստի պարենային հիմնախնդրի լուծմանը:

Դրան կարող են նպաստել նաև Համաշխարհային օվկիանոսի ձկնային և այլ կենսաբանական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, մարիկուլտուրայի (աքվակուլտուրա) զարգացումը: Գիտնականները հաշվարկել են, որ եթե աշխարհի բոլոր երկրներում հաստատվի գյուղատնտեսության զարգացման այն մակարդակը, որը ներկայումս գոյություն ունի որոշ բարձր զարգացած երկրներում (Նիդերլանդներ, Դանիա և այլն), ապա բուսաբուծությունից և անասնապահությունից ստացված պարենամթերքը կբավարարի առնվազն 10–15 մլրդ բնակչության լիարժեք սննդի պահանջը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է պարենային համամոլորակային հիմնախնդրի էությունը:
2. Աշխարհի ո՞ր տարածաշրջաններում է այն դրսևորվում առավել մեծ սրությամբ և ինչո՞ւ:
3. Գնահատե՛ք երկրագնդի և նրա առանձին տարածաշրջանների ապահովվածությունը գյուղատնտեսական հողահանդակներով:
4. Նշե՛ք պարենային համամոլորակային հիմնախնդրի լուծման հիմնական ուղիները:
5. Համամոլորակային ի՞նչ այլ հիմնախնդիրների հետ է փոխադարձ կապված պարենային հիմնախնդիրը:
6. Դպրոցական այլ դասընթացներից հիշե՛ք, թե ինչպիսին է ՀՀ-ի ապահովվածությունը հողային ռեսուրսներով: XX դարի ընթացքում ՀՀ-ում ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են դրսևորվել պարենային հիմնախնդիրները:

ԹՈՒՅԼ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏԱՄՆԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ


§ 6

Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են. ռեսուրսայինը՝ բնապահպանականի, բնապահպանականը՝ ժողովրդագրականի, ժողովրդագրականը՝ պարենայինի հետ և այլն: Ներկայումս համամոլորակային հիմնախնդիրների մեծ մասի ծանրության կենտրոնն ավելի է տեղափոխվում դեպի աշխարհի թույլ զարգացած երկրներ (*քարտեզ 10*):

Չնայած վերջին մի քանի տասնամյակում ձեռք բերած տնտեսական հաջողություններին՝ զարգացող կամ, ինչպես անվանում են, երրորդ աշխարհի երկրներն իրենց զաղությանն անցյալով պայմանավորված հետամնացությունը դեռ չեն հաղ-

թահարել, քաղաքական ազատություն ձեռք բերելով՝ դեռ չեն հասել տնտեսական ազատության: Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Օվկիանիայի տասնյակ պետություններ շարունակում են մնալ թույլ զարգացած կամ տնտեսապես հետամնաց:

Այդ երկրները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով. 1) մեկ շնչին ընկնող չափազանց ցածր եկամտով (երբեմն տարեկան չի անցնում 300 դոլարից), 2) կրթության և առողջապահության զարգացման ցածր մակարդակով, 3) բնակչության սոցիալ-կենցաղային տարրական պայմանների բացակայությամբ (բնակարանների մեծ մասը ջրամատակարարում,



Քարտեզ 10. Աշխարհի երկրների խմբերն ըստ ՄՁՀ-ի

կոյուղի չունի), 4) վերանշակող արդյունաբերության բացակայությամբ կամ չափազանց թույլ զարգացմամբ (երկրի համախառն արտադրանքում նրա բաժինը սովորաբար չի անցնում 10 %-ից), 5) ազգային խոշոր պարտքի առկայությամբ և այլն:

Գոյություն ունի աշխարհի երկրների նոր դասակարգում: Բարձր զարգացած, հարուստ երկրներին դասում են Հյուսիս, իսկ թույլ զարգացած, հետամնաց երկրներին՝ Հարավ խմբավորման մեջ: Կյանքի մակարդակների տարբերությունը Հյուսիսի և Հարավի միջև համարժեք է 20:1 հարաբերությանը:

1990–ական թվականներին ՄԱԿ–ի փորձագետների կողմից մշակվել են բնակչության կյանքի որակի քանակական գնահատման որոշակի ցուցանիշներ: **Դրանցից գլխավորը մարդկային զարգացման համաթիվն (ինդեքս) է (ՄԶՀ):** Դա միասնական ցուցանիշ է, որը հաշվարկվում է մարդկանց բարեկեցությունը և զարգացումը բնութագրող **երեք գլխավոր բաղադրիչների հիման վրա:** Դրանք են՝ **1) երկարակեցությունը** (կյանքի միջին տևողությունը), **2) կրթվածությունը** (կրթության միջին տևողությունը), **3) կենսամակարդակը** (1 բնակչին ընկնող համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ)): Աշխարհի պետություններն ըստ ՄԶՀ–ի բաժանվում են չորս խմբի՝ շատ բարձր (0,8–1,0), բարձր (0,7–0,8), միջին (0,55–0,7) և ցածր (0,55–ից ցածր): Հայաստանի Հանրապետությունը դասվում է բարձր ՄԶՀ ունեցող երկրների շարքին: 2015 թ. Հայաստանի ՄԶՀ–ն 0,733 էր և 188 երկրների շարքում ՀՀ–ն զբաղեցնում էր 85–րդ տեղը: Ընդ որում, եթե հաշվի առնվեին միայն առաջին երկու ցուցանիշները (երկարակեցությունը և կրթվածությունը), ապա ՀՀ–ն կհամալրեր առաջին

60 երկրների շարքը: 2015 թ. տվյալներով՝ 0,55–ից ցածր ՄԶՀ ունեցող 45 երկրների մեծ մասը՝ 35–ը, Աֆրիկայում է:

ՄԶՀ–ի ամենացածր ցուցանիշներն ունեցող 15 երկրներից 14–ը Աֆրիկայում են (**հավելված 5**): Որպես կանոն՝ այդ երկրների բնակչության կյանքի միջին տևողությունը 45–55 տարի է, կրթության միջին տևողությունը՝ 2–3 տարի, իսկ մեկ բնակչին ընկնող ՀԱԱ–ն՝ մինչև 1000 դոլար: Բացի աֆրիկյան երկրներից, աշխարհի հետամնաց երկրների շարքում են Աֆղանստանը, Հայիթին, Նեպալը, Եմենը, Մյանման, Բանգլադեշը, Պակիստանը:

2015 թ. տվյալներով՝ աշխարհի առավել հետամնաց տարածաշրջաններում և երկրներում ապրում է 950 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 12,9 %-ը: Այդ երկրներում մեկ բնակչի հաշվով համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) միջինը կազմում է 1280 ԱՄՆ դոլար (աշխարհում 10591 ԱՄՆ դոլար է), իսկ մեկ բնակչի հաշվով էներգիայի սպառումը միջին համաշխարհային ցուցանիշից ցածր է 6 անգամ:

Հետամնացության գլխավոր դրսևորումը և, միաժամանակ, պատճառը աղքատությունն է: Ներկայումս աշխարհի բնակչության յուրաքանչյուր հինգերորդ մարդ համարվում է աղքատ:

Աշխարհում կան երկու տասնյակից ավելի երկրներ, որտեղ բնակչության կեսից ավելին աղքատներ են: Աղքատության մակարդակով աշխարհի տարածաշրջաններից առանձնանում են երկուսը՝ Աֆրիկայի Սահարայից հարավ ընկած տարածքը և Հարավային Ասիան, որտեղ բնակչության 40 %-ն աղքատ է. նրանց օրական բաժին է ընկնում մինչև 1,25 ԱՄՆ դոլար: Առանձին երկրներում՝ Բուրունդի, Նիգեր, Մոզամբիկ, Լիբերիա,

Գվինեա, Մալավի, Ռուանդա, Զամբիա, Տանզանիա, Չադ, Նիգերիա, աղքատության մակարդակն անցնում է 60 %-ից:

Ոչ աֆրիկյան երկրներից աղքատության մակարդակը 50 %-ից բարձր է Աֆղանստանում, Հայիթիում, Նեպալում, Բանգլադեշում: Աղքատների բացարձակ թվով աշխարհում առաջինը Հնդկաստանն է:

Վերջին տարիներին աղքատության մակարդակը ՀՀ-ում տատանվում է 25–30 %-ի, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 3500–4000 դոլարի սահմաններում:

Վերջին 1–2 տասնամյակների ընթացքում աղքատության մակարդակը նվազում է Լատինական Ամերիկայում և հատկապես Արևելյան ու Հարավարևելյան Ասիայի երկրներում. պատճառը երկրների սոցիալ-տնտեսական զարգացման արագացումն է:

Թույլ զարգացած երկրների հետամնացության ընդհանրական ցուցանիշ կարող է ծառայել բնակչության կյանքի միջին տևողությունը: Եթե զարգացած երկրներում այն կազմում է 80 տարի, ապա թույլ զարգացած շատ երկրներում՝ Անգոլա, Նիգերիա, Կոնգո, Մալի, Չադ, Մոզամբիկ, Սոմալի և այլն, կազմում է 45–55 տարի: Թույլ զարգացած երկրներում չափազանց բարձր է նաև մանկական մահացությունը:

Թույլ զարգացած երկրների տնտեսության բնորոշ գիծը գյուղատնտեսության բաժնի զգալի գերակշռությունն է (մի քանի տասնյակ անգամ) մշակող արդյունաբերության նկատմամբ: Բնակչության 70 %-ից ավելին ապրում է գյուղերում: Չնայած տնտեսության գյուղատնտեսական բնույթին պարենամթերքի խիստ պակաս է զգացվում: Բնակչության թվի բարձր աճի հետևանքով նվազում է մեկ շնչին

ընկնող պարենամթերքի կալորիականությունը, առավել սրությամբ է դրսևորվում պարենային հիմնախնդիրը: «Մովի աշխարհագրությունը» մեր օրերում նախ և առաջ վերաբերում է «կանաչ հեղափոխության» հետ չառնչված՝ Աֆրիկայի և Ասիայի առավել հետամնաց երկրներին, որտեղ բնակչության զգալի մասը սովյալներ և թերսնվողներ են: Բնապահպանական հիմնախնդիրները նույնպես առավել մեծ սրությամբ դրսևորվում են թույլ զարգացած երկրներում: Մի կողմից՝ դա պայմանավորված է ֆինանսական սահմանափակ հնարավորություններով և բնապահպանական նպատակներին հատկացված սուղ միջոցներով: Մյուս կողմից՝ բնակչության աղքատության պատճառով մեծ չափերի են հասնում անտառների և այլ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման ու բնական միջավայրի աղտոտման մասշտաբները:

Ինչո՞ւ է թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման հիմնախնդիրը համարվում համանորարակային: Այն շոշափում է աշխարհի բոլոր երկրների շահերը և՛ քաղաքական, և՛ տնտեսական և՛ սոցիալական առումներով: Հետամնաց երկրների բնակչության աղքատության պատճառով առաջանում են հիվանդություններ, որոնք խիստ վտանգավոր են ողջ մարդկության համար, օրինակ՝ Աֆրիկայում առաջացած ու աշխարհով մեկ տարածված ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշը (ՁԻԱՀ): Աղքատության, սովի ու գործազրկության պատճառով թույլ զարգացած երկրների տասնյակ միլիոնավոր բնակիչներ գաղթում են զարգացած երկրներ:

Զարգացող երկրների հետամնացության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Ջարգացող երկրների հետամնացության ցուցանիշները XXI դ. սկզբին

Հետամնացության տեսակը	Բնակչությունը (մլն մարդ)
Ապրում են ծայրահեղ աղքատության պայմաններում	ավելի քան 1200
Սովյալներ	ավելի քան 500
Բժշկական սպասարկումից զրկվածներ	1400
Անգրագետների թիվը մեծահասակ բնակչության մեջ	800
Դպրոց հաճախելու հնարավորություն չունեցող երեխաներ	ավելի քան 200
Ջրամատակարարման հուսալի աղբյուրներ չունեցողներ	2000
Ջեռուցման նպատակներով փայտ օգտագործողներ	2000

Աշխարհի հարուստ և աղքատ բնակչության եկամուտների տարբերությունը ոչ թե փոքրանում, այլ մեծանում է: Եթե 1960 թ. աշխարհի առավել հարուստ և աղքատ 20 % բնակչության եկամուտների տարբերությունը 30:1 հարաբերությամբ էր, 1980 թ.՝ 45:1, ապա 2000 թ. արդեն հասնում էր 64:1-ի: Մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ն թույլ զարգացած երկրներում վերջին տարիներին 25–30 անգամ ցածր էր, քան զարգացած երկրներում:

Ջարգացման մակարդակների տարբերությունը մեծ է կյանքի բոլոր ոլորտներում: ԳՏՀ ժամանակաշրջանում երրորդ աշխարհի ավելի քան 2 մլրդ գյուղական բնակիչ սննդի պատրաստման կամ բնակարանի ջեռուցման համար օգտագործում է փայտը, որը հանգեցնում է անտառների ոչնչացմանը և էկոլոգիական ճգնաժամի սրմանը: Չադի և Կամբոջայի մեկ բնակիչը հազարապա-

տիկ քիչ էլեկտրաէներգիա է սպառում, քան Նորվեգիայի բնակիչը:

Թույլ զարգացած երկրների հետամնացության մասին է վկայում զանգվածային անգրագիտությունը: XXI դ. սկզբներին 15 տարեկանից մեծ յուրաքանչյուր հինգերորդը՝ ավելի քան 800 մլն մարդ անգրագետ էր: Անգրագետների մեծ մասը կանայք էին:

Աշխատանքի միջազգային բաժանումն ընթանում է ի վնաս թույլ զարգացած երկրների: Երիտասարդ շատ երկրներ շարունակում են մնալ զարգացած արդյունաբերական երկրների հումքային կցորդը՝ տարեցտարի ավելացնելով հումքի արտահանման ծավալները: Ընդ որում՝ հումքի գները համաաշխարհային շուկայում իջնում են, մինչդեռ պատրաստի արտադրանքինը բարձրանում է: Դրան զուգահեռ աճում են թույլ զարգացած երկրների արտաքին պարտքերը՝ անցնելով 1 տրլն դոլարից:

Արտաքին պարտքերի աշխարհագրությունը լայն է, ընդգրկում է երրորդ աշխարհի բոլոր տարածաշրջանները՝ ոչ միայն առավել հետամնաց երկրները, այլև երրորդ աշխարհի տնտեսապես առաջատար երկրները (Բրազիլիան, Մեքսիկան, Արգենտինան և այլն): Պարտքերի մարումը ծանր է անդրադառնում նրանց տնտեսության վրա:

Երկրների մի մասի ծայրաստիճան հետամնացությունն ու աղքատությունն անհնար են դարձնում ամկա հարուստ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ինչը բացասաբար է ազդում համաշխարհային տնտեսության վրա: Հիշյալ երկրներում բնական միջավայրի քայքայումն ու վատթարացումը լուրջ վտանգ են առաջացնում երկրագնդի ամբողջ աշխարհագրական թաղանթի համար:

Մեծ է թույլ զարգացած երկրների բնառեսուրսային ներուժը: Դա նախ և առաջ տարածքն է, որը հավասար է երկրագնդի ցամաքի 1/3-ին: Վիթխարի են ընդերքի հարստությունները: Այդ երկրներին են բաժին ընկնում կապարի, մանգանի, կոբալտի, բոքսիտի և օգտակար հանածոների մի քանի այլ տեսակների համաշխարհային պաշարների կեսից ավելին, ջրային և ջրաէներգետիկ պաշարների գրեթե կեսը, անտառափայտի և ընդհանրապես կենսառեսուրսների զգալի մասը:

Վիթխարի բնական ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետությունը ցածր է: Ավելին՝ գերակշռում է էքստենսիվ, հաճախ՝ գիշատիչ բնօգտագործումը: Դա է պատճառը, որ էկոլոգիական ճգնաժամն, արագ տարածվելով, ընդգրկում է նորանոր

շրջաններ: Վտանգավոր չափերի են հասել հողի էրոզիան և ռոտովոդ հողերի աղակալումը: Ամեն տարի բնական բերրիությունը կորցնում և շարքից դուրս են գալիս միլիոնավոր հեկտար վարելահողեր:

Բնությանը մեծ վնաս են հասցնում պարզունակ հատումային-կրակային երկրագործությունը և էքստենսիվ արտադրան անասնապահությունը: Այդ պատճառով տեղի է ունենում շատ երկրների արագ անտառազրկում: Ծավալվում է անապատացման երևույթը:

Ավելի ու ավելի է սրվում ջրի հիմնախնդիրը: Հետամնաց երկրների մեծ մասը գտնվում է չորային կլիմայական գոտիներում, որտեղ առանց արհեստական ռոտզման գյուղատնտեսությունը զարգանալ չի կարող: Սակայն ջուրը չի բավականացնում ոչ միայն ռոտզման, այլև խմելու համար: Պարբերաբար կրկնվող երաշտները միլիոնավոր մարդկանց մատնում են սովի:

Արագ են ավելանում թույլ զարգացած երկրների մարդկային ռեսուրսները, սակայն շատ ցածր է այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Պատճառները շատ են: Աշխատանքային ռեսուրսների «ոռակր» ցածր է, այսինքն՝ ցածր է ընդհանուր և մասնագիտական գրագիտության մակարդակը, որը լուրջ խոչընդոտ է գիտատեխնիկական առաջադիմության համար: Բարձր է գործազրկության մակարդակը:

Հետամնացության հաղթահարման առաջին ու հիմնական պայմանը և հուսալի ուղին թույլ զարգացած երկրների տնտեսության արմատական բարեփոխումներն են ԳՏՀ-ի կիրառմամբ:

Առաջին հերթին դա վերաբերում է **ազգային արդյունաբերության զարգացմանը**, որը հնարավորություն կընձեռի զարգացնելու նաև գյուղատնտեսությունը, տրանսպորտը, սպասարկման ոլորտի ճյուղերը: Այս ուղղությամբ արդեն կատարվել են լուրջ քայլեր, օրինակ՝ խոշոր արդյունաբերական, էներգետիկական, տրանսպորտային, ջրատեխնիկական համալիրների և հանգույցների կառուցումը թույլ զարգացած երկրներում: Տնտեսական աճը միակ գործոնը չէ հասարակական առաջադիմության համար, անհրաժեշտ են բարեփոխումներ նաև սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում:

Երրորդ պայմանը կարող է դառնալ առավել արդարացի միջազգային տնտեսական հարաբերությունների հաստատումը: Գաղութային ժամանակաշրջանում ձևավորված հին հարաբերություններն ու կարգերը չեն կարող նպաստել երրորդ աշխարհի տնտեսական զարգացմանը: Համաշխարհային առևտրի ողջ համակարգը անհրաժեշտ է վերակառուցել թույլ զարգացած երկրների շահերին ու հետաքրքրություններին համապատասխան: Դա նշանակում է հումքի արտահանումից ստացած եկամուտների կայունացում, հումքի և պատրաստի արտադրանքի արդարացի գներ, թույլ զարգացած երկրներին նոր՝ առաջավոր տեխնոլոգիաների մատակարարման հեշտացում և այլն:

Հետամնացության հաղթահարման *երրորդ պայմանը* կարող են դառնալ ռազմական ծախսերի կրճատումը և խնայված միջոցների օգտագործումը թույլ զարգացած երկրների բնակչությանը օգնելու նպատակով: Զարգացած

երկրների կողմից օգնության անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ հիմնախնդիրը համամոլորակային է, անդրադառնում է նաև զարգացած երկրների տնտեսության և հասարակական կյանքի տարբեր բնագավառների վրա:

Ուստի միջազգային կազմակերպությունների, զարգացած երկրների կողմից միջոցառումներ են իրականացվում հիմնախնդիրը լուծելու համար: ՄԱԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվում է զարգացած, ինչպես նաև նավթ արտահանող երկրների կողմից պարենային ու ֆինանսական օգնություն առավել թույլ զարգացած երկրներին: Զարգացած պետությունների միջև պայմանավորվածություն կա, որ ամեն տարի համախառն ազգային արդյունքի ինչ-որ մասնաբաժին հատկացնեն թույլ զարգացած երկրների տնտեսական հետամնացության վերացմանը, բնապահպանական և մյուս հիմնախնդիրների լուծմանը: Սակայն **առկա հետամնացությունը հաղթահարելու նպատակով թույլ զարգացած երկրներին տրամադրվող օգնությունը պետք է զուգակցվի այդ երկրներում սոցիալ-տնտեսական արմատական բարեփոխումների իրականացման և ժողովրդավարության հաստատման հետ:**

Վերջին տասնամյակում թույլ զարգացած երկրներին զարգացման համար տարեկան տրվող օգնության ծավալները կրկնապատկվել են. նույն չափով աճել են նաև հումանիտար օգնության ծավալները: Զարգացման համար օգնությունը տրվում է գյուղատնտեսության և կրթության ոլորտներին, որոնց զարգացումը նպաստում է պարենային անվտանգության ապահովմանը:

Այսպիսով՝ թույլ զարգացած երկրների հետամնացության հաղթահարման հիմնախնդիրը համամոլորակային է և համընդհանուր, քանի որ չի կարող լուծվել առանց համաշխարհային հանրության ակտիվ մասնակցության:

Թույլ զարգացած երկրների ներկա վիճակի պահպանումը սրում է համամոլորակային այլ հիմնախնդիրներ և համաշխարհային մասշտաբով սոցիալ-տնտեսական ցնցումների վտանգ է ներկայացնում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման հիմնախնդրի էությունը: Ինչո՞ւ է այն համարվում համամոլորակային:
2. Որո՞նք են թույլ զարգացած երկրների հետամնացության պատճառները:
3. Ի՞նչ ցուցանիշներով և մասշտաբներով է բնութագրվում հետամնացությունը: Ի՞նչ խմբերի են բաժանվում երկրներն ըստ ՄՁՀ-ի:
4. Ո՞րն է թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման հիմնախնդրի կապը այլ համամոլորակային հիմնախնդիրների հետ:
5. Թ-վարկե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվե՛ք աշխարհի առավել հետամնաց ու աղքատ երկրներն ու տարածաշրջանները:
6. Բնութագրե՛ք թույլ զարգացած երկրների բնառեսուրսային և մարդկային ներուժը:
7. Որո՞նք են թույլ զարգացած երկրների հետամնացության հաղթահարման պայմաններն ու ուղիները:
8. ՀՀ-ն ինչպիսի՞ առնչություններ ունի քննարկվող հիմնախնդրի հետ:

§ 7

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐ-ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Արդի դարաշրջանում միաժամանակ տեղի է ունենում երկու հակադիր գործընթաց: Մի դեպքում՝ գլոբալացումը, պետությունների տնտեսական և տեխնոլոգիական փոխկապվածության աճը, սոցիալական կյանքի, քաղաքականության և մշակույթի վերազգայնացումը ժամանակակից աշխարհը դարձնում են ամբողջա-

կան և, որոշակի իմաստով, անբաժանելի: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ **երկրների և ժողովուրդների ազատ ինքնորոշման ու սեփական ինքնության հաստատման աճող ձգտումը աշխարհը դարձնում է ավելի անկայուն և քիչ կանխատեսելի:**


Մի շարք գիտնականներ, քաղաքական և հասարակական գործիչներ դա-

տողություններ են անում, որ ներկայումս գործող սահմանները ավելի ու ավելի են կորցնելու իրենց նշանակությունը, քանի դեռ քաղաքական–պետական և ազգային–լեզվական սահմանները միմյանց չեն համապատասխանում: Նրանք խոսում են համընդհանուր ազգային (էթնիկական) ճգնաժամի մասին, որն ընդգրկել է ողջ մոլորակը: Այն արտահայտվում է **հարյուրավոր տարածաշրջանային և տեղական ազգամիջյան ճգնաժամերով, որոնց մի մասը ստացել է ազգային հակամարտությունների բնույթ**: Դրանք առավելապես դրսևորվում են բազմազգ տարածաշրջաններում և երկրներում՝ Աֆրիկայում, Հարավարևմտյան Ասիայում, Չինաստանում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում և այլն: Եվրոպական շատ երկրներում ազգային փոքրամասնությունները՝ շոտլանդացիները և իռլանդացիները Մեծ Բրիտանիայում, կատալոնացիները և բասկերը Իսպանիայում, կորսիկացիները Ֆրանսիայում, իրենց ինքնորոշման իրավունքին առավելապես ձգտում են (պետության ներսում կամ պետությունից դուրս) խաղաղ, սահմանադրական եղանակներով: Նախկին Հարավսլավիայի փլուզման հետևանքով առաջացած սերբ–խորվաթական, սերբ–ալբանական, սերբ–մահմեդական և այլ ազգային–կրոնական տարածքային հակամարտությունները նաև պատերազմական բնույթ էին ստացել: Ազգային և կրոնական հողի վրա ընթացող հակամարտությունները մեծ թիվ են կազմում հատկապես Ասիայում և Աֆրիկայում: Դրանցից են արաբ–իսրայելական հակամարտությունը, հույն–թուրքական հակամարտությունը Կիպրոսում, քրդական

հիմնախնդիրը Թուրքիայում, Իրանում, Իրաքում և Սիրիայում, ազգային–կրոնական բնույթի (հինդուիստների, մահմեդականների, սիկհերի) հակամարտությունները Հնդկաստանի Քաշմիր, Փենջաբ և հյուսիսարևելյան շրջաններում: Ազգային հողի վրա հակամարտություններ են առաջանում նաև երկազգ պետություններում՝ Կանադայում (անգլականադացիների և ֆրանկականադացիների միջև), Բելգիայում՝ ֆլամանդացիների և վալոնների միջև և այլն: Ազգային հակամարտությունները միմյանցից տարբերվում են ձևավորման պատճառներով, դրսևորման ձևերով և տարածքային մակարդակներով: Դրանց մի մասը նաև տարածքային հակամարտություններ են (ազգային–տարածքային) և այս կամ այն չափով ներառված են պատերազմական գործողությունների մեջ:

Ամերիկացի հայտնի քաղաքագետ Ս. Հանտինգտոնի կարծիքով՝ XXI դարը կլինի «քաղաքակրթությունների հակամարտությունների» դարաշրջան: Դրանք ավելի հաճախակի կդառնան ճգնաժամերի և նույնիսկ պատերազմների սկզբնաղբյուր: Գլխավոր հակամարտությունները կլինեն ազգերի և տարբեր քաղաքակրթություններին պատկանող խմբերի միջև: Ըստ Հանտինգտոնի՝ քաղաքակրթությունների հակասությունները կլինեն երկու մակարդակներում՝ **տեղական** (հարևան ժողովուրդների միջև) և **համամոլորակային**: Համամոլորակային մակարդակով առանձնացնում է հակամարտությունը արևմտյան (քրիստոնեական) և իսլամական քաղաքակրթությունների միջև:

Պատերազմների բովանդակությունը և նպատակները կարող են շատ տարբեր



Քարտեզ 11. Տարածքային-էթնիկ հակամարտությունների հիմնական օջախները

լինել, բայց գլխավոր նպատակը եղել և մնում է աշխարհագրական տարածքի ընդարձակումը, պետական սահմանների փոփոխումը: Պետական տարածքների ու սահմանների փոփոխություններն ու վերաճնումները հիմնականում ավարտված են, բայց այժմ էլ աշխարհում հաշվվում է 300 վայր, որոնց շուրջ բոլորովորդ վեճերը տարածքային հակամարտություններ են: Դրանցից 100–ը աշխարհի, այսպես կոչված, «թեժ կետերն» են, որտեղ հակամարտությունները գիսված բախումների տեսք են ստացել:

Էթնիկ տարածքային հակամարտությունները թեև մեծ մասամբ տեղական բնույթ են կրում, սակայն հաճախ այստեղ բախվում են խոշոր տերությունների շահերը, և որոշակի պայմանների դեպքում հիմնախնդիրները կարող են ստանալ տարածաշրջանային և համամոլորակային բնույթ:

Տարածքային հակամարտություններն, ըստ իրենց բնույթի, կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) հակամարտություններ պետությունների միջև, բ) հակամարտություններ պետությունների ներսում:

Միջպետական հակամարտության օբյեկտը՝ վիճելի տարածքը, որպես կանոն, հարևան պետությունների սահմանագլխին է: Այդպիսիք են, օրինակ՝ Հնդկաստանի և Պակիստանի տարածքային վեճը Բաշմիր նահանգի համար, Ռուսաստանի և Ճապոնիայի վեճը Կուրիլյան չորս կղզիների համար: Հատկանշական է, որ Աֆրիկայի տարածքի 20 %-ը վիճելի տարածք է համարվում, իսկ պետական սահմանների 40 %-ը դեռևս սահմանագծված չէ: Աֆրիկայում թեժ կետերի մեծաքանակ լինելը բացատրվում է նրանով, որ քաղաքական ու

ազգային սահմանները հաճախ չեն համընկնում:

Եզակի են դեպքերը, երբ վիճելի տարածքները հակամարտող երկրներից շատ մեծ հեռավորության վրա են: Օրինակ՝ Ֆոլկլենդյան կղզիները հակամարտող Արգենտինայից հեռու են 500 կմ, իսկ Մեծ Բրիտանիայից՝ ավելի քան 10 հազ. կմ:

Միջպետական հակամարտությունները լուծվում են միջազգային իրավունքի նորմերի հիման վրա, թեև լուծման միջոցները տարբեր են: Նախկինում դրանք հիմնականում լուծվել են և ներկայումս մասամբ լուծվում են պատերազմի միջոցով, հաղթողի իրավունքով: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ, պատերազմի արդյունքից անկախ, վեճն իր լուծումը չի գտնում և տասնամյակներ ու հարյուրամյակներ շարունակ ձգձգվում է, վատացնում հարևան պետությունների հարաբերությունները:

Եվրոպայում վիճելի տարածքներ են Սաարի մարզը՝ Ֆրանսիայի և Գերմանիայի, Տրանսիլվանիան՝ Հունգարիայի ու Ռումինիայի, Մակեդոնիան՝ Բուլղարիայի, Հունաստանի և Սերբիայի, Սիլեզիան՝ Լեհաստանի ու Գերմանիայի միջև և այլն: Ներկայումս տարածքային վեճերի մի մասը համարվում է վերջնականապես լուծված, մյուսը դեռևս «ծխում է» և ցանկացած պահի կարող է սրվել:

Տարածքային վեճերը երբեմն լուծվել են խաղաղ ճանապարհով՝ երկկողմ ու բազմակողմ բանակցությունների միջոցով կամ էլ Միջազգային դատարանի վճռով:

Եվրոպայում տարածքային վեճի խաղաղ լուծման օրինակ է **Տրիեստը**: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Տրիեստին հավակնում էին Իտալիան ու Հարավսլավիան (Սլովենիան): Երկարատև բանակցություններից հետո

հակամարտող կողմերը համաձայնեցին բաժանել այդ տարածքը: Արևմտյան փոքր մասը՝ Տրիեստ նավահանգստով, անցավ Իտալիային, իսկ արևելյան մեծ մասը՝ Հարավարևելյան (Սլովենիային):


Խաղաղ սահմանային փոփոխությունների միջոցներն ու պատճառները կարող են տարբեր լինել: Երկու պետությունների միջև կարող է կատարվել համարժեք տարածքային փոխանակում, օրինակ՝ Թուրքիայի և Իրանի միջև. բանակցությունների արդյունքում Թուրքիան ստացավ Նախիջևանից բաժանող իրանական տարածքը՝ փոխարենը գիջելով ավելի հարավ ընկած համարժեք տարածություն: Պատահում է նաև, որ մի պետություն, հաշվի առնելով վիճելի տարածքի բնակչության կամքը, կարող է այն գիջել հարևան պետությանը և փոխարենը դրամական կամ որևէ այլ հատուցում ստանալ: Կան նաև տարածքը վաճառելու դեպքեր, օրինակ՝ Ռուսաստանի կողմից Ալյասկայի վաճառքը ԱՄՆ-ին 1867 թ.:

Ներպետական տարածքային-ազգային բնույթի հակամարտություններ կան Հայաստանի Հանրապետության հարևան չորս երկրներում: Դրանք են՝ քրդերի հիմնախնդիրը Թուրքիայում, աբխազների և օսերի հիմնախնդիրները Վրաստանում, լեզգիների հիմնախնդիրը Ադրբեջանում, ադրբեջանցիների հիմնախնդիրը Իրանում:

Ներպետական տարածքային-ազգային հակամարտությունների համար բնորոշն այն է, որ դրանք ծավալվում են նույն օրինաչափություններով և անցնում են զարգացման նույն փուլերը: Գիտնականներն առանձնացնում են հակամարտությունների զարգացման հետևյալ չորս փուլերը՝ **1) թաքնված, 2) բացա-**

հայտ դրսևորման, 3) ակտիվ ընթացքի, 4) հետևանքների (գծ. 15):

Դրանք նման են մարդու հիվանդության փուլերին: Հակամարտությունները նույնպես հիվանդություն են, ընդ որում՝ խիստ վտանգավոր հիվանդություն, որովհետև սպառնում են ոչ թե մեկ անհատի, այլ ամբողջ հասարակությանը, հազարավոր ու միլիոնավոր անհատների: Այդ հիվանդությունը նույնպես բուժման կարիք ունի, և ճիշտ բուժելու համար անհրաժեշտ է պարզել, թե որքան է խորացել, զարգացման որ փուլում է գտնվում:



Գծ. 15

Առաջին փուլում ազգային փոքրամասնությունը կարող է հայտնել այն կարծիքը, թե **իբ նկատմամբ թույլ է տրվում անարդարություն, խտրականություն:** Այս փուլը հակասության խորացում թույլ չտալու լավագույն ժամանակն է: Ազգային մեծամասնությունը, որը տվյալ պետության մեջ իշխող ազգն է, պետք է ընդունի և իրականացնի այնպիսի պետական որոշումներ, որոնք բոլոր ազգությունների ներկայացուցիչների համար ապահովեն **միասնական և լիակատար քաղաքացիության սկզբունքը՝ թույլ չտալով որևէ խտրականություն:**

Երկրորդ փուլի առաջին տազնապալի ազդանշանները բացահայտ փոխադարձ մեղադրանքներն են, լուրերի տարածումը, թե մի կողմը մյուս կողմի նկատմամբ չարամիտ մտադրություններ ունի, կատարել է անօրինական գործողություններ ու սպանություններ, արտաքսում մշտական բնակության վայրից ու բռնի վերաբնակեցում: Այս փուլում գրեթե անկարելի է կանխել հակամարտության հետագա խորացումը և արյունահեղությունը: Իշխանություններից պահանջվում է **վճռականորեն կանխել բռնությունները, բացահայտել ու պատժել անօրինական գործողություններ՝ նախաձեռնողներին ու ղեկավարներին՝** կանխակալ վերաբերմունք թույլ չտալով կողմերից որևէ մեկի նկատմամբ:

Երրորդ փուլը հակամարտության բորբոքման վիճակն է, երբ նախորդ փուլերում չի հաջողվել հակամարտությունը կարգավորել, և այն վերաճել է **ապստամբության ու կազմակերպված մարտական գործողությունների:** Այս փուլում սովորաբար հակամարտող կողմերին արտասահմանից բացահայտ օժանդակություն են ցույց տալիս իրենց հայրենակիցները: Հաճախ հակամարտությունը միջազգայնացվում է, այսինքն՝ դրա անմիջական մասնակիցները, ի վիճակի չլինելով հակամարտությունը կարգավորել սեփական ուժերով, դիմում են միջազգային հանրության օգնությանը:

Միջազգային կազմակերպությունների գլխավոր նպատակն է **ցանկացած միջոցներով դադարեցնել մարտական գործողությունները, հաստատել զինադադար**, որից հետո բանակցությունների միջոցով ձեռնամուխ լինել հակամարտության քաղաքական լուծմանը:

Չորրորդ փուլն ընդգրկում է մի տևական ժամանակաշրջան, որպեսզի հրադադարի հաստատումից հետո վերականգնվի կայուն խաղաղությունը, և փոխադարձ վստահություն հաստատվի հակամարտող կողմերի միջև:

Հակամարտության հետևանքները կարող են լինել **երկու տեսակի:** *Առաջին՝ վերադարձ հակամարտության ելակետային վիճակին և պետության ներսում քաղաքական ու սոցիալ-տնտեսական բարեփոխումների անցկացում:* Այդ դեպքում պետության տարածքային ամբողջականությունը պահպանվում է: Կարևոր պայմանն այն է, որ բարեփոխումները ընդունելի լինեն հակամարտող կողմերի համար և նախատեսեն փոքրամասնություն կազմող ազգային համայնքին պետության ներսում քաղաքական ինքնորոշման իրավունք տրամադրելը կամ իրավունքների ընդլայնումը:

Երկրորդ՝ փոքրամասնություն կազմող ազգային համայնքի անջատումը մեծամասնության պետությունից և սեփական ինքնիշխան պետության ստեղծումը: Տարածքային-ազգային

հակամարտության այդպիսի հետևանքի նորագույն օրինակներ են Նամիբիան (անջատվեց Հարավաֆրիկյան Հանրապետությունից), Էրիթրեան (անջատվեց Եթովպիայից) և Հարավային Սուդանը (անջատվեց Սուդանից), որոնք դարձան անկախ պետություններ, պաշտոնապես ճանաչվեցին միջազգային հանրության կողմից և ընդունվեցին ՄԱԿ-ի անդամ:

Նման օրինակ է նաև հետխորհրդային տարածքում ինքնահռչակ, դե ֆակտո պետությունների ստեղծումը, որոնք չեն ճանաչվել միջազգայնորեն, ինչպես նաև այն պետությունների կողմից, որոնցից անջատվել են: Դրանք են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (անջատվել է Ադրբեջանից), Մերձդնեստրյան Հանրապետությունը (անջատվել է Մոլդովայից), Աբխազիայի և Հարավային Օսեթիայի Հանրապետությունները (անջատվել են Վրաստանից):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) որպես հայկական երկրորդ անկախ պետություն հռչակվեց Խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) և նրա հարևան հայաբնակ Շահումյանի վարչական շրջանի բնակչության միահամուռ կամքով: ԼՂՀ հռչակումը լիովին համապատասխանում էր ԽՍՀՄ օրենքներին և միջազգայնորեն ճանաչված՝ ազգերի ինքնորոշման իրավունքին: Չնայած դրան՝ Ադրբեջանը փորձեց ռազմական ուժով ճնշել հայ բնակչությանը: Ռազմական գործողությունների արդյունքում արցախցիները պաշտպանեցին ինքնորոշման իրենց իրավունքը և ստեղծեցին անվտանգության գոտի: Ձևավորվեցին ԼՂՀ ներկայիս սահմանները:

Միջպետական տարածքային հարաբերություններն ամբողջությամբ վերաբերում են միջազգային քաղաքականության ոլորտին, իսկ ներպետական (ազգամիջյան) հարաբերությունները՝ մասամբ, երբ զարգացման որոշակի փուլում միջազգայնացվում են և դադարում պետության ներքին հարցը լինելուց:

Տարածքային և ազգային հակամարտությունների լայն տարածումը առաջացրել է համայն մարդկության, միջազգային տարբեր կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ և այլն) մտահոգությունը, և դրանց լուծումը պետք է փնտրել միջազգային հարաբերությունների ոլորտում: Իսկ միջազգային հարաբերությունները կարգավորվում են միջազգային իրավունքով:

Մակայն ներկայումս գործող միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները երբեմն չեն նպաստում մեծ տարածում ստացող տարածքային հակամարտությունների (հատկապես ներպետական) և դրանց ստեղծած հիմնախնդիրների լուծմանը:

Հակասության մեջ են մտնում միջազգային իրավունքի երկու սկզբունք՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը և պետության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը: Որպես կանոն՝ նորանկախ պետությունը հենվում է առաջին սկզբունքի վրա: Դրան հակառակ՝ արդեն գոյություն ունեցող և ճանաչված պետությունը, որից պետք է անջատվի նորը, պահանջում է երկրորդ սկզբունքի կիրառումը:

Մասնագետների մի մասն այն կարծիքին է, որ **այդ երկու սկզբունքների միջև առկա հակասությունը կարելի է հաղթահարել, եթե բազմակողմանիորեն հաշվի**

առնվեն յուրաքանչյուր հակամարտության բոլոր յուրահատկությունները, և հակամարտող կողմերը փոխհամաձայնության հասնելու բարի կամք դրսևորեն:

Լայն տարածում է ստանում այն կարծիքը, որ **հասունացել է տարածքային և ազգային հակամարտությունների լուծման նոր սկզբունքների ու քաղաքակիրթ եղանակների մշակման ժամանակը:** Նոր պայմաններում այլևս անհնար է պնդել, որ գոյություն ունեցող ամեն մի պետություն պետք է մնա միասնական, և պետական սահմանների ոչ մի փոփոխություն չպետք է տեղի ունենա: Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր հակամարտության շուրջ ստեղծված իրադրության առանձնահատկությունները: Ինքնորոշման պահանջը կարող է

լինել օրինական ճգտումների արտահայտություն, և այն չպետք է անտեսվի: Կարող է նոր պետություն ստեղծելու անհրաժեշտություն ծագել, ուստի պետք է գտնել անջատման խաղաղ ճանապարհ: Ազգերի ինքնորոշմանը գերակայություն տվող մոտեցման լավագույն օրինակ կարող է լինել Կոսովո պետության ստեղծումը Սերբիայի սահմաններից դուրս, դրա ճանաչումը տասնյակ պետությունների ու միջազգային հանրության կողմից և անկախության օրինականության հաստատումը միջազգային դատարանի կողմից: Դա նոր հնարավորություններ և հեռանկարներ է ստեղծում տարբեր պետությունների և միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ի անկախության ճանաչման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտեք ազգամիջյան ճգնաժամի մասին:
2. Ի՞նչ են տարածքային հակամարտությունները: Ըստ բնույթի՝ ի՞նչ խմբերի են դրանք բաժանվում:
3. Որո՞նք են հակամարտությունների զարգացման փուլերը: Թվարկե՛ք և բնութագրե՛ք:
4. Ներկա ժամանակաշրջանում ակտիվ ընթացքի մեջ գտնվող ի՞նչ միջպետական և ներպետական ազգային-տարածքային հակամարտություններ գիտեք:
5. Ո՞ր մակարդակում և ոլորտում պետք է փնտրել տարածքային հակամարտությունների լուծումը: Նշե՛ք լուծման հիմնական միջոցները:
6. Որո՞նք են ազգային-տարածքային հակամարտությունների լուծման միջազգային իրավունքի երկու հիմնական սկզբունքները: Ի՞նչ հակասություններ կան դրանց միջև:
7. Ո՞րն է հայ-ադրբեջանական հակամարտության էությունը: Որո՞նք են հակամարտության լուծման հնարավոր ուղիները:

Համաշխարհային օվկիանոսը ջրի ջերմաստիճանի հաստատունության, հանքային աղերի կայուն կազմի, գերմանուշակագույն ճառագայթների կործանարար ազդեցությունից բնական պաշտպանվածության և հիդրոդինամիկայի այլ հատկությունների շնորհիվ նպաստել է կյանքի բազմազան ձևերի առաջացմանը և էվոլյուցիային (կենդանի օրգանիզմների կարգերի և ենթակարգերի 75 %-ը առաջացել է ջրոլորտում): Օվկիանոսը մթնոլորտի թթվածնի կեսի և մարդկության համար սպիտակուցային նյութերի 20 %-ի մատակարարն է:

Օվկիանոսը ոչ միայն հսկայական կենսաբանական, էներգետիկ և հանքահումքային ռեսուրսների պահեստարան է, քիմիական, դեղագործական և արդյունաբերության այլ ճյուղերի համար սկզբնական հումքային բազա, այլև երկրագնդի կլիմայի կարգավորիչ է՝ ջերմային իներցիայի և ջրային զանգվածների շրջանառության շնորհիվ:

Օվկիանոսային տարածքները նպաստում են համաշխարհային շփումների ակտիվացմանը, համաշխարհային տրանսպորտային համակարգի ձևավորմանը և աշխատանքի աշխարհագրական բաժանմանը:

Հազարամյակներ շարունակ օվկիանոսը եղել է երկրի վրա մարդկության գոյության պահպանման կարևորագույն աղբյուրներից մեկը: Օվկիանոսային ավիամերձ շրջաններում ձևավորվել են քաղաքակրթական օջախներ, որոնցից առավել հայտնին միջերկրածովյան քաղաքակրթությունն էր:

XX դարի երկրորդ կեսին օվկիանոսի և ցամաքի շփման գոտում ձևավորվեց **համաշխարհային օվկիանոսային տնտեսությունը**, որն ընդգրկում է արդյունահանող և վերամշակող արդյունաբերությունը, էներգետիկան, տրանսպորտը, առևտուրը, ռեկրեացիան և այլն:

Օվկիանոսային տնտեսությունը սկսել է ձևավորվել ավելի ուշ, քան համաշխարհային տնտեսության այլ ոլորտները: Իր գոյության սկզբնական ժամանակներից մարդը զբաղվել է ձկնորսությամբ և որսորդությամբ, ջրիմուռների հանույթով, սակայն այդ ամենը ծովային տնտեսություն չէր:

Մինչև XX դարի կեսերը օվկիանոսային տնտեսությունը տալիս էր համաշխարհային եկամտի 1–2 %-ը, և Համաշխարհային օվկիանոսի համամոլորակային հիմնախնդիր գոյություն չուներ:

Համաշխարհային արտադրողական ուժերի արագ վերելքը, մասնավորապես՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների բուռն զարգացումը և աշխատանքի աշխարհագրական բաժանման ընդարձակումն ու խորացումը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում տնտեսական շրջանառության մեջ են ներառել Համաշխարհային օվկիանոսի բազմազան ռեսուրսների մեծաքանակ պաշարներ, որի հետևանքով օվկիանոսի հիմնախնդիրները ձեռք են բերել համամոլորակային բնույթ: Այդպիսի հիմնախնդիրներ են **օվկիանոսի վտանգավոր աղտոտումը, նրա կենսաբանական մթերատվության նվազումը, հանքային և էներգետիկ հա-**

բուստ ռեսուրսների յուրացումը և դրանց բաշխման իրականացումը և այլն:

Համաշխարհային օվկիանոսի հիմնականդիրներից ամենակարևորը վտանգավոր չափերի հասնող աղտոտումն է, որը սերտորեն կապված է ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ նրա մասը կազմող **օվկիանոսային տնտեսության** զարգացման հետ:

Համաշխարհային օվկիանոսի բազմաբնույթ օգտագործումն առանձնապես կտրուկ աճել է վերջին տասնամյակների ընթացքում: Օվկիանոսային ուղիներով են կատարվում համաշխարհային բեռնափոխադրումների 80 %-ից ավելին և միջազգային առևտրային փոխադրումների գրեթե 95 %-ը: ԳՏՀ-ը կտրուկ կերպով փոխել է լցանավերի չափերը և տարողունակությունը: Դրանց բեռնատարողունակությունը հասել է մինչև 400 հազ. և ավելի տոննայի: Նկատելիորեն ավելացել է աշխարհի առաջատար նավահանգիստների բեռնաշրջանառությունը, ձևավորվել են նավահանգստաարդյունաբերական խոշոր համալիրներ: Ցամաքում արտադրողական ուժերի ընդհանուր տեղաշարժը դեպի առափնյա շրջաններ զգալիորեն մեծացրել է օվկիանոսային շատ շրջանների ծանրաբեռնվածությունը: Լայն զարգացում է ունեցել ստորջրյա խողովակաշարային տրանսպորտը: Վերջինս Միջերկրական և Հյուսիսային ծովերում ու Մեքսիկական ծոցում դարձել է հեղուկանավերի լուրջ մրցակիցը: Օվկիանոսի հատակի տակով անցկացվել են երկաթուղային և ավտոմոբիլային թունելներ: Ճապոնական Հոնյու և Հոկայդո կղզիները միացված են ստորջրյա «Մեյկուն» կոչվող թունելով, որն ունի 54 կմ երկարություն: Նմանա-

տիպ թունել կա նաև Լա Մանշ նեղուցի հատակում:

Բացի բուն օվկիանոսային և ծովային տարածքներից, վերջին տասնամյակներին աճել է նաև ափամերձ շրջանների **ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունը**: Միայն Միջերկրականի ափերին տարեկան հանգստանում է մոտ 100 մլն մարդ: Ափամերձ գոտու բազմաթիվ հատվածներ վերածվել են հյուրանոցների, հանգստյան տների ու առողջարանների համատարած շղթայի:

Արագ տեմպերով աճում են օվկիանոսի կենսաբանական ռեսուրսների արդյունահանումը և վերամշակումը: Տարբեր երկրների գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օվկիանոսից վերցվող կենսազանգվածը (առանց ձևավորված հավասարակշռությունը խախտելու) կարելի է հասցնել մինչև 180–200 մլն տոննայի, իսկ որպես լրացուցիչ աղբյուր կարելի է զարգացնել նաև **ծովային բուսաբուծությունը և ձկնաբուծությունը** (մարիկուլտուրան): Ռեսուրսները պետք է օգտագործվեն խելացի հարկավոր է ոչ թե ուժասպառ անել, այլ բազմապատկել օվկիանոսի մթերատվությունը: Մինչդեռ օվկիանոսային ձկնորսության նկատմամբ միջազգային հուսալի հսկողության բացակայությունը, օվկիանոսի բաց շրջաններում նոր տարածքների դանդաղ յուրացումը, ինչպես նաև օվկիանոսի աղտոտվածության ծավալների մեծացումը սահմանափակում են պարենամթերքի այդ աղբյուրի հնարավորությունները: Դրա վառ ապացույցը կետերի, ծովացույների, փոկերի և արժեքավոր այլ կենդանիների անխնա որսն է և ոչնչացումը, չնայած որ կան միջազգային համաձայնագրեր՝ դրանց որոշ տեսակներ-



Նավթարդյունահանում օվկիանոսի հատակից

րի որսի արգելման կամ սահմանափակումների վերաբերյալ:

Դեռևս XX դարի կեսերին գիտնականները նախազգուշացնում էին, որ Համաշխարհային օվկիանոսի մթերատվությունն էապես նվազում է աղտոտվածության ծավալների մեծացման պատճառով: Արդեն XX դարի վերջին ձկան և օվկիանոսային այլ բարիքների որսը կայունացավ 95–100 մլն տոննայի սահմաններում: Միայն Պերուի ափամերձ շրջաններում 1970–ական թվականներին անչոուսի որսը նվազեց 5 անգամ: Քիչ ավելի ուշ որսի նվազման ցուցանիշներ արձանագրվեցին նաև Ատլանտյան օվկիանոսի ջրերում:

Համաշխարհային օվկիանոսում ձկնորսության հիմնական դիրքերն ավելի բարդացան այն բանից հետո, երբ մտցվեց ափամերձ երկրների, այսպես կոչված, «տնտեսական գոտին» (200–մղոնանոց

գոտին): Այդ գոտում, որը կազմում է Համաշխարհային օվկիանոսի տարածքի 40 % –ը (150 մլն քկմ), ափամերձ երկրներն ունեն բացառիկ իրավունք բոլոր տեսակի հարստությունների նկատմամբ: Այս հանգամանքը զգալիորեն բարդացնում է օվկիանոսային այդ տարածքների նկատմամբ միջազգային վերահսկողության իրականացումը:

XX դարի 70–ական թվականների էներգետիկ ճգնաժամից հետո կտրուկ կերպով ավելացել է օվկիանոսի ծանծաղուտային շրջաններում նավթի և գազի արդյունահանումը: Ստորջրյա նավթարդյունահանման խոշոր շրջաններ են դարձել Պարսից և Մեքսիկական ծոցերը, Կալիֆոռնիական ծովափը, Ալյասկայի ափամերձ շրջանը, Հյուսիսային ծովը: Ընդ որում՝ նավթային պլատֆորմները թվարկված շրջաններում երբեմն ավելի

«խիտ» են, քան ցամաքում: Օվկիանոսի խորքայա շրջաններից սկսել են արդյունահանել երկաթամանգանային խտացումներ (կուտակումներ), որոնք պարունակում են ավելի քան 30 տարբեր տեսակի մետաղներ: Իսկ ավիամերձ շրջաններից արդյունահանում են արդյունաբերական կարևորագույն նշանակություն ունեցող իւրենիտի, ցիրկոնիումի, կասետերիտի և այլ մետաղների պաշարներ:

Համաշխարհային օվկիանոսային տնտեսության՝ վերը նշված ուղղությունների կտրուկ զարգացումը հատկապես XX դարի վերջին տասնամյակներին հանգեցրել է օվկիանոսի աղտոտման ծավալների ավելացմանը: Տարեկան օվկիանոս է թափվում 3–5 մլն տոննա նավթ և նավթամթերք, քաղաքների ու արդյունաբերական ձեռնարկությունների թափոններ, որոնց թվում քիչ չեն ծանր մետաղները, իսկ երբեմն նաև բեռնարկղային ռադիոակտիվ թափոնները: Առանձնապես շատ են աղտոտված Համաշխարհային օվկիանոսի ներքին ծովերը (Հյուսիսային, Բալթիկ, Միջերկրական ծովերը, Պարսից ծոցը):

Օվկիանոսի աղտոտման 70 %-ից ավելին բաժին է ընկնում մայրցամաքային աղտոտման աղբյուրներին: Գետերի, գյուղատնտեսական հոսքաջրերի և մթնոլորտի միջոցով օվկիանոս է հասնում արդյունաբերական և շինարարական ձեռնարկությունների թափոնների, գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատների և քիմիական պարարտանյութերի մի մասը: Դրանց մեջ առկա առանձին թունավոր նյութեր տարածվում են օվկիանոսում և վնասում նրա օրգանական աշխարհը:



Շովային բեռնափոխադրում

Համաշխարհային օվկիանոսի աղտոտիչների մեջ գլխավորը նավթն ու նավթամթերքներն են: Դրանք բացասական մեծ ազդեցություն են թողնում օվկիանոսի օրգանական աշխարհի վրա: Օվկիանոսի առանձին շրջաններում ձևավորված **նավթային թաղանթը** խախտում է գազաջերմափոխանակությունը, նվազեցնում է գոլորշացումը: Օվկիանոսի 1 լ ջրում 1 գ նավթի պարունակության դեպքում պլանկտոնն ամբողջովին վերանում է:

Տարեկան միջին հաշվով օվկիանոս է թափվում շուրջ 10 հազ. տ սնդիկ և մոտ 2 մլն տ կապար: Օվկիանոսի՝ այս ծանր մետաղներով աղտոտումը հանգեցնում է կենդանի օրգանիզմների ոչնչացման:

Ատոմային զենքի ստորգետնյա փորձարկումները, ատոմային սուզանավերի



Օվկիանոսի ափամերձ աղբակույտեր

վթարները, ինչպես նաև ափամերձ ատոմակայանների հեղուկ թափոնները օվկիանոսը վարակում են **ռադիոակտիվ** նյութերով:

Օվկիանոսի համար իսկական չարիք է դարձել, այսպես կոչված, **կոշտ աղբը՝** մետաղային, թղթային թափոնները, պլաստմասսայից և ապակյա տարաները: Մրանք օվկիանոսային հոսանքների հետևանքով կուտակվում են օվկիանոսի համեմատաբար հանդարտ տեղամասերում՝ առաջացնելով «**համաշխարհային աղբակույտեր**»:

Վերջին տարիներին ընդունվել են մի շարք միջազգային համաձայնագրեր Համաշխարհային օվկիանոսի աղտոտումը սահմանափակելու վերաբերյալ: Մակայն պետք է նկատի ունենալ, որ օվկիանոսի

էկոլոգիական հիմնախնդիրներն այնքան սուր են, որ ժամանակն է անդրադառնալ դրանց լուծմանը: Երկրագնդի ցամաքը և օվկիանոսը մեկ անքակտելի միասնություն են. չկարողանալով պահպանել օվկիանոսը՝ մարդկությունը հազիվ թե կարողանա անվնաս պահել ցամաքը: Հետևաբար մարդկության ապագան կախված է նաև հասարակության և օվկիանոսի փոխներգործության ուղղությունից ու վիճակից:

Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրները միաժամանակ և՛ տնտեսական են, և՛ էկոլոգիական, և՛ տեխնիկական, և՛ սոցիալական:

Այդ հիմնախնդիրների խելամիտ լուծումից է կախված մարդկության ապագան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ դեր ունի Համաշխարհային օվկիանոսը Երկիր մոլորակի և մարդու համար:
2. Ռեսուրսների ի՞նչ տեսակներ և պաշարներ ունի Համաշխարհային օվկիանոսը:
3. Երբ է ձևավորվել համաշխարհային օվկիանոսային տնտեսությունը և ի՞նչ դեր ունի:
4. Ո՞րն է Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդրի էությունը, և ինչո՞ւ է այն առաջացել:
5. Որո՞նք են Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդրի գլխավոր ուղղությունները:
6. Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդրի լուծումը համամոլորակային ո՞ր հիմնախնդիրների լուծմանը կարող է նպաստել:
7. Ի՞նչ ուղիներով կարելի է լուծել Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2


Մարդկության համանորակային հիմնախնդիրները

Առաջադրանք 1. Տրված գծապատկերում լրացրե՛ք մարդկության համանորակային հիմնախնդիրներից առավել հրատապ համարվող ութը:

ա) Սլաքներով ցնյց տվե՛ք առանձին հիմնախնդիրների միջև կապը:

բ) Գրե՛ք տարբեր հիմնախնդիրների միջև կապերի բովանդակությունը:

գ) Կատարե՛ք եզրակացություն համանորակային հիմնախնդիրների կապի և դրանց համանորակային զարգացման վերաբերյալ:



Առաջադրանք 2. Լրացրե՛ք նախադասությունները:

1) Համանորակային հիմնախնդիրների լուծման համար պահանջվում է

2) Համանորակային հիմնախնդիրների լուծման համար պետք է գործի հետևյալ սկզբունքը. « _____ »:

3) Հումքային ռեսուրսների հիմնախնդիրն ունի երկու կողմ.

1. _____

2. _____

4) Եթե շրջակա միջավայրը չի կարողանում ինքնավերականգնվել մարդու գործունեության հետևանքներից, սպա _____

5) Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրներին բաժին է ընկնում աշխարհի բնակչության փարեկան աճի _____

6) Երկրագնդի ցամաքային տարածքի միայն _____ %-ն է բարեբեր:

7) Համաշխարհային օվկիանոսի համար առաջնահերթ են համարվում հետևյալ հիմնախնդիրները՝ _____

8) Տարածքային հսկամարտություններն ըստ բնույթի կարելի է բաժանել երկու խմբի.

ա) _____

բ) _____

Առաջադրանք 3. Հակիրճ ներկայացրե՛ք մարդկության համամոլորակային հիմնախնդիրներից որևէ մեկը հետևյալ կառուցվածքով.

- ա) հիմնախնդրի էությունը և նշանակությունը,
- բ) հիմնախնդրի առաջացման պատճառները,
- գ) հիմնախնդրի աշխարհագրական տարածումը,
- դ) հիմնախնդրի լուծման ուղիները,
- ե) եզրակացություններ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են համամոլորակային հիմնախնդիրների էությունն ու առաջացման պատճառները: Ինչո՞վ են համամոլորակային հիմնախնդիրները տարբերվում տարածաշրջանային հիմնախնդիրներից:

2. Նշե՛ք համամոլորակային հիմնախնդիրները, փորձե՛ք բացատրել դրանց միջև եղած կապերը: Որո՞նք են համամոլորակային հիմնախնդիրների լուծման անհրաժեշտ պայմանները:

3. Բացատրե՛ք հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդրի էությունն ու առաջացման պատճառները, տարածաշրջանային դրսևորումները: Հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ գիտեք:

4. Ինչպե՞ս է առաջացել բնապահպանական հիմնախնդիրը, ինչո՞ւ է այն համամոլորակային բնույթ կրում: Ինչպե՞ս է կապված համամոլորակային այլ հիմնախնդիրների հետ:

5. Օգտվելով դասագրքի աղյուսակներից և այլ փաստական նյութերից՝ ցո՛յց տվե՛ք բնապահպանական հիմնախնդրի տարածաշրջանային դրսևորման աշխարհագրական առանձնահատկությունները: Բնապահպանական հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ գիտեք:

6. Բացատրե՛ք ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի էությունն ու առաջացման պատճառները: Ինչպե՞ս է այն կապված համամոլորակային այլ հիմնախնդիրների հետ:

7. Օգտագործելով դասագրքի քարտեզների, գրաֆիկների, աղյուսակների փաստական նյութերը՝ ցո՛յց տվե՛ք ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի տարածաշրջանային դրսևորումներն ու աշխարհագրական առանձնահատկությունները: Հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ գիտեք:

8. Բացատրե՛ք պարենային համամոլորակային հիմնախնդրի էությունն ու առաջացման պատճառները: Ինչպե՞ս է այն կապված համամոլորակային այլ հիմնախնդիրների հետ:

9. Դասագրքում տրված փաստական նյութերի հիման վրա փորձե՛ք պարզել պարենային հիմնախնդրի դրսևորման տարածաշրջանային առանձնահատկությունները: Նշե՛ք հիմնախնդրի լուծման հիմնական ուղիները:

10. Որո՞նք են թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման հիմնախնդրի էությունն ու առաջացման պատճառները: Ինչպե՞ս է այդ հիմնախնդիրը կապված համամոլորակային այլ հիմնախնդիրների հետ:

11. Դասագրքում տրված քարտեզների և աղյուսակների հիման վրա փորձե՛ք բացահայտել թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման հիմնախնդրի տարածաշրջանային դրսևորումներն ու աշխարհագրական առանձնահատկությունները: Նշե՛ք թույլ զարգացած երկրների հետամնացության հաղթահարման պայմաններն ու ուղիները:

12. Որո՞նք են ազգային–տարածքային հակամարտությունների էությունը, առաջացման պատճառներն ու զարգացման փուլերը: Ինչպիսի՞ն են հակամարտությունների տարածման մասշտաբներն ու համամլորակային բնույթը:

13. Տարածքային հակամարտությունների լուծման՝ միջազգային իրավունքի վրա հիմնված ի՞նչ սկզբունքներ և հնարավոր ուղիներ գիտեք:

14. Ո՞րն է Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդրի էությունը, ինչպե՞ս է այն առաջացել: Նշե՞ք հիմնախնդրի կապը այլ հիմնախնդիրների հետ և լուծման հիմնական ուղիները:

15. Ի՞նչ կապեր և առնչություններ եք տեսնում համամլորակային և տարածաշրջանային հիմնախնդիրների միջև: Հայաստանի Հանրապետությունում ինչպե՞ս են դրսևորվում տարբեր համամլորակային հիմնախնդիրները: Որո՞նք են առավել մեծ սրությամբ արտահայտվում: Լուծման ի՞նչ ուղիներ գիտեք:

Հավելված 1

**Աշխարհի գլխավոր անապատային շրջանների
աշխարհագրական հիմնական բնութագիրը**

Անվանումը	Տարածքը (հազ. քկմ)	Տիրապետող բա- ցարձակ բարձրություն- ները (մ)	Առավելագույն ջերմաստիճա- նը (°C)	Նվազագույն ջերմաստիճա- նը (°C)	Տեղումների միջին տարեկան քանակը (մմ)
Միջին Ասիա և Ղազախստան					
Կարակում	350	100–500	+50	–35	70–100
Ուստյուրտ և Մանղիշլակ	200	200–300	+42	–40	80–150
Կզըլկում	300	50–300	+45	–32	70–180
Բետպակ Դալա	75	300–350	+43	–38	100–150
Կենտրոնական Ասիա					
Տակլա–Մական	271	800–1500	+37	–27	50–75
Ալաշան	170	800–1200	+40	–22	70–150
Բեյշան	175	900–2000	+38	–24	40–80
Օրդոս	95	1100–1500	+42	–21	150–300
Ցայղամ	80	2600–3100	+30	–20	50–250
Գոբի	1050	900–1200	+45	–40	50–200
Իրանական սարահարթ					
Դաշտե Կևիթ	55	600–800	+45	–10	60–100
Դաշտե Լուր	80	200–800	+44	–15	50–100
Ռեզիստան	40	500–1500	+42	–19	50–100
Արաբական թերակղզի և Մերձավոր Արևելք					
Ռուբ–էլ–Իսալի	60	100–500	+47	–5	25–100
Մեծ Նեֆուդ	80	600–1000	+54	–6	50–100
Դեհնա	54	450	+45	–7	50–100
Սիրիական անապատ	101	500–800	+47	–11	100–150
Հյուսիսային Աֆրիկա					
Սահարա	7000	200–500	+59	–5	25–200
Լիբիական անապատ	1934	100–500	+58	–4	25–100

Նորիական անապատ	1240	350-1000	+53	-2	25
Հարավային Աֆրիկա					
Նամիբ	150	200-1000	+40	-4	2-75
Կալահարի	600	900	+42	-9	100-500
Կառու	120	450-750	+44	-11	100-300
Հնդստան թերակղզի					
Թար	300	350-450	+48	-1	150-500
Թհալ	26	100-200	+49	-2	50-200
Հյուսիսային Ամերիկա					
Մեծ ավազան	1036	100-1200	+41	-14	100-300
Սոնորա	355	900-1000	+44	-4	50-250
Չիուաուա	100	900-1800	+42	-6	75-300
Մոխավե	30	600-1000	+56.7	-6	45-100
Հարավային Ամերիկա					
Ատակամա	90	300-2500	+30	-15	10-50
Պատագոնիա	400	600-800	+40	-21	150-200
Ավստրալիա					
Ավազային մեծ անապատ	360	400-500	+44	+2	125-250
Գիբսոնի անապատ	240	300-500	+47	0	200-250
Վիկտորիա մեծ անապատ	350	200-700	+50	-3	125-250
Սիմպսոնի անապատ	300	0-200	+48	-6	100-150

Հավելված 2

**Սև, գունավոր և հազվագյուտ մետաղների պաշարները, արդյունահանումն
(արտադրությունը) ու սպառումն աշխարհում և Ռուսաստանում**

Հանքաքարեր և մետաղներ	Ամբողջ աշխարհում	Զարգացած երկրներ		Զարգացող երկրներ		Ռուսաստան	
		Քանակը	Բաժինը աշխարհում (%)	Քանակը	Բաժինը աշխարհում (%)	Քանակը	Բաժինը աշխարհում (%)
Ապրանքային երկաթի հանքաքար (մլն տ)							
Պաշարները	213647	60571	28,3	45907	21,5	56820	26,6
Արտադրությունը	1053	341	32,4	316	30,0	70	6,6
Սպառումը	1036	395	38,1	171,6	16,5	61	5,9
Մանգանի հանքաքար (մլն տ)							
Պաշարները	5398,0	1251,0	23,2	761,0	14,1	148,0	2,7
Արտադրությունը	23,9	5,9	24,7	6,8	28,4	0,5	2,0
Սպառումը	23,0	7,0	30,4	5,0	21,7	1,5	6,5
Քրոմիտի հանքաքար (մլն տ)							
Պաշարները	4528,0	3852,0	85,0	337,0	7,4	5,10	0,1
Արտադրությունը	12,7	6,4	50,4	4,0	31,5	0,08	0,6
Սպառումը	11,9	6,8	57,1	2,1	17,6	0,46	3,8
Ալյումին (մլն տ)							
Արտադրությունը	21,9	12,1	54,0	4,60	21,0	2,90	13,2
Սպառումը	21,4	15,6	72,7	2,95	13,8	0,24	1,1
Նիկել (հազ. տ)							
Արտադրությունը	1090	370	33,9	340	31,2	229	22,9
Սպառումը	1010	820	81,2	120	11,9	27	2,6
Պղինձ (հազ. տ)							
Արտադրությունը	115 00	3550	30,4	5990	51,3	601	5,2
Սպառումը	12 900	7690	59,6	2300	18,0	176	1,4

Յինկ (հազ. տ)							
Արտադրությունը	7320	3390	46,3	2060	28,1	175	2,4
Սպառումը	7431	4850	65,3	1500	20,2	105	1,4
Կապար (հազ. տ)							
Արտադրությունը	2980	1440	48,3	650	21,8	26	0,9
Սպառումը	5960	4140	69,5	1050	17,6	103	1,7
Մոլիբդեն (հազ. տ)							
Արտադրությունը	128,7	65,0	50,5	28,0	21,7	3,6	2,8
Սպառումը	103,1	92,3	89,5	2,5	2,4	0,6	0,6
Անագ (հազ. տ)							
Արտադրությունը	210	16	7,6	124	59,0	3,2	3,4
Սպառումը	226	133	58,8	51	22,5	4,6	2,0

Աշխարհի տարածաշրջանների էկոլոգիական կարևոր հիմնականությունները

Տարածաշրջան	Հատկանշանքներ	Մեծագույն խնդիրներ	Մեծագույն ռիսկեր	Մեծագույն հնարավորություններ	Մեծագույն խնդիրներ	Մեծագույն ռիսկեր	Մեծագույն հնարավորություններ
Եվրոպա	<ul style="list-style-type: none"> • հողերի օգտագործում • հողերի վատթարացում, դրանց պահպանում և աղտոտում • հողերի էրոզիա 	<ul style="list-style-type: none"> • բնական անտառների կորուստ • անտառների վատթարացում • կայուն անտառային տնտեսություն 	<ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսությունը և անտառային տնտեսության գենետիկորեն վերափոխված օրգանիզմներ 	<ul style="list-style-type: none"> • ջրային ռեսուրսների վնասում և հողի քանակության նվազում • օրենսդրական բացակայություն • Գյուղատնտեսության և անտառային տնտեսության միջև կապի թափանցիկություն 	<ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսության և անտառային տնտեսության միջև կապի թափանցիկություն • Գյուղատնտեսության և անտառային տնտեսության միջև կապի թափանցիկություն 	<ul style="list-style-type: none"> • փոխադրված և շրջանային էրոզիա • Զարգացող տնտեսություններ • Ժին վթարներ 	<ul style="list-style-type: none"> • օրենսդրական և արտադրատեղիների միջև կապի թափանցիկություն • Կառավարման փոփոխություններ
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	<ul style="list-style-type: none"> • հողերի վատթարացում • մասնավոր հողատիրություն 	<ul style="list-style-type: none"> • անտառագույրկ • անտառների վատթարացում 	<ul style="list-style-type: none"> • տարածման շրջանների կորուստ և վատթարացում • ռեսուրսների անխնայ օգտագործում և անլեգալ առևտուր 	<ul style="list-style-type: none"> • մեկ շնչի հաշվով մատչելի ջրային ռեսուրսների ծավալի նվազում • ջրերի որակի վնասում 	<ul style="list-style-type: none"> • անտառագույրկ • անտառների վատթարացում • մասնավոր հողատիրություն 	<ul style="list-style-type: none"> • Երաշտներ • փոխադրված և շրջանային էրոզիա • Զարգացող տնտեսություններ • Ժին վթարներ 	<ul style="list-style-type: none"> • կառավարման փոփոխություններ • Ջրամատակարարում և կառավարման կենտրոնի օրենսդրական և արտադրատեղիների միջև կապի թափանցիկություն

<p>Հյուսիսային Ամերիկա</p>	<ul style="list-style-type: none"> • հողերի վատթարացում • թունաքիմիկատներ 	<ul style="list-style-type: none"> • անտառների «առողջություն» • հասուն անտառներ 	<ul style="list-style-type: none"> • տարածման շրջանների ավերում և վատթարացում • տեսակների վարակում 	<ul style="list-style-type: none"> • ստորերկրյա ջրեր • Մեծ լճերի ջրի որակ 	<ul style="list-style-type: none"> • դյուրաբեկ էկոհամակարգերի օտարացում • ծովային ռեսուրսների անխնայ օգտագործում • աղտոտում 	<ul style="list-style-type: none"> • օզոնային շերտի հյուծում • ջերմոցային գազեր և կլիմայի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • քաղաքների աճ • էկոլոգիական հետևանքներ 	<ul style="list-style-type: none"> • ջրհեղեղներ և կլիմայի փոփոխություն • անտառային հրդեհներ
<p>Աֆրիկա</p>	<ul style="list-style-type: none"> • վատթարացում և անապատացում • անիրավահավասար և ոչ արդյունավետ երկրագործություն 	<ul style="list-style-type: none"> • անտառազրկում • անտառների որակի նվազում 	<ul style="list-style-type: none"> • տարածման կորուստ և վատթարացում • վայրի բնության օբյեկտների անտուր 	<ul style="list-style-type: none"> • ջրային պաշարների ոչ մշտակալություն • ջրի դեֆիցիտ • ջրանատակարարման և կոյուղիների ապահովվածություն • ջրի որակի վատացում • ջրաճահային տաճիկների բաժանում 	<ul style="list-style-type: none"> • ակերի երգիչ և վատթարացում • աղտոտում • կլիմայի փոփոխություն և օվկիանոսի մակարդակի բարձրացում 	<ul style="list-style-type: none"> • օդի որակ • կլիմայի փոփոխականություն և խոցելիություն • կլիմայի փոփոխականության հետ կապված 	<ul style="list-style-type: none"> • ուրբանիզացիայի արագ աճ • ջրանատակարարում և կոյուղիներ • օդային ավազանի աղտոտում 	<ul style="list-style-type: none"> • երաշտներ • ջրհեղեղներ • զինված հակամարտություններ

<p>Ասիա-խաղաղ-օվկիանոսյան տարածաշրջան</p>	<ul style="list-style-type: none"> • հողերի վատթարացում • անապատացում • հողերի օգտագործման կառուցվածքի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • անտառների վատթարացում • անտառազրկում 	<ul style="list-style-type: none"> • տարածման շրջանների կորուստ • օտարածին տեսակների վարակում 	<ul style="list-style-type: none"> • ջրի պակաս • աղտոտում 	<ul style="list-style-type: none"> • ծովային և առափնյա ռեսուրսների վատթարացում • ափամերձ շրջանների արդյունաբերական և քաղաքացիական կառուցապատման հետևանքով աղտոտում 	<ul style="list-style-type: none"> • օդի որակ • օգրնային շերտի քայքայում • ջերմոցային գազերի արտանետում և կլիմայի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • օդային ավազանի աղտոտում • թափոնների հավաքում և հեռացման կազմակերպում • ջրամատակարարում և կոյուղի 	<ul style="list-style-type: none"> • ջրհեղեղներ • երաշտներ • հրաբուխների ժայթքում • երկրաշարժեր
<p>Արևմտյան Ասիա</p>	<ul style="list-style-type: none"> • հողերի վատթարացում • արտադարյան վատթարացում 	<ul style="list-style-type: none"> • անտառների վատթարացում • անխնայող օգտագործում • կայուն անտառային տնտեսություն 	<ul style="list-style-type: none"> • տարածման շրջանների կորուստ և վատթարացում • տեսակների չափից ավելի օգտագործում 	<ul style="list-style-type: none"> • ջրի պահանջարկի ավելացում • ստորերկրյա ջրերի չափից ավելի օգտագործում • ջրերի որակ 	<ul style="list-style-type: none"> • ափամերձ շրջանների կառուցապատում և ուրբանիզացում • ռեսուրսների չափից ավելի օգտագործում • ծովային աղտոտում 	<ul style="list-style-type: none"> • օդի աղտոտում • օգրնային շերտի քայքայում • կլիմայի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • հողերի օտարացում • կոշտ թափուկներ 	<ul style="list-style-type: none"> • երաշտներ • նավթի արտահոսքեր • գիներաբանական արտահոսքեր
<p>Բնաշային շրջաններ</p>	<ul style="list-style-type: none"> • վատթարացում, երոզիա • կլիմայի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • բորենալ անտառների հիմնականները • սպառնալիք անտառատուներում 	<ul style="list-style-type: none"> • կլիմայի փոփոխություն • օգրնային շերտի հյուսում • չափից ավելի օգտագործում 	<ul style="list-style-type: none"> • աղտոտում 	<ul style="list-style-type: none"> • ձկնային պաշարների չափից ավելի օգտագործում • աղտոտում • կլիմայի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • օգրնային շերտի հյուսում • մթնոլորտի տրանսպորտային աղտոտում • կլիմայի փոփոխություն 	<ul style="list-style-type: none"> • կոյուղի և թափուկներ 	<ul style="list-style-type: none"> • հեղեղումներ • նավթի արտահոսքեր

Հավելված 4

**Աշխարհի խոշորագույն 10 երկրներն՝ ըստ բնակչության թվի
(2015 թ., 2025 թ.*, 2050 թ.*)**

	Երկիրը	Բնակչության թիվը 2015 թ. (մլրդ մարդ)	Երկիրը	Բնակչության թիվը 2025 թ. (մլրդ մարդ)	Երկիրը	Բնակչության թիվը 2050 թ. (մլրդ մարդ)
1	Չինաստան	1376	Չինաստան	1476	Հնդկաստան	1614
2	Հնդկաստան	1311	Հնդկաստան	1445	Չինաստան	1417
3	ԱՄՆ	322	ԱՄՆ	358	ԱՄՆ	404
4	Ինդոնեզիա	258	Ինդոնեզիա	272	Պակիստան	335
5	Բրազիլիա	207	Պակիստան	246	Ինդոնեզիա	290
6	Պակիստան	189	Բրազիլիա	212	Նիգերիա	289
7	Նիգերիա	182	Նիգերիա	207	Բանգլադեշ	223
8	Բանգլադեշ	161	Բանգլադեշ	195	Բրազիլիա	219
9	Ռուսաստան	143	Ռուսաստան	133	Եթովպիա	174
10	Մեքսիկա	127	Մեքսիկա	129	Կոնգո	148

* Ըստ կանխատեսումների

Հավելված 5

Աշխարհի երկրների խմբերն ըստ ՄՋՀ-ի հիմնական ցուցանիշների (2008 թ.)

Երկրներ	Մարդկային զարգացման համաթիվը	Սպասվող կյանքի միջին տևողությունը	Կրթության միջին տևո- ղությունը	Համախառն ազ- գային արդյուն- քը (ՀԱԱ) մեկ բնակչի հաշվով (ԱՄՆ դոլար)
Ամբողջ աշխարհը	0,624	69,3	7,4	10 631
ՄՋՀ շատ բարձր ցու- ցանիշներ ունեցող երկրներ	0,878	80,3	11,3	33257
ՄՋՀ բարձր ցուցանիշ- ներ ունեցող երկրներ	0,717	72,6	8,3	12 286
ՄՋՀ միջին ցուցանիշ- ներ ունեցող երկրներ	0,592	69,3	6,3	5134
ՄՋՀ ցածր ցուցանիշ- ներ ունեցող երկրներ	0,393	56,0	4,1	1490
Առավել թույլ զարգա- ցած երկրներ, այդ թվում՝	0,386	57,7	3,7	1393
Աֆղանստան	0,349	44,6	3,3	1419
Գվինեա	0,340	58,9	1,6	953
Եթովպիա	0,328	56,1	1,5	992
Սիեռա Լեոնե	0,317	48,2	2,9	809
Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն	0,315	47,7	3,5	758
Մալի	0,309	49,2	1,4	1171
Բուրկինա Ֆասո	0,305	53,7	1,3	1215
Լիբերիա	0,300	59,1	3,9	320
Չադ	0,295	49,2	1,5	1067
Գվինեա-Բիսաու	0,289	48,6	2,3	518
Սոգամբիլ	0,284	48,4	1,2	854
Բուրունդի	0,282	51,4	2,7	402
Նիգեր	0,261	52,5	1,4	675
Կոնգոյի Դեմոկր. Հանր.	0,239	48,0	3,8	291
Զիմբաբվե	0,140	47,0	7,2	176

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները	3
§ 1. Ինքնատիպ տարածաշրջաններ	3
§ 2. Ուրբանիզացված տարածաշրջաններ	9
§ 3. Տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններ և երկրներ	18
§ 4. Լեռնային տարածաշրջանների ու երկրների զարգացման բնատնտեսական առանձնահատկությունները	25
§ 5. Չորային (արիդ) ագրարային տարածաշրջաններ	31
§ 6. Արևմտյան Եվրոպայի քաղաքական և տնտեսական միասնացման գործընթացները	37
§ 7. Ռուսաստանի Դաշնությունը որպես բնառեսուրսային մեծ ներուժ ունեցող պետություն	45
§ 8. ԱՄՆ-ը որպես համաշխարհային կարևոր քաղաքական և տնտեսական դերակատարում ունեցող երկիր	51
Թեմա 2. Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները	61
§ 1. Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունները	61
§ 2. Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրը	67
§ 3. Բնապահպանական համամոլորակային հիմնախնդիրը	74
§ 4. Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը	80
§ 5. Պարենային համամոլորակային հիմնախնդիրը	85
§ 6. Թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման հիմնախնդիրը	94
§ 7. Տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը	100
§ 8. Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը	108
Հավելվածներ	118

Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ա. ՊՈՏՈՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝	Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝	Անահիտ Պետրոսյանի
Շապիկի համակարգչային ձևավորումը՝	Արևիկ Հակոբյանի
Վերստուգող սրբագրիչ՝	Սերժ Մելքունյան

Տպագրությունը օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «Ասպետ»
Ծավալը՝ 8 տպ. մանուկ, 10,32 պայմ. մանուկ, 42 հրատ. մանուկ
Տպարանակը՝ 15136: Պատվեր՝ 03/Հ-17

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Քարտեզները՝ «Զանգակ» հրատարակչության արխիվ

Շապիկին օգրագործված նկարներ (հասպտումներ)՝ ն – ներքև, վ – վերև, կ – կենտրոն, ա – աջ, ձ – ձախ
Շապիկի 1–ին էջին՝ © Նյու Յորք/Էմին Մկրտչյան (կ, վ), © iStockphoto.com/Alexander Kosev (ն, ձ)
© Լոնդոն/Էմին Մկրտչյան (ն, կ), © iStockphoto.com/Phoocy (ն, ա)
Շապիկի 4–րդ էջին՝ © Լոնդոն/Էմին Մկրտչյան

Օգրագործված նկարներ

էջ 7՝ © iStockphoto.com/Savushkin, էջ 11՝ © iStockphoto.com/galanter, էջ 21՝ © iStockphoto.com/Oksana Perkins, էջ 26՝ © Հովհաննես Զաքարյան, էջ 30՝ © iStockphoto.com/Vernon Wiley, էջ 39՝ © iStockphoto.com/Franky De Meyer, էջ 45՝ © iStockphoto.com/Georgiy Shpade, էջ 110՝ © iStockphoto.com/Robert Ellis, էջ 111՝ © iStockphoto.com/Dan Barnes, էջ 112՝ © iStockphoto.com/Lee Rogers:



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

